ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ԳՈՐԾՈՂ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵ՛Ր

ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

կանոնադրությունների, վորոշումների, հրամանների,
հրահանգների ու շրջաբերականների

ՍԻՍՏԵՄԱՏԻԿ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄԻԼԻՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Կազմեց Գ. ՀԱԽՈՒՄՅԱՆ
խմբագրությամբ՝
ՀՍԽՀ Միլիցիայի Գլխավոր Վարչության
Պետ Ա. ԴՈՒԼԳԱՐՅԱՆ

351.74
2-16

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՍԽՀ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ—1933

351.74 / Հ-16
MAR 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ԳՈՐԾՈՂ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կանոնադրությունների, վորոշումների, հրամանների, հրահանգների ու շրջաբերականների

ՍԻՍՏԵՄԱՏԻԿ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՄԻԼԻՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Կազմեց Գ. ՀԱԽՈՒՄՅԱՆ
խմբագրությամբ՝
ՀՍԽՀ Միլիցիայի Գլխավոր Վարչության
Պետ Ա. ԳՈՒԼԳԱՐՅԱՆԻ

35170
886

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՍԽՀ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ—1933

29 MAY 2013

39.379

Պետհրատի տպարան

Սրբագրեց՝ Վ. Խաչատրյան

վլիտ 9078 Պատվեր 972 Տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 17 ապրիլի 1938 թ.
Ստորագրված է տպագրելու 17 հունիսի 1938 թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Վաղուց արդեն կարիք էր զգացվում ամփոփել մի ժողովածուի մեջ Խորհրդային Հայաստանում գործող կարևորագույն օրենքներն ու կարգադրությունները, վորոնք վերաբերվում են ԲԳ Միլիցիային և չեն կրում գաղտնի բնույթ: Այդ տեսակ ժողովածուն գործնական նշանակություն ունի թե՛ միլիցիական հիմնարկների և թե՛ միլիցիայի առանձին աշխատակիցների համար, դյուրություն տալով նրանց իրենց ձեռքի տակ ունենալ բոլոր նյութերն՝ ի մի հավաքած անմիջորեն ոգտվելու համար:

Ներկայումս լույս ենք ընծայում այդ ժողովածուի առաջին գիրքը, ուր ամփոփված են սիստեմատիկ կարգով ԲԳ Միլիցիայի կազմակերպության վերաբերյալ օրենսդրական ակտերը, այսինքն այն բոլոր հարցերը, վորոնք վերաբերվում են Միլիցիայի կենտրոնական ու տեղական մարմիններին, կառուցվածքին և միլիցիայի օժանդակ մարմիններին:

Յուրաքանչյուր գլխում վորոշ հարցի վերաբերյալ համապատասխան կարգադրությունները դասավորված են նրանց հրատարակման ժամանակագրական կարգով, բացառությամբ այն կարգադրությունների, վորոնք հրատարակված են՝ ի լրումն և ի բացատրություն առաջները հրատարակված իրենց բովանդակությամբ նման կարգադրությունների:

Վորպեսզի դյուրին և արագ կարելի լինի գտնել անհրաժեշտ տեղեկություններն ընթերցողին հետաքրքրող հարցերի մասին, հավաքածուի վերջը կցվում է մանրամասն այբբենական—առարկայական ցանկ:

ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆԵՐԸ

Անցյալ տարի լրացավ տասնհինգամյակը ԽՍՀՄ Բանվորա-գյուղացիական Միլիցիայի, որը ծնունդ առավ Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխության հաղթական օրերին։

Ցերկարատև ժամանակամիջոց չեն ներկայացնում այդ անցած տասն և հինգ տարիները, մի այնպիսի հիմնարկության համար, ինչպիսին է ԲԳ Միլիցիան, սակայն նրանք շատ բան են ասում, նրանք հարուստ բովանդակություն են պարունակում անդուլ, բազմակողմանի գործունեությամբ։ Այդ ժամանակամիջոցը մի կենդանի, վառ պատմություն է, որի կարմիր էջերը կերտել ենք ամեհի պայքարի անընդհատ յելևէջներում մենք, բոլորս, բովանդակ միլիցիայի աշխատակիցներս, Լենինյան դրոշի տակ, կոմունիստական կուսակցության աչալուրջ ղեկավարությամբ. դա մի պատմություն է, որով այսօր ամենայն իրավամբ կարող է պարծենալ հեղափոխական պրոլետարիատն իր սոցիալիստական շինարարության էնտուզիազմով լի աշխատանքներում, որտեղ ԲԳ Միլիցիան միշտ գգոն կանգնած է յեղել որպես պրոլետարական դիկտատուրայի առաջին պահակը և պաշտպանել հեղափոխական կարգն ու հասարակական անվտանգությունը։

Ցերբ մենք հետադարձ հայացք ենք գցում անցյալ տասնհինգ տարիների վրա, որոնք ակներև վկայում են, թե ինչպես սոցիալիզմի կառուցմամբ ոգևորված բանվորներն ու աշխատավոր գյուղացիները կռում-կոփում են իրենց խորհրդային իշխանության պատվանդանները, իրենց սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունը ներքին ու արտաքին, գաղտնի ու հայտնի թշնամիներից և ճանապարհ հարթում դեպի անդասա-

կարգ կոմունիստական հասարակակարգը, օգտվելով ԲԳ Միլիցիայի վորպես պրոլետարական դիկտատուրայի մի հզոր գործիքով, վորպես զինված ուժով, վոր կանգնած ե Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների աչալուրջ պաշտպանի դիրքում և միշտ պատրաստ ե իր հատու զենքով անխնա վոչնչացնել բանվոր դասակարգի թշնամիներին, կտեսնենք վոր ԲԳ Միլիցիան այնտեղ պատվավոր ու կարևոր դեր ե ունեցել, իբրև մի օրգան պրոլետարական դիկտատուրայի:

Բայց յերբ այդ անցած տաս-տասնհինգ տարիների վրայով մեր հայացքներն ուղղում ենք դեպի այն ժամանակները, վորոնք նախկին ցարական լայնածավալ Ռուսաստանը բուրժուական-կապիտալիստական անցյալն են ներկայացնում իր բնորոշ բռնապետությամբ և կալվածատիրական ու կապիտալիստական անխնա շահագործումով, կտեսնենք այնտեղ միանգամայն հակառակ պատկեր, կհանդիպենք մեր միլիցիայի հակոտնյային՝ վոստիկանությանը (պոլիցիային), վոր դարեր շարունակ իր զենքն ու յեռանդն ուղղել ե աշխատավոր մասսաների դեմ:

Վոստիկանությունը կործանված ցարական բռնակալության Ռուսաստանում, ինչպես և այժմյան կապիտալիստական-բուրժուական պետություններում, յեղել ե մի հզոր զենք տիրապետող դասակարգերի ձեռքին, նա հանդիսանում եր ներքին կառավարչության մարմին և ստիպողական ապարատ: Նախկին վոստիկանության դերը կայանում եր վոչ միայն նրանում, վոր նա պաշտպանում եր տիրող կապիտալիստական-բուրժուական և աշխատավորներին անխնա շահագործող հասարակակարգը, այլ և զբաղվում եր տնտեսական և կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում իր տնօրինությամբ ու կարգադրություններով: Վոստիկանությունը միջամուխ եր լինում բժշկա-սանիտարական գործին, ժողովրդական լուսավորության հարցերին, խառնվում եր ճանապարհների շինարարության, վարկային հիմնարկների, առևտրի և այլ գործերին: Այդ բավական չեր, նա նույնիսկ միջամուխ եր լինում կենցաղային հարցերին, տնօրինում քաղաքացիների ընտանեկան, անձնական ու հասարակական կյանքը, կարգադրում աշխատանքին վերաբերյալ հարցերն և այլն, և այլն:

Վոստիկանական այդ ամբողջ տնօրինական ու կարգադրական գործունեությունն անհրաժեշտ եր տիրապետող շահագործող դասակարգին, վորպեսզի վարչական միջամտության այդ յեղանակով յուրաքանչյուր բանվորի և գյուղացու հասարակական ու անձնական կյանքը ղեկավարի և ուղղի տիրապետող դասակարգի օգտին և հլու հնազանդ դարձնի նրա շահերին: Նպատակ ունենալով ճնշել ու զսպել կալվածատերերի ու կապիտալիստների ձեռքով անխնա կեղեքվող բանվորներին և գյուղացիներին, վոստիկանությունը, անշուշտ, այդ կապիտալիստների ու կալվածատերերի հլու կամակատարն եր և դասակարգայնորեն կազմակերպված մի ուժ եր, վոր միշտ պատրաստ եր զենքը ձեռքին պաշտպանել բուրժուական-կապիտալիստական հասարակակարգը, պահպանել շահագործողների անվտանգությունը, բողոքող ու դիմադրավող կեղեքվողներից: Ուստի վոստիկանությունը վոխերիմ թշնամի յեր բանվորներին և աշխատավոր գյուղացիներին․ Նա անխնա ճնշում եր ամեն մի բանվորական դիմադրություն և բողոք, վոր արտահայտվում եր հեղափոխական շարժումներով, գործադուլներով և մասսայական յելույթներով․ Նա հալածում, բանտարկում եր բոլորին, վորոնք խիզախում եյին ըմբոստանալ, անհնազանդ լինել և կռվել բուրժուական-կապիտալիստական իշխանության դեմ: Բավական ե հիշել 1905 թ․ հեղափոխության և 1917 թ․ փետրվարյան հեղափոխության դեպքերը, վորպեսզի համոզվենք, թե ինչպիսի կույր հնազանդությամբ և արյունառուշտ բնազդներով այդ վոստիկանությունը ծառայում եր տիրապետող դասակարգերին: Առանձնապես չեշտակի ե աչքի ընկնում վոստիկանության դասակարգային դեմքը 1917 թ․ փետրվարյան հեղափոխության մոմենտներին, յերբ կանոնավոր զինվորական մասերը հրաժարվում եյին կրակել հեղափոխական բան-

վորական մասսաների վրա և նույնիսկ անցնում եյին նրանց կողմը, իսկ վոստիկաններն, ընդհակառակն առիթ չեյին փախցնում, վորպեսզի դաժանորեն վոչընչացնեյին և հրացանազարկ անեյին հեղափոխականներին։

Սակայն վոստիկանությունն անկարող յեղավ փրկելու և պաշտպանելու ցարական բռնակալությունը։ Հեղափոխական կռռ ալիքների հարվածներից դահավիժվեց ցարիզմը և սրա հետ վոստիկանությունը, բայց հեղափոխական, աշխատավորական, մասսաների արյունով ձեռք բերված ազատությունը կարողացավ ոգտագործել բուրժուազիան, վոր իր ձեռքն առավ նոր կառավարական ղեկը և հին վոստիկանության փոխարեն կազմակերպեց միլիցիա։ Այդ նորաստեղծ միլիցիան, վոր գոյություն ունեցավ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունն եականապես շատ չեր տարբերվում նախկին վոստիկանությունից, թեև կազմված եր նոր տարրերով։ Նրա գլխապետական կազմը բաղկանում եր նույն բուրժուական տարրերից կամ նրանց սպասարկողներից, այն է՝ զանազան փաստաբաններից, ուսուցիչներից, ուսանողներից և գործող բանակի զինվորական կադրերից, վորոնք պաշտպանում եյին ժամանակավոր կառավարությունը, վոր բացառապես բաղկացած եր կալվածատերերից, խոշոր կապիտալիստներից, Ֆինանսիստներից և բուրժուական գաղափարախոսությամբ տոգորված ինտելիգենտներից։ Այդ միլիցիան, թեև ծնունդ եր առել հեղափոխության բովում և իր շարքային մասերում կազմված եր թերևս աշխատավորական տարրերից, չեր ներկայացնում բանվորա-գյուղացիական դասակարգային-զուտ մարմին, քանի վոր նրա անդամները չեյին գիտակցում պրոլետարական շահերն ու շարունակում եյին պաշտպանել նոր բուրժուական կառավարությունը և նրա իմպերիալիստական քաղաքականությունը, չդադարող համաշխարհային պատերազմում։ Այդ միլիցիայի միջոցով եր Կերենսկու կառավարությունը հետապնդում և հալածում կոմունիստական շարժումը, բոլշևիկյան կազմակերպությունները նրան դարձնելով մի հակահեղափոխական զենք դլուխ բարձրացնող պրոլետարիատի դեմ։

Բայց վրա հասավ Հոկտեմբերյան Հեղափոխությունը Լենինի ղեկավարությամբ և ասպարեզից դուրս վանեց տապալված բուրժուական կառավարության գործիք հանդիսացող այդ միլիցիային։

1917 թ. Հոկտեմբերյան Հեղափոխության հենց առաջին որերից հեղափոխական ընդվզումների, արյունահեղ կռիվների ժխոռում ծնվեց այսորվա Բանվորա-գյուղացիական Միլիցիան։ Նա կազմակերպվեց բանվորական մասսաների ծոցում, գործարաններում և արհեստանոցներում, բանվորական զինված խմբերից, վորոնք կոչված եյին խորհրդային իշխանության գոյացման առաջին որերին պահպանելու հեղափոխական ներքին կարգն ու հասարակական անվտանգությունը։ Այդ բանվորական զինյալ խմբերը շուտով հարկադրված յեղան տեղափոխվելու արտաքին ռազմաճակատները և թողին միլիցիայում աշխատակիցների միայն հիմնական կադրը, վորի շուրջը սկսեց կազմակերպվել միլիցիան։

ԲԳ Միլիցիայի այդ կազմակերպման պրոցեսում մենք տեսնում ենք իրականացված այն գաղափարները, վոր արծարծել եր Լենինը «Պրոլետարական միլիցիա»-յի մասին հոդվածում („Правда" 1917թ., № 36) և վորտեղ նա հետևյալ կոչն եր ուղղում պրոլետարիատին. (Ընկերներ-բանվորներ, համոզեցեք գյուղացիներին և ամբողջ ժողովրդին, վոր անհրաժեշտ է ստեղծել ընդհանուր միլիցիա, վոստիկանության և հին չինովնիկության փոխարեն։ Կազմակերպեցեք այդպիսի և միայն այդպիսի միլիցիա։ Կազմեցեք այդ միլիցիան բանվորական պատգամավորների խորհուրդների, գյուղացիական պատգամավորների խորհուրդների միջոցով, տեղական այն ինքնավարությունների միջոցով, վորոնք բանվորների ձեռքին են։ Բնավ մի բավարարվեք բուրժուական միլիցիայով»։ Լենինն անհրաժեշտ եր գտնում տակավին Հոկտեմբերյան Հեղափոխության նախորյակին ժողովրդի ընդհանուր զինումը, զինավարժության յուրացումը, վորպեսզի նա

մոնի միլիցիայի շարքերը, վորը միաժամանակ փոխարինելու եր և նախկին վոստիկանությանը, և թե մշտական զինվորական բանակին: Բանվորներին անհրաժեշտ ե, վորպեսզի ժողովրդից կտրված ու խզված զորաբանակ չլինի, վորպեսզի բանվորներն ու զինվորները միաձուլվեն միասնական համաժողովրդական միլիցիայի մեջ: Լենինը, կոչ անելով բանվորներին և գյուղացիներին մեկ ընդհանուր միլիցիա կազմակերպելու մասին, հետապնդում եր հիմնականում յերկու նպատակ: Առաջին նպատակն այն եր, վոր պրոլետարիատը զինվեր առաջիկա կռիվների համար՝ ընդդեմ կապիտալիստների, իսկ յերկրորդ նպատակը կայանում եր նրանում, վոր կործաներ հին ստիպողական ապարատը (վոստիկանությունը) և այն փոխարիներ աշխատավորների մասսայական մասնակցությամբ կառավարչության մեջ: Այսպիսով Լենինն անհրաժեշտ եր գտնում ունենալ բանվորների սեփական դասակարգային միլիցիա, վորը կոչված եր ճնշելու շահագործող դասակարգին ու պաշտպանելու շահագործվող դասակարգերը:

Յեվ ահա Լենինի հանճարեղ այդ գաղափարի ուղղությամբ ել կազմակերպվեց ու զարգացավ Բանվորա-գյուղացիական Միլիցիան: ԲԳ Միլիցիան կազմակերպվում եր կամավոր կերպով, նրա շարքերը մտնող բանվորներից և գյուղացիներից: Չնայած, վոր միլիցիայի մեջ, վորպես ընդհանուր ժողովրդական զինված մի մասսայի, գոյություն ունեյին զանազան կազմակերպչական ձևեր, ինչպես որինակ՝ միլիցիան իր իսկական առումով, կարմիր գվարդիա, բանվորական պաշտպանություն, Կարմիր բանակ և այլն, այնուհանդերձ նրա դասակարգային եյությունը և ռազմական գործի ընդհանուր յուրացումը բանվոր դասակարգի կողմից և սրա զինումն անշուշտ իրականացվել եր: Նմանապես իրագործվել եր Լենինի այն գաղափարը, վոր միլիցիայի միջոցով աշխատավորները ներգրավվում եյին անմիջորեն մասնակցելու պետական գործերի կառավարման մեջ:

Գրավելով իշխանությունը, պրոլետարիատը պետք ե ամրացներ իր իշխանությունը և կազմակերպեր նրա պաշտպանության համար մշտական զինված ուժ, թե՛ արտաքին թշնամիների՝ ոտար իմպերիալիստների հարձակումների դեմ և թե՛ ներքին թշնամիների՝ կալվածատերերի, կապիտալիստների և այլ հակահեղափոխական տարրերի դեմ: Ուստի, զինված պրոլետարիատի մի մասը զբաղված եր ռազմաճակատներում, կռվելով սպիտակ-գվարդիականների իմպերիալիստ ինտերվենտների դեմ, իսկ մյուս մասը թողնված եր թիկունքում պաշտպանելու պրոլետարական իշխանությունը՝ հակահեղափոխական տարրերի ապստամբություններից և քրեական տարրերի գործողությունից: Այս պայմաններում զինված պրոլետարիատի աշխատանքի այդ որինակ բաժանումով գոյացան Կարմիր Բանակը և ԲԳ Միլիցիան, իբրև յերկու առանձին մարմիններ:

Իհարկե կազմակերպչական այդ առաջին շրջանում Կարմիր Բանակի և ԲԳ Միլիցիայի գործողությունները այնքան ել չեշտակի չեյին տարբերվում իրարից: Շատ անգամ մոմենտը պահանջում եր, վոր ԲԳ Միլիցիան յուր ուժերը նետեր Կարմիր Բանակի ոգնությանը և նրա կողքին կռվեր քաղաքացիական պատերազմների ճակատներում կամ իմպերիալիստ ինտերվենտներին վանելու պայքարում, մեկ ընդհանուր զինվորական հրամանատարության ներքո:

Բայց հետագայում յերբ Կարմիր բանակը հետզհետե ուժեղացավ և ըստ ամենայնի կազմակերպվեց, ԲԳ Միլիցիան ստանում ե թիկունքային զինված ուժի նշանակություն, վորի նպատակն ե պաշտպանել հեղափոխական կարգն ու անվտանգությունը, ինչպես և հանդիսանար հարկադրման (ստիպման) ապարատ, վոր իրականացնում ե կյանքում խորհրդային իշխանության որենքներն ու կարգադրությունները:

Սակայն մեր միլիցայի այդ հարկադրման միջոցների սկզբունքը չպետք ե նույնացնենք այն հարկադրական ֆունկցիաներին, վոր ուներ նախկին վոստիկանությունը և վորի բնութագիրը տվեցինք վերը:

ԲԳ Միլիցիայի ստիպողական միջոցառումների սկզբունքը ուղղված է պրոլետարական շահերը պաշտպանելու ընդդեմ շահագործող-կապիտալիստ տարրերի, վորոնք տակավին՝ շարունակում են փորձեր անել իրենց տապալված դիրքերը վերագրավելու:

Խորհրդային սիստեմը հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրա, վորը հենվելով գյուղացիական մասսաների վրա և դաշնակցելով միջակ գյուղացիության հետ, քայլ առ քայլ արմատախիլ է անում կապիտալիզմի վերջին մնացորդները: Բայց քանի վոր բոլոր շահագործողները, թե՛ քաղաքում և թե՛ գյուղում, առանց դիմադրության չեն զիջում իրենց դիրքերը և չեն էլ զիջի—ակներև է, վոր պրոլետարիատի դիկտատուրան պետք է դիմի ստիպողական միջոցների այդ դիմադրող տարրերին ճնշելու, նրանց դավերն ու վորոգայթները հաղթահարելու համար: Յեվ այդ ներքին կռիվը կուլակների ու այլ հակահեղափոխական տարրերի կողմից շարունակվում է տակավին այսոր էլ, ուր ԲԳ Միլիցիան կանչված է իր միջոցառումներով միշտ արթուն հսկել և պատրաստ լինել՝ ամեն մի րոպե ջախջախելու և իչիք դարձնելու դասակարգային թշնամու բոլոր փորձերը:

Նույն պատմությունն ենք տեսնում Հայաստանի իրականության մեջ:

Նախկին ցարական վոստիկանությունը, վոր բաղկացած եր սև հարյուրակային թափթփուկներից և տեղական ազգությունների ճնշելու վայրենի բնազդներով լցված տարրերից, փետրվարյան հեղափոխության որերին հաջորդեց միլիցիան: Այս միլիցիան միայն անունով եր տարբերվում նախորդ վոստիկանությունից եյականում նա շարունակում եր պահել իր շարքերում մեծ մասամբ նախկին վոստիկանական գլխապետներին ու վարձկան «դարաղավոյներին», վորոնք միշտ պատրաստ եյին պաշտպանելու տիրապետող դասակարգերին և ճնշելու աշխատավորական մասսաներին: Այդ նույն միլիցիան հիմնականում պահպանեց իր կազմակերպչական կառուցվածքն ու դերը նաև դաշնակցության չարաբաստիկ իշխանության ժամանակ, այսպես կոչված «Անկախ Հայաստանի դեմոկրատական հանրապետության» մեջ:

Տարբերությունը միայն այն եր, վոր միլիցիան ազգայնացվել եր և նրա շարքերը բռնել եյին «ազգային» տարրերը, բաղկացած մաուզերիստներից, քյալլագյող ավանտյուրիստներից, կուլակներից, կրփողներից, կաշառակերներից և նման քրեական կասկածելի անձերից: Այդ միլիցիան ապրում եր ուտելու, յուրացնելու, տակով անելու սովորություններով, վորոնք սրբագործվել և քաղաքացիական իրավունք եյին ստացել դաշնակցական միլիցիայում: Քաղաքացիական տարրական իրավահավասարությունն էլ ավելորդ եր վորոնել նրա շարքերում, ուր գռեհիկ, կոպիտ վերաբերմունքը, հասարակության յուրաքանչյուր անդամի ինքնասիրության վոտնահարումը, ծեծն ու հայհոյանքը, գաղտնի սպանությունները, շանտաժը և այլ նման այլանդակությունները՝ սովորական յերևույթներ եյին:

Ահա այդ միլիցիան ժառանգություն մնաց մեզ, յերբ բանվորների և աշխատավոր գյուղացիների ապստամբությամբ տապալվեց հակահեղափոխական կառավարությունը, դուրս քշվեցին յերկրի սահմաններից դաշնակները և Հայաստանը նոյեմբերի 29-ին հայտարարվեց խորհրդային: Մի թշվառ ժառանգություն, վոր մտահոգության առարկա դարձավ Խորհրդային Հայաստանի պրոլետարական իշխանության համար հենց խորհրդայնացման առաջին որերից: Անհրաժեշտ եր լուծարքի յենթարկել այդ ժառանգությունը և ձեռնամուխ լինել Բանվորա-գյուղացիական Միլիցիայի կազմակերպմանը, վոր պաշտպան հանդիսանար Խորհրդային Հայաստանի աշխատավորությանը և նրա նորաստեղծ իշխանությանը:

Խորհրդային Հայաստանի ԲԳ Միլիցիայի կազմակերպման սկիզբը փաստորեն պետք է համարել 1920 թ. դեկտեմբերի 15-ը, յերբ Ներգործժողկոմատի հրամանով հաստատվեց Միլիցիայի Գլխավոր Վարչությունը, վորը

և անցավ աշխատանքի, առաջին նվագ զբաղվելով միլիցիայի կազմակերպման հրատապ հարցով:

Մինչդեռ Ռուսաստանում Կարմիր Միլիցիան, ինչպես վերը տեսանք, կազմակերպվում էր միանգամայն նոր հիմունքներով, օգտագործելով միլիցիայի համար գործող բանվորական զինված խմբերն ու կարմիր գվարդիան, Խորհրդային Հայաստանում ԲԳ Միլիցիան կազմակերպվում է մեզ ժառանգություն մնացած նախկին միլիցիայից: Հարկավոր էր յերկաթե ավելով մաքրել այդ միլիցիան խմբապետներից, մաուզերիստներից և այլ անհարազատ ու քրեական տարրերից ու դարձնել նրան իսկապես պրոլետարական իշխանության համապատասխան մի մարմին. Հարկավոր էր վերադաստիարակել այդ միլիցիան սոցիալիստական հասարակակարգի ու նրա ղեկավար կոմունիստական կուսակցության վոգով. Հարկավոր էր բարձրացնել նրա մտավոր-բարոյական մակարդակը, ներշնչելով նրան կարգապահության ու պատասխանատվության զգացմունքը, բերելով նրան հեղափոխական գիտակցության իրեն առաջադրված պարտականությունների ու ծառայական խնդիրների վերաբերմամբ:

Դա մի դժվար հարց էր, վորը, չնայած մեծ խոչընդոտների, ՀՍԽՀ Միլիցիայի Գլխավոր Վարչությունը կարողացավ իր համառ աշխատանքով հետզհետե իրականացնել: Այդ լուծումը սկզբնական քայլերում բարդանում էր նրանով, վոր Խորհրդային Հայաստանն իր գոյության առաջին տարին ապրում էր քաղաքացիական կռիվների սուր շրջանում: Այն ժամանակ մեր պրոլետարական իշխանության և կոմկուսակցության ուշադրությունն ու հոգսը կենտրոնացած եյին ռազմական ճակատների վրա, ուր վճռվում էր Հայաստանի հեղափոխական բանվոր դասակարգի և աշխատավորության ու նրանց դասակարգային թշնամիների վերջնական կռվի բախտը: Ուստի այն պայմաններում հնարավոր չէր լինում հարկ յեղած ուշադրությունը դարձնել միլիցիայի վրա, վորին վիճակվել էր այդ պատմական րոպեներին թիկունքի պաշտպանի դերը կատարելու,

վորը և կատարեց պատվով, ակտիվ մասնակցություն ցուցաբերելով այդ պայքարում և արմատախիլ անելով Հայաստանի բանվորա-գյուղացիական իշխանության հակահեղափոխական թշնամիներին:

Միլիցիայի վերակազմակերպման ու դաստիարակման աշխատանքները մեծ թափ ու յեռանդ են ստանում արդեն քաղաքացիական պատերազմի ավարտով, յերբ Հայաստանի հաղթական բանվորա-գյուղացիական իշխանությունը ռազմական ճակատից անցնում է յերկրի կուլտուր-տնտեսական ճակատին, յերբ սկսվում է յերկրի վերածնունդի շինարարության շրջանը:

Այս նոր հանգամանքներում խորհրդային իշխանությունը հնարավորություն է ունենում ավելի մեծ չափերով ուշադրություն դարձնել միլիցիայի կենսական կարիքների ու պահանջների վրա, տրամադրել նրան նյութական միջոցներ տնտեսական վիճակն ու աշխատունակությունը բարձրացնելու համար, լրացնել նրա շարքերը համապատասխան աշխատակիցներով: Ձեռնարկվում է միլիցիայի անձնական ամբողջ կազմի հիմնական զտումը, վորի հետևանքով հնարավոր է լինում նրա շարքերից հեռացնել մոտ 30 տոկոս անհարազատ տարրեր և նրանց փոխարինել կուսակցական ու աշխատավորական վստահելի անձերով: Այդ զտումը հետագայում շարունակվում է պարբերաբար և մշտական ամենորյա ըստ անհրաժեշտության միջոցներով, վորով մենք կարողացանք մեր միլիցիան միանգամայն մաքրել բացասական տարրերից և բարձրացնել նրա վորակը: Այդ նպատակով էլ միլիցիայի շարքերը լրացվում են կարմիր բանակից զորացրվածներով, վորոնք բարձրացնում են մեր միլիցիայի մարտունակությունը:

Միլիցիայի հրամանատարական կազմի պատրաստման համար հիմնվում են հատուկ դպրոց և պարբերական կարճատև դասընթացներ, վորոնք տալիս են նրան բանվորներից և գյուղացիներից դուրս յեկած հեղափոխական ու պրոլետարական գիտակցությամբ զինված հրամանատարներ:

1923 թվից սկսվում է տարվել սիստեմատիկ քաղ-

լուս աշխատանք միլիցիայի շարքերում, վերացնելու այրբենական ու քաղաքական անգրագիտությունը, մատակարարելու զինվորական ու վարչական պատրաստություն։

Վերջապես միլիցիայի սոցիալ-տնտեսական դրությունը բարելավելու նպատակով նրա վրա տարածվում են մի շարք արտոնություններ, որոնք միլիցիական աշխատավորներին դնում են համահավասար վիճակում բացառիկ արտոնություններով օժտված կարմիր բանակայինների ու բանվորների հետ. տարածած է չեփության սիստեմը, պետական ապահովագրությունն ու սոցիալական ապահովագրությունը, պրոֆմիութենական ու կոոպերատիվ անդամակցությունը, բնակարանային շինարարությունը, բժշկա-սանիտարական խնամքը, սնունդի բարելավումը հատուկ ճաշարանների ու փակ բաշխիչների միջոցով և այն և այլն։

Շատ երկար կլիներ այստեղ մի առ մի թվել այն բոլոր միջոցառումներն ու ձեռնարկումները, որոնք 12 տարիների ընթացքում անդուլ ջանքերով ու համառ աշխատանքով տարվել են և տարվում են Հայաստանի ԲԳ Միլիցիան դնելու իր կոչման արժանի դիրքում, Միլիցիայի, որի ավագ յեղբոր՝ Խորհրդային Ռուսաստանի կարմիր Միլիցիայի 15-ամյակը տոնեցինք անցյալ տարի։ Այդ հոբելյանի փառավոր անցյալի, հաղթական զարգացման և հսկայական նվաճումների հետ է սերտորեն կապված նաև Հայաստանի ԲԳ Միլիցիայի զարգացման ամբողջ պատմությունը. նվաճումների, որոնք պրոլետարիատի պարծանքն են հանդիսանում սոցիալիստական շինարարության լայնածավալ վերելքում։

Ցեվ այսօր մենք տեսնում ենք խորհրդային իշխանության և կոմկուսակցության թափած ջանքերը միանգամայն հաջողված։ Մենք այսօր ցարական վոստիկանության ու դաշնակցական մաուզերիստական միլիցիայի փոխարեն ունենք բանվորա-գյուղացիական միլիցիայի կուռվի շարքեր, լի հեղափոխական գիտակցությամբ, միշտ մարտական վոգով պատրաստ, կարգապահական զգացմունքով տոգորված, շարքեր, որոնք

աննկուն կանգնած են իրենց դիրքերում, աչալուրջ հսկում են իրենց պոստերից՝ պաշտպանելու հեղափոխական կարգն ու հասարակական անվտանգությունը, ամուր պահելու խորհրդային իշխանությունը և պրոլետարական դիկտատուրան։

Այս հաղթանակների ու հաջողությունների շրջանում, վորոնց ձեռք է բերել ԲԳ Միլիցիան իր տասնհինգամյա աշխատանքների ընթացքում, մենք մեր աչքերը չենք փակում իրականության հանդեպ, գիտակցելով, վոր կան դեռևս թերություններ, բացեր ու բացասական յերևույթներ ԲԳ Միլիցիայի կազմակերպության մեջ։ Սակայն ինչպես մինչև այժմ, այնպես էլ առաջիկայում ԲԳ Միլիցիայի ամբողջ կազմը, սկսած կրտսեր շարքայինից մինչև բարձրագույն գլխապետական միավորը, պետք է ես առավել լարեն իրենց ջանքն ու աշխատանքը՝ վերացնելու այդ բացերն ու թերությունները, արմատախիլ անելու իրենց մարմնից բոլոր բացասական յերևույթները։ Ինքնաքննադատությունը, սոցմրցումն ու հարվածայնությունը, ընկերական փոխադարձ աջակցությունն ու խորհուրդը՝ կլինեն այն հզոր միջոցները, վորոնք հնարավորություն կտան մեր միլիցիայի կազմի անդամներին առաջ տանել իրենց գործը հետագա կատարելագործման ու ավելի մեծ բարելավման հասնելու համար, վերացնելով թերությունների մնացորդները, լրացնելով նկատված ճեղքվածները։

Ահա այդ գիտակցությամբ ու այդ համոզմունքներով մենք թևակոխում ենք սոցիալիստական շինարարության յերկրորդ հնգամյակի նոր նվաճումների, նոր հաղթանակների ուղին, միշտ արդարացնելով Լենինի ավանդած պատգամները կարմիր միլիցիայի մասին, անսայթաք հետևելով կոմկուսակցության ղեկավարությանը, անշեղ կատարելով պրոլետարական իշխանության առաջադրանքներն ու մեզ հանձնած պարտականությունները։

Այն ժամանակ [illegible] ես ավելի չեշտով կհնչի, ավելի վսեմ զգացմունքներ [illegible] այն յերգումը, վոր կարմիր միլիցիոները արտասանում է.

ССР
ИМ. А. МЯСНИКЯН

«Խոստանում եմ Խորհրդային Հայաստանի և ամբողջ աշխարհի աշխատավորության առաջ պահպանել աշխատավորության և բանվորա-գյուղացիական իշխանության գույքը փչացումից, կողոպուտից, անշեղ պահպանել հեղափոխական կարգապահությունը, հեռու մնալ օտար քայլերից և հեռու պահել ուրիշներին։ Առաջին իսկ կոչին՝ դուրս գալ պաշտպանելու մեր հանրապետությունը վարձկան թշնամիներից, հանուն սոցիալիզմի վսեմ գործի, չխնայել վոչ մի ջանք ու ճիգ և նույնիսկ կյանք»։

Ա. ԴՈՒԼԳԱՐՅԱՆ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Պրոլետարական դիկտատուրայի պետությունն իր առանձնահատուկ գծերով հիմնովին տարբերվում է բուրժուական պետական սիստեմներից։

Այդ առանձնահատուկ գծերը բղխում են այն նպատակներից, վորոնց առաջադրել է խորհրդային պետությունը, այն է՝ վերակառուցել հասարակական հարաբերությունները սոցիալիստական հիմքերի վրա և իր այդ շինարարությունը պսակել անդասակարգ հասարակություն ստեղծելով։

Սակայն այդ վերակառուցման գործն ընթանում է դասակարգային սուր կռիվների բեմում։ Անկարելի յե կառուցել սոցիալիզմը, հիմնովին փոխել հասարակական հարաբերություններն առանց ջախջախելու տիրապետող շահագործող դասակարգերը, առանց հարկադրելու, առանց ստիպելու նրանց կատարելու ու իրականացնելու պրոլետարական պետության բոլոր որենքներն ու միջոցառումները։

Ահա այստեղ է հանդես գալիս ԲԳ Միլիցիան իր նշանակությամբ, այստեղ են դրսևորում նրա դերն ու նպատակները։ Իշխանության գլուխը կանգնած պրոլետարիատը յուր միլիցիայի միջոցով հարկադրում է կատարել իր հրատարակած որենքներն ու կարգադրությունները, իր ձեռնարկած միջոցառումները յերկրի բնակչության այն մասին, վորն իր դասակարգային շահերից յելնելով, տրամադիր չէ հոժարակամ այդ ամենը կատարելու։

Ինքնին հասկանալի է, վոր ԲԳ Միլիցիան իր բոլոր գործողությունները, վորոնք ուղղված են հարկադիր կերպով կյանքում կենսագործելու խորհրդային իշխանության որենքներն ու կարգադրությունները, կատա-

րում է համաձայն տեղական խորհրդների կամ գործկոմների ցուցմունքների, համաձայն համապատասխան իշխանությունից բղխող հրահանգների: Ուստի ԲԳ Միլիցիայի գործունեության ձևերի վերաբերյալ գոյություն ունեն ուղեցույց հրահանգներ, մշակված կանոններ, ուր պարզորոշ արծարծվում են, թե ին՞չպես է վարվելու և գործելու միլիցիայի յուրաքանչյուր աշխատավորն անհրաժեշտ դեպքերում, ինպե՞ս և յե՞րբ է կատարելու իր սահմանված պարտականությունները: Իսկ այդ պարտականությունները կայանում են նրանում, վոր ԲԳ Միլիցիան կոչված է կյանքում իրագործելու հեղափոխական որինականության սկզբունքները, պաշտպանելու աշխատավորների շահերը, պաշտպանելու հեղափոխական կարգը, անվտանգությունն ու բարեկարգությունը: Միլիցիայի վրա դրված այդ բոլոր պարտականությունները բաժանվում են յերեք հիմնական խմբերի.

1. Նախազգուշացնել ու կասեցնել հանցագործությունները, հասարակական կարգի ու անվտանգության խախտումները, նաև հայտնաբերել և քննել հանցագործություններն ու խախտումներն որենքով նախատեսված սահմաններում:

2. Աջակցել պետական հիմնարկներին ու պաշտոնական անձերին, յերբ նրանք կատարում են իրենց վրա դրված առաջադրանքներն ու խնդիրները:

3. Աջակցություն և ոգնություն ցույց տալ քաղաքացիներին իրենց որինական պահանջների մեջ միլիցիայի վրա դրված պարտականությունների սահմաններում:

Անշուշտ չափազանց բարդ ու ծանր են ԲԳ Միլիցայի ֆունկցիաները, խիստ պատասխանատու յե նրա դերը, սահմանված պարտականությունները և պրոլետարական պետության կողմից առաջադրված խնդիրները կատարելում: Ուստի ԲԳ Միլիցիան յուր աշխատանքներում հենվելու յե հասարակական ուժանդակության վրա, բանվորական մասսաների ոգնության վրա: Ինքնին հասկանալի յե, վոր միլիցիայի յուրաքանչյուր աշխատողը, վորպեսզի կարողանա հենվել իր գործունեության ընթաց-

քում հասարակական ուժանդակության վրա, ամենից առաջ ինքը պետք է լավ իմանա գործող որենքներն ու կարգադրությունները, պարզ գիտակցի յուր իրավունքներն ու պարտականությունները, տոգորվի հեղափոխական որինականությամբ և մարզվի վոչ միայն մարտունակության, այլև քաղաքական գրագիտության մեջ: Միլիցիայով է չափում ազգաբնակությունը խորհրդային իշխանության դրությունը, զորությունը և նրա որգանների որինականության աստիճանը:

ԲԳ Միլիցիայի դերն ավելի մեծ նշանակություն է ստանում ներկայումս, յերբ մեր դասակարգային թշնամին, կապիտալիստներն ու կուլակները, տեսնելով սոցիալիստական շինարարության հաղթական ընթացքը, զգալով իրենց մոտալուտ վերջնական վախճանն առաջիկա անդասակարգ, կոմունիստական հասարակակարգի, համատարած կոլեկտիվիզմի հանդեպ, վերջին մահամերձ ջղաձգումներ են անում իրենց դրությունը փրկելու համար և սրում դասակարգային պայքարը. յերբ մեր կարմիր սահմաններից դուրս իմպերիալիստական պետությունները նոր համաշխարհային պատերազմներ են պատրաստում, իրենց ուժերն են կուտակում հարձակվելու համար աշխարհիս միակ պրոլետարական պետության վրա, վոչնչացնելու իրենց ատելի բանվորա-գյուղացիական իշխանությունը: Այստեղ է, վոր կարմիր միլիցիոները, լի հեղափոխության գիտակցությամբ, հավատարիմ յուր պրոլետարական դասակարգին, միշտ արթուն պահակ է հանդիսանալու սոցիալիստական պետությանը, միշտ զգոն կանգնած է լինելու յուր պոստում, պաշտպանելով հեղափոխական կարգն ու անվտանգությունը, հասարակական անդորրությունը, պահպանելով պետական-սոցիալիստական գույքն զանազան հափշտակիչներից, կանխելով հանցագործություններն ու հակահեղափոխական յելույթները:

Յեվ յերբ մենք մեր հայացքները դարձնում ենք միլիցիայի կյանքի ու գործունեության անցած 15 տարիների վրա, տարիների, վորոնք լի յեն պանծալի գործերով ու նվաճումներով, տարիների, վորոնց հեղա-

փոխական բովում կոփվել է միլիցիայի դասակարգային գիտակցությունը և քաղաքական հասունությունը, չենք վարանում հավատալու, որ ԲԳ Միլիցիան այսուհետև ավելի ևս մեծ խանդավառությամբ, ավելի տոկուն վճռականությամբ կշարունակի կատարել իր պարտականությունները, զարգացնել յուր ունակությունները պրոլետարական պետության շինարարության ասպարիզում, պրոլետարական դիկտատուրայի պաշտպանության համար, հանուն սոցիալիզմի վերջնական հաղթանակի կոմկուսակցության ղեկավարությամբ և լենինյան դրոշակի տակ:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԼԻՑԻԱ

ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ— ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Դաշնակից յեվ ինքնավար հանրապետությունների ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատների լիկվիդացիայի մասին

Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատները, քաղաքացիական պատերազմի և վերակառուցման շրջանի տարիներում մեծ աշխատանք են կատարել, պատերազմից քայքայված կոմունալ ֆոնդը վերականգնելու և կոմունալ գործը կազմակերպելու, հանցագործությունների դեմ պայքարելու, հասարակական անվտանգության ապահովության և հեղափոխական կարգ կազմակերպելու ու ընդհանուր վարչական հսկողություն իրականացնելու, ինչպես նաև կալանավայրեր կազմակերպելու ասպարեզում:

Քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի վրա ծավալված գրոհը և ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջանն անհրաժեշտություն են ստեղծում խորհրդային ապարատը

սոցիալիստական շինարարության խնդիրներին առավել հարմարեցնելու ուղղությամբ: Կոմունալ տնտեսությունը պահանջում է հատուկ պլանային ղեկավարություն և սերտ կապ յերկրի տեղական ամբողջ տնտեսության, նրա ինդուստրացման տեմպերի հետ. դասակարգային պայքարի սրումը պահանջում է հանցագործության դեմ պայքարելու և հասարակական անվտանգության ապահովության ու հեղափոխական կարգի պաշտպանության մարմիններից—միլիցիայից և քրեական հետախուզությունից խիստ կարգապահություն, ինչպես նաև մեծ ինքնուրույնություն նրա կառավարման մեջ:

Նոր շրջանում, ԽՍՀ Միության ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման պայմաններում, դաշնակից և ինքնավար հանրապետությունների Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարյատները, վորոնք միացնում են որգանապես իրար հետ կապ չունեցող կառավարման և ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերը—կոմունալ գործ, միլիցիա, քրեական հետախուզություն, կալանավայրերի ղեկավարություն—դարձան խորհրդային ապարատի ավելորդ ողակներ:

Դրա համապատասխան, ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են.—

1. Լիկվիդացիայի յենթարկել դաշնակից ինքնավար հանրապետությունների Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատները, առաջարկելով դաշնակից հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին 1931 թ. հունվարի 1-ից վոչ ուշ անցկացնել այդ լիկվիդացիան հետևյալ հիմունքներով.

2. Դաշնակից և ինքնավար հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների խորհուրդներին կից կազմակերպել կոմունալ տնտեսության գլխավոր վարչություններ, վորոնց ամբողջովին հանձնել լիկվիդացիայի յենթարկվող Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատների ֆունկցիաները՝ կոմունալ տնտեսությունը, վոչ արդյունաբերական շինարարությունը և հրդեհաշիջման գործը ղեկավարելու ասպարեզում:

3. Յերկրային և ռայոնական գործադիր կոմիտեների և քաղաքային ու գյուղական խորհուրդների վերաբերյալ գործող կանոնադրությունների համապատասխան կոմունալ տնտեսության տեղական բաժինների ղեկավարությունը հանձնել դաշնակից և ինքնավար հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարիատների Խորհուրդներին կից կոմունալ տնտեսության գլխավոր վարչություններին:

4. Քաղաքացիական վիճակի ակտերի գրանցման մարմինների գործունեության ընդհանուր ղեկավարությունը, ԽՍՀ Միության քաղաքացիություն ընդունելու, արտասահմանյան անցագրեր տալու և օտար յերկրացիների իրավական դրության վերաբերյալ գործերի, ինչպես նաև պաշտամունքների ու շահադիտական նպատակներին չհետապնդող ընկերությունների գործունեության հետ կապված ընտրական իրավունքներից զրկված անձանց հաշվառման գործերի ղեկավարությունն անմիջականորեն իրագործում են դաշնակից և ինքնավար հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների նախագահությունները իրենց ապարատի համապատասխան մասի միջոցով:

5. Յերկրի (մարզի) սահմաններում 4 հոդ. թված ֆունկցիաների ղեկավարությունն իրագործում են յերկրային (մարզային) գործադիր կոմիտեներն իրենց կից գտնվող քարտուղարությունների միջոցով:

Ռայոնի սահմաններում այդ ղեկավարությունն իրագործում են ռայոնական գործադիր կոմիտեների նախագահություններն իրենց կից ընդհանուր բաժինների միջոցով:

Վորպես ինքնուրույն վարչական միավորներ առանձնացված քաղաքներում հիշյալ ֆունկցիաներն իրագործում են քաղաքային խորհուրդների նախագահությունները համապատասխան ապարատի միջոցով:

6. Խորհրդային շինարարության հարցերը (վարչական կարգավորում, խորհրդային ստորադաս ապարա-

տի գործունեության վրա հսկողություն ունենալը և այլն) հանձնել դաշնակից և ինքնավար հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին, ինչպես նաև յերկրային (մարզային) գործադիր կոմիտեների նախագահությունների կազմակերպչական բաժիններին:

7. Թիկունքի աշխարհազորականներին աշխատանքի ուղարկելը և աշխատանքի տարապարհակ անցկացնելը հանձնել ԽՍՀ Միության և դաշնակից հանրապետությունների Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարյատներին և աշխատանքի տեղական մարմիններին, ըստ պատկանելույն:

8. Դաշնակից և ինքնավար հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարիատների Խորհուրդներին կից կազմակերպել միլիցիայի և քրեական հետախուզության վարչություններ, վորոնց հանձնել միլիցիայի և քրեական հետախուզության ղեկավարությունը և վարչական հսկողությունը, բացառությամբ այս վորոշման 4 հոդ. համապատասխան, անմիջականորեն դաշնակից և ինքնավար հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների նախագահությունների կողմից իրագործվողի:

9. Տեղական վարչական բաժինները (վարչություններ) վերակազմակերպել միլիցիայի և քրեական հետախուզության վարչությունների՝ բաժինների իրավունքներով: Վարչական բաժինների բոլոր իրավունքներն ու պարտականությունները հանձնել հիշյալ վարչություններին, բացառությամբ այս վորոշման 4, 6 և 7 հոդվածներում նշված հարցերի վերաբերյալ ֆունկցիաների:

10. Դաշնակից և ինքնավար հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարիատների Խորհուրդներին կից միլիցիայի և քրեական հետախուզության վարչությանը հանձնել միլիցիայի և քրեական զետախուզության տեղական վարչությունների ղեկավարությունը:

11. Լիկվիդացիայի յենթարկվող Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատների տնօրինության ներքո

գտնվող կալանավայրերը, հարկադիր աշխատանքներով աքսոր և առանց պահակի հսկողության հարկադիր աշխատանքներ կազմակերպելը՝ հանձնել դաշնակից հանրապետությունների Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատներին:

12. Դաշնակից հանրապետությունների Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատներին հանձնել հանցագործության ուսումնասիրությունը և նրանց դեմ պայքարելու մեթոդների մշակումը՝ հանցագործության ու հանցագործների ուսումնասիրության հիմնարկությունները:

ԽՍՀ Միության ԿԳԿ նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ
ԽՍՀ Միության ԺԿԽ նախագահ՝ Ա. Ի. ՌԻԿՈՎ
ԽՍՀ Միության ԿԳԿ քարտուղար, Ա. ՑԵՆՈՒԿԻՁԵ

Մոսկվա—Կրեմլ.
1930 թ. դեկտեմբերի 15.
(ԽՍՀՄ Օրենքների ժողովածու, 1930 թ. № 60, հոդ. 640):

ՎՈ́ՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Վերացված Ներքին Գործերի ժողովրդական Կոմիսարիատի ֆունկցիաները բաշխելու մասին

1931 թ. հունվարի 3-ին ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թ. դեկտեմբերի15-ի «Դաշնակից և ինքնավար Հանրապետությունների Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատները վերացնելու մասին» վորոշման («Իզվեստիա» 1933 թ. դեկտեմբերի 16-ի, № 345) հիման վրա և ի փոփոխումն ՀՍԽՀ Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի վերակազմության, նաև խորհրդային ապարատը պարզեցնելու,

եժանացնելու, ռացիոնալացնելու, մասսաներին մոտեցնելու և սոցշինարարության խնդիրներին հարմարեցնելու նպատակով՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.–

1

1. Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին առընթեր 1931թ. հունվարի 1-ից կազմակերպել Կոմունալ Տնտեսության Գլխավոր Վարչություն, վորին հանձնել վերացված Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի կոմունալ տնտեսության վոչ արդյունաբերական շինարարության և հրդեհային գործի վերաբերյալ բոլոր ֆունկցիաները:

2. Կոմունալ Տնտեսության Գլխավոր Վարչությունը ղեկավարում ե նաև կոմունալ տնտեսության տեղական բաժինների գործունեությունը՝ շրջգործկոմների, քաղաքային և գյուղական խորհուրդների մասին գործող կանոնադրությունների համաձայն:

3. Քաղաքացիական ակտերի գրանցման, ԽՍՀՄ քաղաքացիությունն ընդունելու, արտասահմանյան անձնագրեր տալու, օտար յերկրացիների իրավական դրության, պաշտամունքի, վոչ շահագիտական նպատակներ հետապնդող ընկերությունների, ընտրական իրավունքներից զրկված անձանց հաշվառման հետ կապված բոլոր գործերի ընդհանուր ղեկավարությունն՝ անմիջականորեն իրականացնում ե Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունն իր ապարատի միջոցով:

Յերևան և Լենինական քաղաքներում հիշյալ ֆունկցիաներն իրականացնում են քաղխորհուրդները, համապատասխան բաժինների միջոցով:

4. Խորհրդային շինարարության (վարչական կազմակերպություն, խորհրդային ստորին ապարատի գործունեության վրա հսկողություն և այլն) վերաբերյալ գործերը հանձնել Կենտգործկոմի կազմակերպչական բաժնին:

5. Թիկունքային աշխարհազորականներին աշխատանքի ուղարկելու և աշխատանքի ու ճանապարհային պարհակի իրականացման հետ կապված ֆունկցիաները հանձնել Աշխժողկոմատին:

6. Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին կից կազմակերպել միլիցիայի և քրեական հետախուզության վարչություն, վորին հանձնել միլիցիայի և քրեական հետախուզության ղեկավարությունը, վարչական հսկողությունը, բացառությամբ այն ֆունկցիաների, վորոնք այս վորոշման 3-րդ հոդվածի համապատասխան անմիջականորեն իրականացվում են Կենտգործկոմի նախագահության կողմից:

7. Շրջանային վարչական բաժինները վերակազմել միլիցիայի և քրեական հետախուզության վարչություններ՝ այն իրավունքներով, վորոնք վերապահված են բաժիններին:

Հիշյալ վարչություններին հանձնել շրջանային վարչական բաժինների բոլոր իրավունքներն ու պարտականությունները, բացառությամբ այն ֆունկցիաների, վորոնք հիշատակված են այս վորոշման 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներում:

8. Ժողկոմխորհին կից Միլիցիայի և Քրեական Հետախուզության Վարչությունը ղեկավարում ե միլիցիայի և քրեական հետախուզության տեղական մարմինների գործունեությունը:

9. Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատը վերացնելու հետևանքով աշխատանքի ուղղիչ տների ղեկավարությունը թողնել Ժողկոմխորհի գործերի կառավարչությանը:

2

10. Վերացնել Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1929 թ. հոկտեմբերի 23-ին հաստատած «Պետական հրդեհային հսկողության մարմինների մասին» կանոնադրությունը (ՀՍԽՀ. Որ. և Կարգ. Ժող. 1929 թ. № 10) և առաջարկել Ժողկոմխորհին այս վորոշման 1-ին հոդվածի համաձայն մշակել և ներկայացնել Կենտգործ-

կոմին պետական հրդեհային հսկողության մարմինների նոր կանոնադրություն, հրդեհային գործի վերաբերյալ կոմունալ տնտեսության գլխավոր վարչության ղեկավարությունը վերապահելով այն և համամիութենական և ֆեդերատիվ հիմնարկներին, վորոնք ունեն սեփական հրդեհային մարմիններ:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահի տեղակալ՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ
Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ
Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝ Գ. ՄՈՎՍԵՍՅԱՆ

(Հրապարակված է «Խորհրդային Հայաստան»-ում № 36, 1931 թ. փետրվարի 13):

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀՍԽ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՅԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

№ 31. Մ. Գ. Վ. Բովանդակություն.—*Հայաստանի Հանրապետական Միլիցիայի և Քրեական Հետախուզության Վարչության վերակազման մասին:*

№ 31. 19 *փետրվարի* **1931** *թ., Յերևան:*

§ 1

Համաձայն Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1931 թ. հունվարի 2-ի վորոշման «Վերացված Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի ֆունկցիաները բաշխելու մասին», հրապարակված «Խորհրդային Հայաստանի»-ի ս. թ. փետրվարի 13-ին, №36, Հայաստանի Հանրապետական Միլիցիայի և Քրեական հետախուզության վարչությունը կազմակերպվում է Ժողկոմխորհին կից, վորին հանձնարարվում է միլիցիայի և քրեական հետախուզության տեղական մարմինների ընդհանուր ղեկավարությունն ու վարչական հսկողությունը:

Այդ վորոշման հիման վրա, շրջանային վարչական բաժինները վերակազմվում են միլիցիայի և քրեական հետախուզության վարչությունների՝ այն իրավունքներով ու պարտականություններով, վորոնք վերապահված են բաժիններին:

Քաղաքացիական ակտերի գրանցման (Զագսերի), ԽՍՀՄ քաղաքացիությունն ընդունելու, արտասահմանյան անցագրեր տալու, ոտարերկրացիների իրավական դրության, պաշտամունքի, վոչ շահագիտական նպատակներ հետապնդող ընկերությունների, ընտրական իրավունքներից զրկված անձանց հաշվառման հետ կապված բոլոր գործերի ընդհանուր ղեկավարությունն ամիջականորեն իրականացնում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունն իր ապարատի միջոցով:

Յերեվան և Լենինական քաղաքներում հիշյալ ֆունկցիաներն իրականացնում են Քաղխորհուրդները համապատասխան բաժինների միջոցով:

Վերոհիշյալի հիման վրա, առաջարկվում է՝

1. Ս. թ. հունվարի 1-ից շրջանային վարչական մարմինները վերանվանել միլիցիայի և քրեական հետախուզության շրջանային վարչություններ այն իրավունքներով ու պարտականություններով, վորոնք վերապահված են բաժիններին:

2. Մինչև որս ձեր տրամադրության տակ յեղած քաղաքացիական ակտերի գրանցման (Զագսերի) և վոչ շահագիտական նպատակներ հետախուզող ընկերությունների հետ կապված բոլոր գործերը շրջաններում հանձնել տեղական գործկոմներին, իսկ Յերեվանինը և Լենինականինը—Յերեվանի և Լենինականի Քաղխորհրդներին:

Հանրապետական Միլիցիայի Վարչության պետ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՐԱՄԱՆ

ՀՍԽՀ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

№ 50. Մ. Գ. Վ. Բովանդակություն.— *Միլիցիայի և Քրեական Հետախուզության Վարչության պետ և տեղակալ նշանակելու մասին։*

№ 50. 23 մարտի 1931 թ., քաղ. Յերևան.

§ 1

Համաձայն Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշման յես նշանակվում եմ ՀՍԽՀ Միլիցիայի և Քրեական Հետախուզության Վարչության պետ և այսորվանից անցնում եմ իմ անմիջական պարտականությունների կատարմանը։

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝ վարչությանս յենթակա բոլոր ոգակների պետերին, պաշտոնական գործերով այսուհետեվ դիմել ինձ։

§ 2

Համաձայն նույն Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշման իմ տեղակալ նշանակվում է՝ ընկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՏԵՓԱՆԸ, վորին առաջարկում եմ այսորվանից անցնել իր անմիջական պարտականությունների կատարմանը։

ՀՍԽՀ Միլիցիայի և Քրեական Հետախուզության Վարչության պետ՝ Ա. ԴՈՒԼԳԱՐՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ

ԼԱՍՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. *Բանվորա-գյուղացիական միլիցիան հանդիսանում է խորհրդային իշխանության վարչական-գործադիր մարմինը։ Բանվորա-գյուղացիական միլիցիայի հիմնական խնդիրն է պաշտպանել սոցիալիստական շինարարության համար անհրաժեշտ հեղափոխական կարգն ու հասարակական անվտանգությունը։*

Բանվորա-գյուղացիական միլիցիան հսկում է հեղափոխական կարգն ու հասարակական անվտանգությունը, կանոնավորող իշխանության կենտրոնական և տեղական մարմինների որենքների ու կարգադրությունների կենսագործումը, պայքար է մղում հանցագործության դեմ և քննում է հանցանքների վերաբերյալ գործերը, պահպանում է պետական ու հասարակական գույքը, նույնպես և քաղաքացիների անձնական անվտանգությունն ու նրանց գույքը։

2. *Հանդիսանալով պրոլետարիատի դիկտատուրայի մարմինը, Բանվորա-գյուղացիական Միլիցիան իր աշխատանքով հենվում է լայն աշխատավոր մասսաների վրա և գրավում է նրանց իր վրա դրված առանձին խնդիրների անմիջական իրագործման։ Այդ նպատակով նա կազմակերպում է միլիցիային աջակցող կամավոր ընկերություններ ու ղեկավարում է նրանց գործունեությունը։*

ԼԱՍՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

3. *Միլիցիան բաժանվում է.*

ա) ընդհանուր միլիցիայի.

բ) գերատեսչական միլիցիայի։

ԲԳ Միլիցիայի ժողովածու—3

4. Միլիցիայի կենտրոնական մարմիններ հանդիսանում են դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին կից գտնվող միլիցիայի գլխավոր վարչությունները:

Տեղական միլիցիայի կենտրոնական մարմիններ հանդիսանում են յերկրային (մարզային) և ինքնավար հանրապետությունների, ռայոնական ու քաղաքային միլիցիայի գլխավոր վարչությունները:

Ծանոթություն.— Դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների պետերի կարգադրությամբ, նայած տեղական պայմաններին, կարող են կազմվել միլիցիայի միջռայոնական մարմիններ:

5. Միլիցիայի տեղական մարմինների պետերը անմիջականորեն յենթարկվում են վերադաս մարմինների պետերին և նրանց առջև լիակատար պատասխանատվություն են կրում միլիցիայի համապատասխան մարմնի վիճակի և աշխատանքի համար:

Միևնույն ժամանակ նրանք իրենց աշխատանքում ղեկավարվում են այն ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդների, տեղական գործադիր կոմիտեների և քաղաքային խորհուրդների ցուցմունքներով, վորոնց կից գտնվում են միլիցիայի համապատասխան մարմինները:

6. Դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների պետերին նշանակում են դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները:

7. Յերկրների (մարզերի) և ինքնավար հանրապետությունների միլիցիայի վարչությունների պետերին նշանակում է դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչության պետը:

Միլիցիայի ռայոնական և քաղաքային վարչությունների պետերին նշանակում են ՌՍՖԽՀ մեջ— յերկրների (մարզերի) կամ ինքնավար հանրապետությունների միլիցիայի վարչությունների պետերը. մյուս դաշնակից հանրապետություններում միլիցիայի գլխավոր վարչությունների պետերը:

Ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, տեղական գործադիր կոմիտեները և քաղաքային խորհուրդները մերժման իրավունք ունեն:

8. Դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներն այս կանոնադրության հիման վրա հրատարակում են դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների և միլիցիայի տեղական մարմինների կանոնադրությունը:

9. Գերատեսչական միլիցիան կազմակերպվում է դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների կամ յերկրների (մարզերի) և ինքնավար հանրապետությունների միլիցիայի վարչությունների ու պետական և հասարակական մարմինների միջև տեղի ունեցած համաձայնությունների հիման վրա—այդ մարմինների առանձին ձեռնարկությունների, կառուցվածքների և այլ գույքի հատուկ պահպանման համար:

Գերատեսչական միլիցիան գործում է միլիցիայի ընդհանուր կանոնադրությունների և կանոնագրերի ու նրա ծառայության հատուկ պայմանների շնորհիվ անհրաժեշտ լրացուցիչ հրահանգների հիման վրա:

10. Միլիցիան իր կազմում ունի միլիցիայի գործավորների պատրաստման և վերապատրաստման ուսումնական հաստատություններ, նույնպես և շարային զորամասեր:

11. Միլիցիան զենքով, հանդերձանքով և իրային բավարարությամբ մատակարարվում է կենտրոնացված կարգով միևնույն նորմաներով, ինչ նորմաներ սահմանված են ռազմականացված պահպանության համար:

12. Բոլոր դաշնակից հանրապետությունների միլիցիան ունի զգեստավորման միասնական տարազ

տարբերության միատեսակ պաշտոնական նշաններով և միատեսակ զենք:

13. Միլիցիայի գործավորներին զգեստավորում, զենք և հանդերձանք մատակարարվում են դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների պետերի հաստատած ցուցակներով:

14. Միլիցիայի, բացառությամբ գերատեսչականի, պահելու ծախսերը վերաբերվում են դաշնակից հանրապետությունների բյուջեներին, յերկրային (մարզային) բյուջեներին և ինքնավար հանրապետությունների բյուջեներին, նույնպես ռայոնական ու քաղաքային բյուջեներին:

Տեղական բյուջեներով և ինքնավար հանրապետությունների բյուջեներով նախատեսնված միլիցիայի պահելու վարկերը կենտրոնացվում են դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների տնօրինության տակ:

15. Գերատեսչական միլիցիան պահվում է համապես այդ միլիցիայի կողմից սպասարկվող պետական և հասարակական մարմինների բաց թողած միջոցների հաշվով: Այդ պետական և հասարակական մարմինները գերատեսչական միլիցիան պահելու միջոցները փոխանցում են միլիցիայի այն վարչությունների ընթացիկ հաշիվներին, վորոնց կազմի մեջ մտնում են գերատեսչական միլիցիայի զորամասերը, իբրև այդ վարչությունների նպատակային միջոցներ:

16. Դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների պետերն այս կանոնադրության և այլ գործող օրենքների հիման վրա հաստատում են.

ա) բանվորա-գյուղացիական միլիցիայի ծառայության կանոնագրերը.

բ) բանվորա-գյուղացիական միլիցիայի կարգապահական կանոնագրերը.

գ) բանվորա-գյուղացիական միլիցիայի ուսումնական հաստատությունների կանոնադրությունները.

դ) լրացուցիչ հրահանգներ գերատեսչական միլիցիայի համար:

ՀԱՏՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ա. Ընդհանուր միլիցիայի պարտականությունները

17. Ընդհանուր միլիցիան իրագործում է հեղափոխական կարգ և հասարակական անվտանգության պահպանության հետևյալ պարտականությունները.

ա) հսկում է կարգը փողոցներում, այգիներում, պարտեզներում և հանրային օգտագործման այլ տեղերում, կանխում և վերջ է տալիս այդ տեղերում կարգը խանգարելուն.

բ) հսկում է յերթեր և ցույցեր կազմակերպելու սահմանված կանոնների իրագործումը.

գ) հսկում է փողոցները, այգիները, պարտեզները և հանրային օգտագործման այլ տեղերը մաքուր և կանոնավոր դրության մեջ պահելու վրա.

դ) հսկում է տների և բակերի սանիտարական դրությունը.

ե) վերահսկում է փողոցային շարժման կանոնների, նույնպես տրամվայներից, ավտոբուսներից և այլն օգտվելու կանոնների պահպանմանը.

զ) վերահսկում է հասարակական անվտանգության կանոնները, շինարարության, ճանապարհային և այլ աշխատանքների կատարման ժամանակ.

է) պատշաճ մարմիններին և բնակչությանը տեղեկացնում է տեղի ունեցող տարերային աղետների մասին, միջոցներ է ձեռք առնում լիկվիդացիայի ենթարկել նրանք. տարերային աղետների ժամանակ կարգ է սահմանում և պաշտպանում է գույքն ու անհրաժեշտ օգնություն ցույց տալիս տուժածներին.

ը) ցույց է տալիս առաջին օգնություն հանցագործություններից և դժբախտ դեպքերից տուժած անձանց. նույնպես և հանրային օգտագործման վայրերում հիվանդ և անօգնական դրության մեջ գտնված անձանց. այդ անձանց, անհրաժեշտության դեպքում, ուղարկում

է մոտակա բուժական հաստատություն և կանչում է շուտափույթ օգնություն.

թ) վերահսկում է շահ չհետապնդող ընկերությունների վերաբերյալ կանոնների պահպանմանը.

ժ) վերահսկում է հանրային տեսարանների, խաղերի և զվարճալիքների վերաբերյալ կանոնների պահպանմանը.

ի) վերահսկում է հավատացյալների ժողովների նկատմամբ կանոնների պահպանմանը.

լ) վերահսկում է առևտուր և արդյունարաններ բացելու ու կատարելու կարգի վերաբերյալ վարչական կանոնների պահպանմանը. որենքով նախատեսված դեպքերում թույլտվություններ է տալիս հատուկ առարկաներ (վորսորդական զենք, մարտական պիտույքներ և այլն) վաճառելու և արտադրելու համար ու վերահսկում է նրանց արտադրությունը.

խ) պահպանում է պետական և հասարակական գույքը.

ծ) վերահսկում է տնային վարչությունների և քաղաքացիների կողմից ցուցակագրվելու և դուրս գրվելու վերաբերյալ կանոնների պահպանմանը, նույնպես և վարում է բնակչության հաշվառումը, հասցեատների հատուկ կանոններով.

կ) վերահսկում է միլիցիայի խնդիրներին վերաբերվող հարցերի նկատմամբ պարտադիր վորոշումների պահպանմանը. պարտադիր վորոշումներ խախտողներին, այդ վորոշումներով սահմանված կարգով պատասխանատվության է կանչում, իսկ պատշաճ դեպքերում՝ անմիջականորեն վարչական պատիժների յե յենթարկում. ի կատար է ածում տեղական գործադիր կոմիտեների և քաղաքային խորհուրդների կողմից դրված վարչական պատիժները և աջակցում է վարչական պատիժներ դնելու իրավունք ունեցող մարմիններին այդ պատիժների հարկադիր իրագործման մեջ.

հ) աջակցում է բոլոր գերատեսչությունների պաշտոնատար անձանց նրանց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ՝ այն դեպքերում, յերբ առանձին քաղաքացիներ կամ քաղաքացիների խմբեր հրաժարվում են յենթարկվել այդ պաշտոնատար անձանց պահանջներին կամ դիմադրություն են ցույց տալիս նրանց.

18. Ընդհանուր միլիցիան իրագործում է հանցագործության դեմ պայքարելու հետևյալ պարտականությունները.

ա) կանխում և դադարեցնում է հանցագործությունները.

բ) հայտնաբերում և քննում է կատարված հանցագործությունները.

գ) փնտրում է քննությունից, դատից և դատավճիռը կատարելուց խուսափող անձանց.

դ) փնտրում է հափշտակված գույքը.

յե) ի կատար է ածում դատարանների աքսորի և վտարման վերաբերյալ դատավճիռները, վարում է վտարվածների և աքսորվածների հաշվառումն ու հատուկ վերահսկողություն է սահմանում նրանց նկատմամբ:

19. Ընդհանուր միլիցիան բնակչության սպասարկման վերաբերյալ իրագործում է հետևյալ պարտականությունները.

ա) քաղաքացիներին տալիս է անձնավորության հավաստագրեր.

բ) շահագրգռված անձանց և մարմինների հայտարարություններով փնտրում է մինչև 14 տարեկան հասակի կորած անչափահասներին, նույնպես և անհայտ բացակայող անձանց, յեթե հիմք կա յենթադրելու, վոր նրանք զոհ են գնացել հանցագործության կամ դժբախտ դեպքի.

գ) պահ է ընդունում գտնված իրերը, փաստաթղթերը և այլ արժեքավոր իրերը.

դ) ընդունում է մոլորված անասունը և փնտրում է նրա տերերին:

20. Ընդհանուր միլիցիան իրագործում է յերկրի պաշտպանության հետևյալ պարտականությունները.

ա) միջոցներ է ձեռք առնում զինվորական ծառայության պարտականություններից խուսափողների դեմ.

բ) աջակցում է զինվորական ծառայողների և զինապարտների հաշվառմանը.

գ) աջակցում է ռազմա-ձիային և ռազմա-սայլային, ռազմա-նավային, ռազմա-ավտո-տրանսպորտային և այլ պարհակների հաշվառման և այլ ձեռնարկումների կիրառման:

21. Միլիցիայի վրա, 17–20 հոդվածներով մատնանշված պարտականություններից բացի, այլ պարտականություններ կարող են դրվել միմիայն ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումով:

բ. Գերատեսչական միլիցիայի պարտականությունները

22. Գերատեսչական միլիցիան պետական և հասարակական մարմինների, առանձին ձեռնարկությունների, կառուցվածքների և գույքի հատուկ պահպանության հետ միասին այդ ձեռնարկությունների և կառուցվածքների տերրիտորիայում իրագործում է ընդհանուր միլիցիայի պարտականությունները:

գ. Միլիցիայի իրավունքները

23. Միլիցիան իրավունք ունի.

ա) պահանջ ներկայացնել առանձին քաղաքացիներին և հիմնարկությունների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների պաշտոնատար անձանց, օրենքով սահմանված կանոններն ու իշխանության մարմինների կարգադրությունները պահպանելու մասին և օրինական միջոցներ ձեռք առնել խախտումները վերացնելու համար:

բ) սահմանված կարգով աջակցություն պահանջել դռնապաններից, գիշերային պահապաններից, գյուղական կատարածուներից, միլիցիային աջակցող ընկերությունների անդամներից և այլ քաղաքացիներից.

գ) ոգտվել պետական և հասարակական մարմիններին և մասնավոր անձանց պատկանող տեղափոխման և

կապի ավյալ մոմենտին ազատ և զբաղված բոլոր միջոցներից. 1) թաղնվող հանցագործներին հետապնդելու, 2) անհապաղ բժշկական ոգնության կարիք զգացող անձանց (հանցագործություններից, դժբախտ դեպքերից և այլն տուժածներին) բուժական հաստատություններ փոխադրելու համար:

դ) հանցագործությունների և խախտումների վերաբերյալ միլիցիայում քննության գտնվող գործերի վերաբերյալ, սահմանված կարգով կանչել քաղաքացիներին իբրև կասկածելիներ, վկաներ, փորձագետներ և ընթերականեր. այդ անձանց չներկայանալու դեպքում հարկադրաբար բերել տալ նրանց.

յե) մտնել բնակելի շինությունները, նույնպես և հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների շինությունները. 1) հանցագործության մեջ կասկածելի կամ ձերբակալությունից փախած անձանց հետապնդելու և փնտռելու, 2) ցուցակագրման և դուրս գրման կանոնների պահպանումը ստուգելու, 3) կատարվող հանցագործություններին վերջ տալու համար.

զ) հանցագործությունները քննելու ժամանակ քրեական-դատավարական օրենքներով սահմանված կարգով կատարել ձերբակալություններ, խուզարկություններ և հանույթներ.

է) ձերբակալել վարչական պատասխանատվության կանչվող անձանց արձանագրություններ կազմելու համար և հարբածներին—մինչև զգաստանալը.

ը) զենք գործադրել բանվորա-գյուղացիական Միլիցիայի ծառայության կանոնագրերով սահմանված դեպքերում և կարգով:

ՀԱՏՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

24. Միլիցիայի օպերատիվ-շարային կազմի գործավորներին պատկանում են այն անձինք, վորոնք անմիջականորեն կրում են պահակային ծառայության և

կատարում են հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության պահպանման օպերատիվ աշխատանք և միլիցիայի գործավորների քաղաքական դաստիարակության աշխատանք, նույնպես և այդ աշխատանքը ղեկավարող անձինք:

25. Միլիցիայի վարչա-տնտեսական կազմի գործավորներին պատկանում են այն անձինք, վորոնք կատարում են միլիցիայի մարմինների վարչական, բժշկա-սանիտարական և տնտեսական սպասարկման աշխատանք, նույնպես և միլիցիայի ուսումնական հաստատությունների մանկավարժական անձնակազմը:

26. Միլիցիայի կազմի օպերատիվ-շարային և վարչական-տնտեսական գործավորներն ըստ իրենց պաշտոնների բաժանվում են՝ գերագույն, ավագ, միջին և կրտսեր գլխապետական կազմի ու շարքային կազմի գործավորների:

27. Միլիցիայի կազմի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավորների վրա չի տարածվում աշխատանքի ընդհանուր օրենսդրությունը: Այդ գործավորների աշխատանքի պայմանները, ծառայության ընդունելու պայմաններն ու կարգը, ծառայություն անցնելու և ծառայությունից հեռացվելու կարգը կանոնավորվում է բանվորա-գյուղացիական միլիցիայի ծառայության կանոնագրերով (16 հոդ.), պահպանելով հետևյալ սկզբունքները.

ա) բանվորական ժամանակը սահմանվում է գլխապետական անձանց կազմի համար—չնորմավորված, ֆիզիքական աշխատանքով զբաղվող շարքային կազմի անձանց համար—օրական 8 ժամ և գրասենյակային աշխատանքով զբաղվող շարքային կազմի անձանց համար —$6^1/_2$ ժամ.

բ) հերթափոխ աշխատանքի և անընդհատ հերթապահության ժամանակ սահմանվում է գիշեր և ցերեկ աշխատանքի միատեսակ տևողություն.

գ) նորմավորված բանվորական ժամանակ ունեցող գործավորներն անհրաժեշտության դեպքում պետք է օպերատիվ աշխատանք կատարեն նաև նորմալ բանվորական ժամանակից դուրս՝ առանց հատուկ վարձատրության.

դ) գործավորներն անհրաժեշտության դեպքում պարտավոր են աշխատել շաբաթական հանգստի օրերին և հեղափոխության օրերին, այդ դեպքում չօգտագործված շաբաթական հանգստի օրերի ու հեղափոխական օրերի փոխարեն տրվում է նրանց այլ հանգստի օրեր.

յե) ամեն տարվա արձակուրդի տևողությունը սահմանվում է նայած պաշտոնական պարտականությունների տեսակին, բայց չի կարող 12 բանվորական օրից պակաս լինի.

զ) մտավոր և գրասենյակային աշխատանքով զբաղված կանայք աշխատանքից ազատվում են ծննդաբերությունից 42 օր առաջ և 42 օր հետո, իսկ ֆիզիքական աշխատանքով զբաղված կանայք ծննդաբերությունից 56 օր առաջ և 56 օր հետո.

է) կանայք հղիության 5-րդ ամսից հետո սկսած չեն կարող ուղարկվել գիշերային աշխատանքի, նույնպես և գործուղման՝ մշտական աշխատանքի տեղից դուրս.

ը) կերակրող մայրերն աշխատանքի ժամանակ օգտվում են ընդհատումներով՝ յերեխային կերակրելու համար. այդ ընդհատումները հաշվվում են իբրև բանվորական ժամանակ:

28. Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավորները ծառայության մտնելիս գրավոր պարտավորություններ են տալիս 2 տարուց վոչ պակաս ծառայելու մասին: Հետագա ծառայության մնացողները նորից տալիս են նման պարտավորություն:

29. Միլիցիայի ուսումնական հաստատություններում սովորող միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավորները պարտավոր են ուսումը վերջանալուց հետո միլիցիայում աշխատել ուսուցման յուրաքանչյուր ամսվա համար յերկու ամիս, բայց ընդհանուր առմամբ յերկու տարուց վոչ պակաս:

30. Ժամանակից շուտ ինքնակամ ծառայությունը թողնելու համար միլիցիայի օպերատիվ-շարային և

վարչա-տնտեսական կազմի գործավորները պատասխանատվություն են կրում, զինվորական հանցագործությունների կանոնադրության համաձայն:

31. Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավորները հատուկ և ռազմական գիտելիքներ սովորում են դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների հրատարակած ծրագրերով:

32. Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավորների համար սահմանվում է զինվորական կարգապահություն:

33. Միլիցիայի գործավորները պարտավոր են ճշտիվ իրագործել իրենց պետերի բոլոր պաշտոնական հրամանները, բացի ակնհայտ ապօրինի հրամաններից:

Յեթե ստորադրյալն ճշտիվ իրագործում է պետի պաշտոնեական հրամանը, ապա միայն պետն է պատասխանատու յուր հրամանի հետևանքների համար:

Յեթե ստորադրյալը իրագործում է պետի ակնհայտ ապօրինի հրամանը, ապա հրաման տվող պետի հետ միասին պատասխանատու յե նաև հրամանն իրագործող ստորադրյալը:

34. Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավորները ծառայության ժամանակ պարտավոր են կրել զգեստավորման սահմանած տարազը՝ տարբերության պաշտոնեական նշաններով և ըստ պաշտոնի նրանց տրված զենքը:

35. Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի դիսցիպլինան պահպանելու և աշխատանքը բարելավելու համար այդ գործավորների նկատմամբ կիրառվում են խրախուսման հատուկ միջոցներ և կարգապահական պատիժներ (36—38 հոդվածներ):

36. Պաշտոնեական պարտականություններն օրինակելի կերպով իրագործելու, ինքնուրույնության, հերոսության և այլ հատուկ արժանիքների համար միլիցիայի օպերատիվ-շարային ու վարչա-տնտեսական կազմի գործավորների նկատմամբ կիրառվում է խրախուսման հետևյալ միջոցները.

ա) հրամանով հայտարարվող շնորհակալություն.

բ) լրացուցիչ հերթական արձակուրդ.

գ) դրամական պարգևատրություն.

դ) անվանական նվերով պարգևատրություն.

յե) պատվագրով պարգևատրություն.

զ) ԽՍՀ Միության և դաշնակից հանրապետությունների շքանշաններով պարգևատրություն:

37. Քրեական հետապնդում չհարուցող պաշտոնեական զանցառությունների համար միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավորների նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական պատիժները.

ա) նկատողություն.

բ) հանդիմանություն.

գ) խիստ հանդիմանություն.

դ) միլիցիայի շարային զորամասի կամ ուսումնական հաստատության գտնված տեղից մինչև մեկ ամիս ժամանակով բացակայության արգելում.

յե) մինչև 3 կարգը հերթից դուրս ծառայության նշանակում.

զ) կալանք մինչև 20 օր ու գիշեր.

է) ցածր պաշտոնի իջեցում.

ը) պաշտոնից հեռացում:

38. ԽՍՀ Միության և դաշնակից հանրապետությունների շքանշաններով պարգևատրվում են հատուկ օրենքներով սահմանված կարգով:

Խրախուսման այլ միջոցների, նույնպես և կարգապահական պատիժների կիրառման կարգը վորոշվում է բանվորա-գյուղացիական միլիցիայի կարգապահական կանոնագրերով (16 հոդ.):

39. Միլիցիայում ծառայություն կրելու սահմանված կարգի դեմ միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի անձանց կողմից գործած հանցանքները համարվում են զինվորական հանցանքներ:

40. Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի անձինք զինվորական հանցագործությունների նկատմամբ յենթակա յեն ռազմական տրի-

քումալների, իսկ այլ հանցագործությունների նկատմամբ՝ ընդհանուր դատարանների իրավասության)։*

41. *Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավորների աշխատավարձի չափերը սահմանում է ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը։*

42. *Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավորների համար սահմանվում է յերկարատև տարիների ծառայության համար աշխատավարձի պարբերական հավելում՝ հետևյալ չափով. միլիցիայում 3 տարի անընդհատ ծառայելու համար—տվյալ մոմենտում ունեցած պաշտոնի հիմնական ռոճիկի* 10%, 6 *տարի ծառայության համար*—20%, 9 *տարի ծառայության համար*—30% *և* 12 *տարվա ծառայության համար*—50%։

Միլիցիայի ուսումնական հաստատություններն ավարտած անձանց տարիների ծառայության համար աշխատավարձի հավելումը հաշվելիս, նրանցում ուսանելու ժամանակը հաշվի յե առնվում կրկնակի չափով։

43. *Միլիցիայի գործավորներին արգելվում է զուգավար աշխատանք, նույնպես և վոչ վարձովի-վարձու աշխատանք։ Այդ արգելումը չի տարածվում.*

ա) գրական, մանկավարժական, բժշկական, գիտական, գեղարվեստական և արտիստական աշխատանքների վրա այն չափով, վորչափ նա միասնելի յե պաշտոնեական պարտականությունները կատարելու հետ.

բ) իբրև մասնագետներ պետական և հասարակական մարմիններում ծառայող միջին, ավագ և բարձրագույն գլխապետական կազմի անձանց աշխատանքի վրա։

Այդ դեպքում մատնանշված զուգավար աշխատանք թույլատրվում է ամեն մի առանձին դեպքում՝ միմիայն միլիցիայի համապատասխան վարչության պետի թույլտվությամբ։

44. *Միլիցիայի մնացած գործավորների, բացի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի.*

**) Այս հոդվածը հետագայում փոխվել է. տես հաջորդ շըրջաբերական № 011։*

աշխատանքի ընդունելու և հեռացնելու, աշխատանքի պայմանները և կարգապահական պատասխանատվությունը կարգավորվում է աշխատանքի ընդհանուր որենսդրությամբ։

45. *Միլիցիայի բոլոր գործավորներն իրավունք ունեն արհեստակցական միության անդամ լինել։*

Միլիցիայի մարմիններում տեղական կոմիտեներ չեն կազմակերպվում։ Դրանց փոխարեն կազմակերպվում են կուլտուր-կենցաղային հանձնաժողովներ։ Այդ հանձնաժողովները գործում են արհեստակցական միությունների համամիութենական կենտրոնական խորհրդի և դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների պետերի միջև տեղի ունեցած համաձայնությամբ հրատարակվող հատուկ կանոնադրությունների հիման վրա։

ՀԱՏՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

46. *Միլիցիայի գերագույն, ավագ, միջին և կրտսեր գլխապետական կազմի գործավորներն ու նրանց ընտանիքները պետական ապահովությունից օգտվում են բանվորա-գյուղացիական կարմիր բանակի գերակետ ծառայության բարձրագույն ավագ, միջին և կրտսեր գլխապետական կազմի անձանց և նրանց ընտանիքների հետ հավասար։*

Ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի կողմից Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի գլխապետական կազմի անձանց պետական ապահովության կարգով թոշակներ և նպաստներ նշանակելու իրավունքները միլիցիայի գործավորների և նրանց ընտանիքների նկատմամբ իրագործում են դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների պետերը)։*

**) Այս հոդվածը փոխվել է ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1932 թ. դեկտեմբերի 2-ի վորոշումով. տես հաջորդ եջերում։*

բունալների, իսկ այլ հանցագործությունների նկատմամբ՝ ընդհանուր դատարանների իրավասության*)։

41. Միլիցիայի օպերատիվ–շարային և վարչա–տնտեսական կազմի գործավորների աշխատավարձի չափերը սահմանում է ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը։

42. Միլիցիայի օպերատիվ–շարային և վարչա–տնտեսական կազմի գործավորների համար սահմանվում է յերկարատև տարիների ծառայության համար աշխատավարձի պարբերական հավելում՝ հետևյալ չափով. միլիցիայում 3 տարի անընդհատ ծառայելու համար—տվյալ մոմենտում ունեցած պաշտոնի հիմնական ռոճիկի 10%, 6 տարի ծառայության համար—20%, 9 տարի ծառայության համար—30% և 12 տարվա ծառայության համար—50%։

Միլիցիայի ուսումնական հաստատություններն ավարտած անձանց տարիների ծառայության համար աշխատավարձի հավելումը հաշվելիս, նրանցում ուսանելու ժամանակը հաշվի յե առնվում կրկնակի չափով։

43. Միլիցիայի գործավորներին արգելվում է զուգավար աշխատանք, նույնպես և վոչ վարձովի–վարձու աշխատանք։ Այդ արգելումը չի տարածվում.

ա) գրական, մանկավարժական, բժշկական, գիտական, գեղարվեստական և արտիստական աշխատանքների վրա այն չափով, վորչափ նա միասնելի յե պաշտոնեական պարտականությունները կատարելու հետ.

բ) իբրև մասնագետներ պետական և հասարակական մարմիններում ծառայող միջին, ավագ և բարձրագույն գլխապետական կազմի անձանց աշխատանքի վրա։

Այդ դեպքում մատնանշված զուգավար աշխատանք թույլատրվում է ամեն մի առանձին դեպքում՝ միմիայն միլիցիայի համապատասխան վարչության պետի թույլտվությամբ։

44. Միլիցիայի մնացած գործավորների, բացի օպերատիվ–շարային և վարչա–տնտեսական կազմի.

*) Այս հոդվածը հետագայում փոխվել է. տես հաջորդ շըրջաբերական № 011.

աշխատանքի ընդունելու և հեռացնելու, աշխատանքի պայմանները և կարգապահական պատասխանատվությունը կարգավորվում է աշխատանքի ընդհանուր օրենսդրությամբ։

45. Միլիցիայի բոլոր գործավորներն իրավունք ունեն արհեստակցական միության անդամ լինել։

Միլիցիայի մարմիններում տեղական կոմիտեներ չեն կազմակերպվում։ Դրանց փոխարեն կազմակերպվում են կուլտուր–կենցաղային հանձնաժողովներ։ Այդ հանձնաժողովները գործում են արհեստակցական միությունների համամիութենական կենտրոնական խորհրդի և դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների պետերի միջև տեղի ունեցած համաձայնությամբ հրատարակվող հատուկ կանոնադրությունների հիման վրա։

ՀԱՏՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

46. Միլիցիայի գերագույն, ավագ, միջին և կրտսեր գլխապետական կազմի գործավորներն ու նրանց ընտանիքները պետական ապահովությունից օգտվում են բանվորա–գյուղացիական կարմիր բանակի գերակետ ծառայության բարձրագույն ավագ, միջին և կրտսեր գլխապետական կազմի անձանց և նրանց ընտանիքների հետ հավասար։

Ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի կողմից Բանվորա–գյուղացիական կարմիր բանակի գլխապետական կազմի անձանց պետական ապահովության կարգով թոշակներ և նպաստներ նշանակելու իրավունքները միլիցիայի գործավորների և նրանց ընտանիքների նկատմամբ իրագործում են դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների պետերը*)։

*) Այս հոդվածը փոխվել է ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1932 թ. դեկտեմբերի 2-ի վորոշումով. տես հաջորդ էջերում.

47. Միլիցիայի մնացած գործավորները և նրանց ընտանիքներն ապահովվում են սոցիալական ապահովագրության կարգով*)։

48. Միլիցիայի օպերատիվ-շարային կազմի շարքային գործավորները սոցիալական ապահովագրությունից անկախ պարտադիր կարգով ապահովագրվում են Պետապում ի հաշիվ միլիցիայի մարմինների։ Այդ ապահովագրությունը նախատեսնում է Պետապի կողմից միանվագ ապահովագրական վարձատրություն պաշտոնեական պարտականությունները կատարելու ժամանակ, մահվան կամ հաշմության դեպքում**)։

Այդ վարձատրությունը հաշվի չի առնվում սոցիալական ապահովագրության թոշակ և նպաստ նշանակելու ժամանակ։

49. Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի ու նրանց ընտանիքների անդամների վրա տարածվում են բանվորա-գյուղացիական կարմիր բանակի զինվորական ծառայողների և նրանց ընտանիքի անդամների համար ժողովրդական լուսավորության, հողօգտագործման, գյուղատնտեսության հարկերի և բնակարանների ասպարեզում օրենքներով նախատեսված բոլոր արտոնությունները։

50. Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավորներն օգտվում են բնակարանային վարձի զեղջից այն տներում, ուր այդ վարձը գանձվում է տեղական խորհուրդների կոպարներով։ Զեղջերի չափը սահմանում են տեղական գործադիր կոմիտեները և քաղաքային խորհուրդները։

51. Ընտանիքավոր միլիցիոներների և միլիցիայի ղեկավարական կազմի բնակելի տարածության կարիքը բավարարելու համար տեղական գործադիր կոմիտեները և քաղաքային խորհուրդներն առանձնացնում են իրենց տրամադրության տակ գտնված նոր շինարարության բնակարանային ֆոնդի 5%-ից ոչ պակասը։

---

*) և **) Այս հոդվածներր վերացվել են, վերոհիշյալ նույն որոշումով. տես հաջորդ էջերում։

52. Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավորները պարենային մատակարարման նկատմամբ հավասարեցվում են արդյունաբերական բանվորներին։

ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահի տեղապահ՝
ՅԱ. ՌՈՒԶՈՒՏԱԿ

ԽՍՀ Միության ԺԿԽ Գործերի
կառավարիչ՝ Պ. ԿԵՐԺԵՆՑԵՎ

Մոսկվա - Կրեմլ.
1931 թ. մայիսի ։

Հրապարակված է «ԽՍՀՄ Օրենքների ժողովածու», 1931 թ. № 33, հոդ. 247։

Վ Ր ՈՒՄ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Բանվորա-գյուղացիական միլիցիայի վերակազմակերպման հետեվանքով ԽՍՀ Միության օրենսդրությունը փոփոխելու մասին

Բանվորա-գյուղացիական միլիցիայի վերակազմակերպման հետևանքով, ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝

I

1. 1930 թ. հոկտեմբերի 13՝ խորհուրդների ռայոնական գործադիր կոմիտեների հիմնական կանոնադրությունների (ԽՍՀՄ Օր. Ժ. 1930 թ. № 52, 545 հոդ.) 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Յուրաքանչյուր ռայոնական գործադիր կոմիտեյի կազմում ստեղծվում են հետևյալ բաժինները. ընդհանուր, հողային, ֆինանսական, ինչպես և պլանա-վիճակագրական մաս և ռայոնական բանվորա-գյուղացիական տեսչություն։

Բացի դրանից, յուրաքանչյուր ռայոնական գործադիր կոմիտեյին կից գտնվում են բանվորա-գյուղացիական միլիցիայի ռայոնական վարչությունը, խորհրդային շինարարության հրահանգիչները, բանվորուհու և գեղջկուհու աշխատանքի ու կենցաղի պայմանները բարելավող կոմիտեն և ռայոնական տեսուչները—ա) տեղական տնտեսության և ճանապարհային շինարարության, բ) մատակարարման, գ) ժողովրդական կրթության, դ) առողջապահության, յե) աշխատանքի, զ) սոցիալական ապահովագրության, է) զինվորական գործերի և ը) Ֆիզիքական կուլտուրայի:

Զգալի զարգացած տեղական արդյունաբերություն և զգալի կոմունալ տնտեսություն ունեցող ռայոններում կարող է կազմակերպվել, դաշնակից հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեյի թույլտվությամբ, տեղական տնտեսության և ճանապարհային շինարարության բաժին:

Ծանոթություն. Ռայոններում բանվորա-գյուղացիական տեսչության մարմինների, բանվորա-գյուղացիական միլիցիայի մարմինների և դատական մարմինների կազմակերպումը վորոշվում է ԽՍՀ Միության և դաշնակից հանրապետությունների հատուկ որենսդրությամբ»:

2. 1927 թ. հուլիսի 27՝ զինվորական հանցագործությունների կանոնադրության (ԽՍՀՄ Ո. Ժ. 1930 թ №15, 159 հոդ.) 1 հոդվածի յերկրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Զինվորական հանցանքներ են ճանաչվում նաև պետական նշանակություն ունեցող ձեռնարկությունների և կառուցումների ռազմականացված պահպանության և ռազմականացված հրդեհաշեջ պահպանության վարչա-տնտեսական կազմի և շարային գործավորների, ինչպես նաև բանվորա-գյուղացիական միլիցիայի վարչա-տնտեսական կազմի և ոպերատիվ-շարային գործավորների այն հանցագործությունները, վորոնք ուղղված են ծառայության սահմանված կարգի դեմ»:

II

3. ԽՍՀ Միության Կենտրոնական գործադիր կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1931 թ. փետրվարի 3՝ բանվորա-գյուղացիական միլիցիայի և քրեական հետախուզության գործավորների իրավական ու նյութական դրության վերաբերյալ (ԽՍՀՄ Ո. Ժ. 1931 թ. № 8, 90 հոդ.) վորոշումը ճանաչել ուժը կորցրած՝ նրա հիման վրա հրատարակված Բանվորա-գյուղացիական միլիցիայի կանոնադրությամբ (ԽՍՀՄ Ո. Ժ. 1931 թ. №33, 247 հոդ.):

ԽՍՀ Միության ԿԳԿ Նախագահ՝
Գ. ՊԵՏՐՈՎՍԿԻՅ

ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահի տեղապահ՝
ՅԱ. ՌՈՒԶՈՒՏԱԿ

ԽՍՀ Միության ԿԳԿ Քարտուղարի պ. կ.՝
Ա. ՄԵԴՎԵԴԵՎ

Մոսկվա—Կրեմլ.
1931 թ. հունիսի 3.

«ԽՍՀՄ Որենքների Ժողովածու» 1931 թ., № 36, հոդ. 263:

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ № 011

ՀՍԽՀ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 1932 Թ. ՄԱՐՏԻ 7-ԻՆ.

Բանվորա-գյուղացիական միլիցիայի կանոնադրության հոդ. 40-րդ փոփոխման մասին.

Հայտարարում եմ ճիշտ ու անշեղ ղեկավարվելու և կատարելու համար ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1932 թ. փետրվարի 17-ի վորոշումը ԲԳ Միլիցիայի կանոնադրության 40-րդ հոդվածի փոփոխման մասին.

«ԲԳ Միլիցիայի կանոնադրության» 40-րդ հոդվածը ԽՍՀՄ Որենքն. և Կարգադր. Ժողովածու 1931 թ. № 33 (եջ 594) շարահյուսել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդ. 40. Միլիցիայի օպերատիվ–շարային ու վարչա–տնտեսական կազմի անձինք—

ա) Զինվորական հանցագործությունների.

բ) Պաշտոնեական հանցագործությունների, վորոնք նախատեսված են ՌՍՖԽՀ ՔՐ. Օրենսգրքի 113–րդ, 115–120 հոդվածներով և մյուս միութենական հանրապետությունների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածներով և

գ). Պետական հանցագործությունների նկատմամբ յենթակա յեն զինվորական տրիբունալների, իսկ այլ հանցագործությունների նկատմամբ ընդհանուր դատարանների իրավասության»:

Միլիցիայի Գլխավոր Վարչության պետ՝
Ա. ԴՈՒԼԳԱՐՅԱՆ
Տեսուչ–խորհրդատու՝ Գ. ՀԱԽՈՒՄՅԱՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՀՍԽՀ ՄԻԼԳԼԽՎԱՐՉՈՒԹՅԱՆ 22 ՄԱՐՏԻ 32 Թ. № 011

Բոլոր քաղ. և շրջմիլվարչությունների պետերին

Ի լրումն մեր ս. թ. մարտի 7–ի № 011 շրջաբերականի, վորը վերաբերվում է «Բ. Գ. Մ. կանոնադրության» 40–րդ հոդվածի վերախմբագրությանը, հայտնվում է, վոր պաշտոնեական հանցագործությունները, նախատեսված ՌՍՖԽՀ–ի Քր. Օր. 113, 115 և 120 հոդվածներով, համապատասխանում են ՀՍԽՀ–ի Քր. Օր. 139, 141 և 146 հոդվածներին:

Հիմք՝ ОИМ-ի *ս/թ. 13/III № 195231 գրությունը:*

Միլգլխվարչպետի տեղակալ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տեսուչ–խորհրդատու՝ Գ. ՀԱԽՈՒՄՅԱՆ.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՀՍԽՀ ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

№ 001/7 Մ. Գ. Վ. Բովանդակություն.—*ԲԳ Միլիցիայի շարքային կազմի պետական ապահովության մասին:*

№ 001/7 *4 հունվարի 1933 թ., Յերևան:*

Բոլոր քաղ. և շրջմիլվարչությունների պետերին

Այսու ուղարկվում է ձեզ ի գիտություն և ի ղեկավարություն 1932 թ. 2 դեկտեմբերի վորոշման պատճեն, «Բանվորա–գյուղացիական Միլիցիայի շարքային կազմի պետական ապահովության մասին».

(ԽՍՀՄ Օր. Ժող. 1932 թ. № 80. հոդ. 49):

Միլգլխվարչության պետ՝ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ
Կազմտեսչության պետ՝ ՀԱԽՈՒՄՅԱՆ

Բանվորա–գյուղացիական Միլիցիայի շարքային կազմի պետական ապահովագրության մասին

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝

1. Բանվորա–գյուղացիական Միլիցիայի շարքային կազմի աշխատավորների և նրանց ընտանիքների համար 1933 թ. հունվարի 1–ից սահմանել պետական ապահովություն՝ Բանվորա–գյուղացիական Կարմիր բանակից գերադետ ծառայության կազմի շարքային անձնավորություններին և ընտանիքներին հավասար.

2. Ներկա վորոշման 1–ին հոդվածի համապատասխան, Բանվորա–գյուղացիական Միլիցիայի կանոնադրի մեջ (ԽՍՀՄ Օր. 1931 թ. № 33, հոդ. 247) մտցնել հետևյալ փոփոխությունները.

ա) Կանոնադրի 46–րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«46. Բանվորա-գյուղացիական միլիցիայի գլխապետական և շարքային կազմի աշխատավորները և նրանց ընտանիքներն օգտվում են պետական ապահովությամբ՝ Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի միջին, ավագ և բարձր գլխապետական կազմի անձնավորություններին, գերակետ ծառայության կրտսեր և շարքային կազմի անձնավորություններին և նրանց ընտանիքներին հավասար:

Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի գլխապետական և շարքային կազմի անձնավորություններին պետական ապահովության կարգով կենսաթոշակներ և նպաստներ նշանակելու իրավունքը, որ հանձնված է Ռազմական և Ծովային Ժողովրդական Կոմիսարիատին, միլիցիայի աշխատավորների և նրանց ընտանիքների նկատմամբ կիրառում են դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների պետերը»:

բ) Կանոնագրքերի 47 և 48 հոդվածները՝ վերացնել:

ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահի տեղապահ՝
ՅԱ. ՌՈՒԶՈՒՏԱԿ

ԽՍՀ Միության ԺԿԽ գործերի կառավարիչի
տեղապահ՝ Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ

Մոսկվա—Կրեմլ.
1932 թ. դեկտեմբերի 2.
№ 1179

(ԽՍՀՄ Օր. Ժող. 1932 թ., № 80, հոդ. 490)։

ՔԱՂՎԱԾՔ

ՀՍԽՀ Միլգլխվարչության 9 հուլիսի 1932 թ. № 121 հրամանից

§ 2

Համաձայն ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1931 թ. մայիսի 25-ին հաստատված Բանվորա-գյուղացիական Միլիցիայի կանոնադրության՝ ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հանրապետական ԲԳ Միլիցիայի և Օպերատիվ

Հետախուզ Վարչությունն այսուհետև վերանվանել «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ».

2. ՀՍԽՀ շրջանների և ինքնուրույն քաղաքների միլիցիայի և քրեական հետախուզ. վարչություններն այսուհետև անվանել «այս շրջանի, կամ այս քաղաքի Միլիցիայի Վարչություն»:

3. «Քրեական հետախուզության» և այլ գործածվող տերմինները դուրս հանել ցուցակներից, շտամպներից, կնիքներից, բլանկներից, պաշտոնական գրություններից և այլն:

4. Միլիցիայի բոլոր վարչություններին՝ դեկադային ժամկետին փոխել իրենց ցուցանակները, շտամպներն ու կնիքները և նոր պատվերներ տալու դեպքում գործածել այդ նոր տերմինները:

Միլգլխվարչպետ՝ Ա. ԴՈՒԼԳԱՐՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից
1931 թ. նոյեմբերի 23-ին

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՍԽՀ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՀԱՏՎԱԾ I

Ընդհանուր հիմունքներ

Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչությունը գտնվում է ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին կից և գործում է Բանվորա-գյուղացիական Միլիցիայի բոլոր օրգանների համար սահմանված Բանվորա-գյուղացիական Միլիցիայի կանոնադրության համաձայն, որը հաստատված է ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1931 թ. մայիսի 25-ին (ԽՍՀՄ Օր. Ժող. 1931 թ. № 33, հոդ. 247):

ՀԱՏՎԱԾ II

Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչության խնդիրները

ՀՍԽՀ Ժողկոմխորհի կից Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչության վրա դրվում են՝

ա. Բանվորա-գյուղացիական միլիցիա կազմակերպելու ասպարեզում

2. ԲԳ Միլիցիայի օրգանների կազմակերպումը և նրանց գործունեության ղեկավարումը:

3. ԲԳ Միլիցիայի օրգանների տարատեղման (դիսլոկացիայի) սահմանումը և այդ օրգանների կառուցվածքի ու հաստիքների հաստատումը:

4. ԲԳ Միլիցիայի աշխատակիցների ծառայության կարգի սահմանումը և կարգավորումը:

5. Աշխատանքների քաղաքական կողմի ապահովման միջոցառումների մշակումն ու իրականացումը, ինչպես և ԲԳ Միլիցիայի անձնական կազմի մեջ կարգապահության ամրացումը:

6. ԲԳ Միլիցիայի օրգանների շարային միլիցիական և ռազմական պատրաստման կազմակերպումն ու ղեկավարումը, ինչպես նաև այդ օրգանների մեքենայացման ու մոտորացման համար միջոցառումների կիրառումը:

7. Գերատեսչական Միլիցիայի կազմակերպման ղեկավարությունը և համամիութենական ու հանրապետական նշանակություն ունեցող պետական և հասարակական օրգանների հետ կոլեկտիվ-գեներալ պայմանագրերի կնքումը, այդ օրգանների ձեռնարկների կառուցվածքների և այլ գույքի պահպանման կազմակերպման վերաբերյալ:

8. Բանվորա-գյուղացիական միլիցիայի օրգանների վրա դրված առանձին խնդիրների անմիջական կատարման համար, աշխատավորական լայն մասսաների ներգրավման գործի կազմակերպումն ու ղեկավարումը.

այդ նպատակի համար միլիցիային օժանդակող կամավոր ընկերությունների կազմակերպումը և նրանց գործունեության ղեկավարությունը:

9. ԲԳ Միլիցիայի աշխատավորների իրավական և նյութական-կենցաղային դրությունը բարելավելու համար միջոցառումների մշակումն ու իրագործումը:

բ. Հեղափոխական կարգն ու հասարակական անվտանգությունը պաշտպանելու ասպարեզում

10. Բանվորա-գյուղացիական Միլիցիայի օրգանների գործունեության ղեկավարությունը հեղափոխական կարգն ու հասարակական անվտանգությունը, ինչպես նաև քաղաքացիների անձնական անվտանգությունը և նրանց իրավունքներն ու գույքը պաշտպանելու վերաբերյալ:

11. Պետական հասարակական, ինչպես և հատուկ նշանակություն ունեցող գույքերի զինված պաշտպանության ղեկավարությունը:

12. Տարերային աղետների դեմ պայքարելու համար Բանվորա-գյուղացիական Միլիցիայի օրգանների կողմից կիրառվող միջոցառումների ղեկավարումը:

13. ԲԳ Միլիցիայի խնդիրներին վերաբերող հրապարակված պարտադիր վորոշումների կատարման վերահսկողությունը և տեղական մարմինների կողմից վարչական պատիժներ նշանակելու աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը:

14. ԲԳ Միլիցիայի կողմից բոլոր գերատեսչությունների պաշտոնատար անձանց, նրանց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ, այն դեպքերում յերբ առանձին քաղաքացիներ կամ քաղաքացիների խմբեր հրաժարվում են յենթարկվել այդ պաշտոնատար անձանց օրինական պահանջներին կամ դիմադրություն են ցույց տալիս, նրանց ցույց տրվող օժանդակության ձևերի սահմանումը:

15. Բանվորա-գյուղացիական Միլիցիայի օրգանների կողմից առևտուր և արդյունարաններ բացելու և

կատարելու կարգի վերաբերյալ վարչական կանոնների պահպանման հսկողության իրագործման ղեկավարությունը:

16. Բնակեցված վայրերի բարեկարգման կանոնների, շինարարության, ճանապարհային և այլ աշխատանքների կատարման ժամանակ հասարակական անվտանգությունը, հասարակական սանիտարիայի կանոնները պաշտպանելու հսկողության իրագործման ղեկավարությունը, ինչպես նաև փողոցային երթևեկության կանոնավորման միջոցառումների ղեկավարությունը:

17. ԲԳ Միլիցիայի օրգանների կողմից երթեր և ցույցեր կազմակերպելու առթիվ սահմանված կանոնների կատարման հսկողության ղեկավարությունը:

18. Կամավոր ընկերությունների, հանրային տեսարանների, խաղերի և զվարճալիքների վերաբերյալ կանոնների պահպանման հսկողության իրագործման ղեկավարությունը:

19. Հավատացյալների ժողովների նկատմամբ սահմանված կանոնների պահպանման հսկողության ղեկավարությունը:

20. Հատուկ առարկաներ (վորսորդական զենք, մարտական պիտույքներ և այլն) վաճառելու և համապատասխան օրենքներով նախատեսնված դեպքերում այդ առարկաների արտադրության վերաբերյալ կանոնների պահպանման, ինչպես նաև հացեների սեղանների ու բյուրոների աշխատանքների ղեկավարությունը:

22. Զինվորական ծառայության պարտականություններից խուսափողի դեմ միջոցներ ձեռք առնելու, զինվորական ծառայողների ու զինապարտների հաշվառման ինչպես և ռազմաձիային, ռազմասայլային, ռազմա-նավային, և ռազմա-ավտոտրանսպորտային և այլ պարհակների հաշվառման և այլ միջոցառումների վերաբերյալ զինվորական մարմիններին օժանդակություն ցույց տալու աշխատանքների ղեկավարությունը:

գ. Հանցագործությունների դեմ պայքարելու ասպարիզում

23. Հանցագործությունների դեմ պայքարելու գործի կազմակերպումը և այդ պայքարի անմիջական իրագործումը:

24. Հանցագործությունների և նրանց ընթացքի վրա ազդող գործոնների հաշվառումը և հանցագործությունների դինամիկայի անալիզը:

25. Գիտական-տեխնիկական մեթոդների կիրառման մշակումը և ԲԳ Միլիցիայի օրգանների կողմից հանցագործությունների դեմ մղվելիք պայքարի ասպարիզում, այդ մեթոդների իրագործման հրահանգումն ու ղեկավարությունը, ինչպես նաև գիտական-տեխնիկական էքսպերտիզիայի կատարումը:

26. Քննությունից, դատից և դատավճիռ կատարելուց խուսափող անձանց և հափշտակած գույքի փընտրման աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարումը:

27. Բանվորա-գյուղացիական Միլիցիայի օրգանների կողմից առանց հարկադիր աշխատանքների աքսորի ու վտարման ենթարկվածների վերաբերյալ դատարանների կայացրած դատավճիռների ի կատար ածման ղեկավարությունը, այդ անձանց հաշվառումը և նրանց վերաբերյալ հատուկ վերահսկողություն սահմանելը:

դ. Հասարակական աշխատանքների ասպարիզում

28. ԲԳ Միլիցիայի օրգաններում քաղաքական ապարատի կազմակերպումը, նրա գործունեության ուղղություն տալն ու ղեկավարումը, ինչպես նաև քաղ. աշխատակիցների կադրի պատրաստումը և ԲԳ Միլիցիայի դպրոցական հիմնարկներում քաղդաստիարակչական աշխատանքներ մտցնելը:

29. Ամբողջ քաղ. աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարումը և հատուկ դաստիարակության միջոցով Բանվորա-գյուղացիական Միլիցիայի անձնա-

կան կազմի ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացումը։

30. ԲԳ Միլիցիայի օրգաններում քաղ-բարոյական դրության, կարգապահական քաղաքականության ու պրակտիկայի, ինչպես և այդ օրգաններում յերևան յեկող հանցագործությունների ուսումնասիրությունը և ղեկավարումը։

31. ԲԳ Միլիցիայի օրգաններում հասարակական աշխատանքների բոլոր ձևերի ու տեսակների և ինքնագործունեության ուսումնասիրությունը, կազմակերպումն ու ուղղություն տալը։

32. Բանվորա-գյուղացիական Միլիցիայի օրգանների ստորին մամուլի կազմակերպումն ու ղեկավարությունը։

բ. Կադրերի ապահովման ասպարիզում

33. Բանվորա-գյուղացիական կադրերի ընտրությունը,—հաշվառումն ու բաժանումը և տեղական օրգանների համալրման ղեկավարությունը։

34. ԲԳ Միլիցիայի կադրերի պատրաստման ու վերապատրաստման պլանների և դպրոցական հիմնարկների ցանցի ու շտատների մշակումը։

35. ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության դպրոցական հիմնարկների համալրումը և ԲԳ Միլիցիայի տեղական օրգանների դպրոցական հիմնարկների համալրման ղեկավարությունը։

36. ԲԳ Միլիցիայի դպրոցական հիմնարկների ուսումնական ծրագրերի ու պլանների մշակումը և ծրագրա-մեթոդական աշխատանքների ղեկավարությունը։

գ. Ֆինանսա-նյութական ապահովման ասպարիզում

37. Բանվորա-գյուղացիական Միլիցիայի օրգանների և աշխատավորների զինման, զգեստավորման և տրվող իրերի տեսակների ու նորմաների սահմանումը։

38. ԲԳ Միլիցիայի օրգաններին կենտրոնացած ձևով իրեր հրազենով և զգեստավորում մատակարարելը։

39. ԲԳ Միլիցիայի օրգանները ձիերով համալրելու և կեր մատակարարելու միջոցառումների կիրառումը։

40. ԲԳ Միլիցիայի օրգանների բնակարանային շինարարության հսկողությունն ու ղեկավարումը։

41. Տեղական բյուջեներով ԲԳ Միլիցիայի օրգանների պահպանման համար կոնտրոլ թվեր կազմելը և այդ բյուջեներով նախատեսնված միջոցների կենտրոնացումը։

42. ԲԳ Միլիցիայի տեղական օրգանների նյութական միջոցների նախահաշիվների հաստատումը, այդ միջոցների առանձին վարչական տերիտորիալ միավորների միջև բաժանելու իրավունքի վերապահումով.

43. ԲԳ Միլիցիայի պահպանման համար պետական բյուջեյով նախատեսնված վարկերի տնօրինումը։

44. Բանվորա-գյուղացիական Միլիցիայի աշխատավորների պետական ապահովագրման կիրառումը։

45. ԲԳ Միլիցիայի աշխատավորների ստացած աշխատավարձի ամուր նորմաների սահմանումը։

46. ԲԳ Միլիցիայի աշխատավորների ու նրանց ընտանիքի անդամների համար սահմանված բոլոր արտոնությունների ճիշտ կիրառման հսկողությունը։

ե. Բժշկասանիտարական սպասարկման ասպարիզում

47. Բժշկասանիտարական սպասարկման գործի կազմակերպումը և միլիցիայի աշխատավորների համար կազմակերպված բուժ-հիմնարկների ինչպես նաև հանգստյան տների ընդհանուր ղեկավարությունը։

48. ԲԳ Միլիցիայի հիմնարկներում ու հանրակացարաններում անհրաժեշտ սանիտարական պայմաններ ստեղծելու միջոցառումների կիրառումը։

ՀԱՏՎԱԾ III

Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչության իրավունքները

49. Իրեն վրա դրված խնդիրներն իրականացնելու համար ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչությունն իրավունք ունի—

ա) ԲԳ Միլիցիայի օրգանների գործունեության վերաբերող խնդիրների վերաբերյալ մշակել կառավարության վորոշումների նախագծեր և ներկայացնել ՀՍԽՀ Ժողկոմխորհին:

բ) ԲԳ Միլիցիայի օրգանների գործունեությանը վերաբերող խնդիրների վերաբերյալ կանոնադրքեր, կանոնադրություններ, հրամաններ և հրահանգներ հրապարակել:

գ) ԲԳ Միլիցիայի կադրերի պատրաստման ու վերապատրաստման համար դպրոցական հիմնարկներ կազմակերպել:

դ) Ոպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի համար հաստիքներ սահմանել:

ե) ԲԳ Միլիցիայի օրգանների գործունեության վերաբերյալ խնդիրների շուրջը հրապարակել պաշտոնական ժողովածուներ, տեսություններ և այլ տպագրական նյութեր:

զ) ԲԳ Միլիցիայի տեղական օրգանների պաշտոնատար անձանց գործողությունների և կարգադրությունների վերաբերյալ տրված բողոքները քննել ու լուծել:

է) ԲԳ Միլիցիայի տեղական օրգանների կարգադրությունները դադարեցնել, փոխել ու փոփոխել:

ը) ԲԳ Միլիցիայի գործունեության վերաբերյալ խնդիրների առթիվ խորհրդակցություններ և համագումարներ հրավիրել:

թ) ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության և նրա տեղական օրգանների կառուցվածքը, ինչպես նաև նրա հաստիքները սահմանվում են ԲԳ Միլիցիայի Վարչության պետի կողմից:

ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ԽՍՀՄ Միացյալ պետական քաղաքական վարչության առընթեր բանվորա-գյուղացիական միլիցիայի գլխավոր վարչություն կազմակերպելու մասին

Միութենական հանրապետության Բանվորա-գյուղացիական Միլիցիայի վարչության աշխատանքների ընդհանուր ղեկավարման համար, ամբողջ ԽՍՀ Միության մեջ անցագրային սիստեմն անցկացնելու և անցագրերը գրանցելու համար, ինչպես և այդ գործի անմիջական ղեկավարման համար ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

1. ԽՍՀ. Միության Մ. Պետքաղվարչության առընթեր կազմակերպել Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչություն:

2. Հաստատել Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչության կանոնադրությունը:

3. Առաջարկել միութենական հանրապետությունների կառավարություններին համաձայնեցնել իրենց օրենսդրությունը ներկա վորոշման հետ:

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՁԵ

Մոսկվա — Կրեմլ.
27 դեկտեմբերի 1932 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ՄՊՔՎ ԱՌԸՆԹԵՐ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԽՍՀ Միության ՄՊՔՎ առընթեր Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչությունն իրագործում է միութենական հանրապետությունների Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Վարչության աշխատանքի ընդհանուր ղեկավարությունը և այդ նպատակով.

ա) Վերահսկում է և քննում Բանվորա-գյուղացիական միլիցիայի բոլոր մարմինների գործունեությունը.

բ) Ղեկավարում է ԲԳ Միլիցիայի կադրերի պատրաստումը և վերապատրաստումն ամբողջ ԽՍՀ Միության համար և միլիցիայի շարային կադրերի վերապատրաստումը.

գ) Մշակում է միլիցիայի մարմինների գործունեության վերաբերյալ հարցերի մասին կանոնադրություններ, հրամաններ ու հրահանգներ և կենսագործում է այդ բոլորը միութենական հանրապետությունների Բանվորա-գյուղացիական միլիցիայի վարչությունների միջոցով.

դ) Իրավունք ունի վարչական տուժի յենթարկել միլիցիայի աշխատակիցներին:

ե) ԽՍՀՄ օրենսդրական մարմիններն է մտցնում օրինագծեր, վորոնք վերաբերում են Բանվորա-գյուղացիական Միլիցիայի մարմինների գործունեությանը:

2. ԽՍՀ Միության ՄՊՔՎ առընթեր Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչությունն անմիջորեն ղեկավարում է այն բոլոր աշխատանքը, վոր կապված է անցագրային սիստեմի անցկացման և անցագրների գրանցման հետ:

Այդ նպատակն իրագործելու համար ԽՍՀ Միության ՄՊՔՎ առընթեր Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչությունը—

ա) Ղեկավարում է ոպերատիվ գծով Բանվորա-գյուղացիական Միլիցիայի բոլոր հանրապետական ու տեղական մարմիններին, վորոնք վարում են անցագրային սիստեմն ու անցագրերի գրանցումը:

բ) Նշանակում ու արձակում է անցագրային սիստեմը և անցագրերի գրանցումը վարող Բանվորա-գյուղացիական Միլիցիայի վողջ ղեկավար կազմը:

գ) Վարչական տույժեր է նշանակում Բանվորա-գյուղացիական Միլիցիայի բոլոր աշխատակիցների վրա, վորոնք անմիջորեն վարում են անցագրային գործը և անցագրերի գրանցումը:

դ) Հրապարակում է անցագրային սիստեմի և անցագրային գրանցման հարցերին վերաբերյալ՝ միլիցիայի բոլոր հանրապետական ու տեղական մարմինների համար պարտադիր հրահանգներ ու կարգադրություններ:

3. Սույն կանոնադրության սահմանված 1-ին և 2-րդ հոդվածների բացառությամբ, Բանվորա-գյուղացիական Միլիցիայի հանրապետական վարչությունները գործում են ինքնուրույնորեն, հիմք ունենալով ԽՍՀ Միության Ժողկոմխորհի 1931 թ. մայիսի 25-ի վորոշումը Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի մասին (ԽՍՀՄ Օրենքների Ժողով. 1931 թ. № 33, հոդ. 247):

4. ԽՍՀ Միության ՄՔՊՎ առնթեր Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչության օրինաչափական գործողություններին հսկում է ԽՍՀ Միության Գերագույն Դատարանի դատախազը:

5. ԽՍՀ Միության ՄՊՔՎ առընթեր Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչությունն ունի սահմանված կարգով հաստատված ինքնուրույն նախահաշիվ:

6. ԽՍՀ Միության ՄՊՔՎ առընթեր Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչության

պետին նշանակում է ՄԳԲՎ կոլեգիայի առաջադրությամբ ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը:

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ
ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)
ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Ա. ՑԵՆՈՒԿԻՁԵ

Մոսկվա—Կրեմլ.
27 դեկտեմբերի 1932 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչության քաղբաժնի մասին

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Քաղբաժնի կոչումն է՝ ղեկավարել բոլոր քաղաքական, կուլտ-կրթական և կուս-դաստիարակչական աշխատանքները, ամրապնդել ԲԳ Միլիցիայի կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունները, բարելավել նրանց աշխատանքներն ու բարձրացնել ԲԳ Միլիցիայի քաղաքական-բարոյական վիճակը:

2. Քաղբաժինը կենսագործում է իր ֆունկցիաները վերադաս քաղաքական մարմնի ղեկավարությամբ համապատասխան կուսկոմիտեների (մարզկոմների, յերկրային կոմիտեների, ազգային կուսկոմիտեների կենտկոմների) դիրեկտիվների և ԲԳ Միլիցիայի տվյալ վարչության պետի կարգադրությունների համաձայն:

3. Քաղբաժնի գլուխն է կանգնած պետը, որը ԲԳ Միլիցիայի գլխավոր վարչության պետի քաղմասի օգնականն է հանդիսանում և որին նշանակում ու հեռացնում է պաշտոնից ՄԳԲՎ Միլիցիայի Գլխավոր

Տեսչությունը՝ տվյալ վարչության պետի առաջադրմամբ և ՄԳԲՎ կադրերի բաժնի ու համապատասխան կուսկոմիտեների համաձայնությամբ:

II. ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Քաղբաժինն ունի հետևյալ ստորաբաժանումները.

ա) Կազմակերպչական-քաղաքական բաժանմունք.

բ) Ագիտացիոն-պրոպագանդիստական բաժանմունք.

գ) Միլիցիային օժանդակ բրիգադի աշխատանքների բաժանմունք:

2. Քաղբաժինների բաժամունքների գլուխն են կանգնած բաժանմունքների պետերը, վորոնց նշանակում, փոխադրում և հեռացնում է վարչության պետը, բաժինների առաջադրմամբ և համապատասխան ՄԳԲՎ կադրերի բաժնի համաձայնությամբ:

3. Կազմքաղբաժանմունքն ունի հետևյալ ֆունկցիոնալ խմբակները.

ա) կազմտեսչական և

բ) քաղինֆորմացիոն:

4) Ագիտպրոպբաժանմունքն ունի հետևյալ ֆունկցիոնալ խմբակները.

ա) կուլտպրոպագանդայի և

բ) ագիտմասսայական:

Ծանոթություն.—Նայած քաղաշխատանքի ծավալին, կարելի յե կազմակերպել նաև լրացուցիչ խմբակներ, որինակ՝ կուս-կոմյերիտական աշխատանքի, աշխատանքի փորձի հաշվառման և այլն:

III. ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

1. Քաղբաժնի կազմակերպչական-քաղաքական բաժամունքի վրա դրվում են հետևյալ պարտականությունները.

Կազմտեսչական խմբակ.

ա) Տվյալ վարչության կազմի մեջ մտնող քաղմարմինների աշխատանքների կազմակերպումը, ղեկավա-

րումը և հսկումը, քաղաշխատանքը տանելու պլանների և ցուցումների մշակումն ու կազմումը։

բ) Քաղկազմի պատրաստման և վերապատրաստման հարցերի նաև նույն կազմի նշանակման, տեղափոխման և հեռացման հարցերի մշակումը կադրերի բաժնի հետ միասին։

գ) Քաղաքական և քաղ-լուսավորական աշխատանքի մոբիլիզացիոն հարցերի մշակումը՝ ինչպես մոբիլիզացիայի ընթացքում, նույնպես և պատերազմի ժամանակ, կցված կոնտինգենտի ուսումնասիրությունը, քաղմարմինների ստուգումն ու հրահանգավորումը՝ մոբիլիզացիոն հարցերի վերաբերմամբ։

դ) Կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարումը՝ վերադաս քաղմարմինների և համապատասխան կուսկոմիտեների դիրեկտիվների ու ցուցումների հիման վրա։

յե) ԲԳ Միլիցիայի մարմիններում կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների ամրապնդումը, կուս-կոմյերիտական ուժերի դասավորումը, կուս-կոմյերիտական միջավայրի ուսումնասիրությունը և նրա աճման կանոնավորումը, ԲԳ Միլիցիայի մարմիններում դասակարգայնորեն անհարազատ և հանցավոր տարրերի հայտաբերումը և նրանց հեռացումը, նախազգուշացման և առողջացման միջոցառումների մշակումը։

զ) Միլիցիայի օպերատիվ աշխատանքի քաղաքական ապահովման հարցերի վերաբերյալ միջոցառումների և գործնական ցուցումների մշակումը․

է) ԲԳ Միլիցիայի մարմիններում քաղաքական ինֆորմացիայի, քաղաքական, կուլտ-կրթական և կուսդաստիարակչական աշխատանքի դրվածքի տեսչությունն ու հրահանգավորումը, քաղաշխատանքի վիճակի մասին քաղտեսությունների կազմումը․

թ) Վերադաս քաղաքական մարմինների դիրեկտիվների հիման վրա ԲԳ Միլիցիայի մարմիններում կուսակցական-քաղաքական և կուսակցական-լուսավորության աշխատանքների հարցերի վերաբերյալ զանա-

զան քաղաքական խորհրդակցություններ նախապատրաստելն ու անցկացնելը, ԲԳ Միլիցիայի մյուս բաժինների և վարչությունների գծով հրավիրվող խորհրդակցություններին մասնակցելը․

ժ) Համապատասխան բաժինների կողմից հաստիքային հարցերի մշակման մասնակցելը՝ քաղ-լուսվարական կազմի և կուս-քաղլուսվարական աշխատանքի ֆինանսավորման հարցերի գծով․

ժա) Մասնակցել միլիցիայի կենցաղի և ծառայության հարցերի մշակմանը․

ժբ) Մասնակցել նոր կազմակերպումների և կոմպլեկտավորման հարցերի մշակմանը և անձնական կազմի ընութագրերն ու վկայագրերը կազմելու․

ժգ) Ստորադրյալ մարմինների քաղլուս կազմի վկայագրերի կազմումը․

ժդ) Վերոհիշյալ հարցերին վերաբերյալ աշխատանքի փորձի ուսումնասիրությունն ու ընդհանրացումը․

ժյե) Վերադաս քաղմարմինների և համապատասխան կուսակցական ու արհեստակցական կազմակերպությունների դիրեկտիվների կենսագործման վերահսկողությունն ու ստուգումը։

Քաղինֆորմացիոն խմբակ

ժզ) Անձնական կազմի քաղաքական-բարոյական վիճակին վերաբերյալ քաղինֆորմացիայի կազմակերպումը, ինֆորմացիոն և վիճակագրական տվյալների հաշվառումն ու սիստեմավորումը, քաղաքական-բարոյական վիճակի և նրա կանոնավորման բոլոր հարցերի վերաբերյալ տեսությունների և զեկուցումների կազմումը, տեղերից ստացված ինֆորմացիոն նյութերի հիման վրա նախազգուշական միջոցառումների մշակումը․

ժէ) Կարգապահական պրակտիկայի ուսումնասիրությունն ու կանոնավորումը․

2․ Քաղբաժին ագիտացոն-պրոպագանդիստական բաժանմունքի վրա դրվում են հետևյալ պարտականությունները․

Կուլտ-պրոպագանդայի խմբակ

ա) Միլիցիայի անձնական կազմի Մարքս-լենինյան դաստիարակության, հանրակրթական և կուլտուրական մակարդակի բարձրացման, նույնպես և հատուկ դաստիարակության կազմակերպումն ու ղեկավարումը.

բ) Վերադաս քաղմարմնի ծրագրի ու դիրեկտիվների համաձայն քաղպարապմունքներն անցկացնելու կազմակերպումը և ղեկավարումը.

գ) Միլիցիայի մարմիններում միլիցիական մամուլի և միլթղթակցային աշխատանքի ղեկավարման կենսագործումը, գեղարվեստական գրականության, պլակատների և այլ հրատարակությունների կազմակերպումը.

դ) Տվյալ վարչության մեջ մտնող ԲԳ Միլիցիայի մարմիններում կուսլուսավորության ցանցի աշխատանքի ղեկավարումը և հսկումը.

ե) Քաղպարապմունքների (սեմինարների) խմբակավարների պատրաստության կազմակերպումն ու ղեկավարումը.

զ) ԲԳ Միլիցիայի դպրոցների համար ընդհանուր քաղաքական առարկաների ծրագիր կազմելու դիրեկտիվների մշակումը, կադրերի բաժնի հետ միասին.

ը) Պետկազմի ընթացիկ քաղպատրաստության կազմակերպումն ու ղեկավարումը.

թ) Գյուղատնտեսության հետ կապված միլիցիական կազմը կոլտնտեսությունների մեջ ներգրավելու աշխատանքի ղեկավարումը.

ժ) ԲԳ Միլիցիայի աշխատավորների ընտանիքները հասարակական-քաղաքական կյանքի մեջ ներգրավելու աշխատանքի կազմակերպումը և ղեկավարումը, կուսպրոֆկազմակերպությունների հետ միասին.

Ագիտ-մասսայական խմբակ

ժա) Միլիցիայի մարմիններում ագիտ-մասսայական ու քաղլուսավորական աշխատանքի ղեկավարումը, միլիցիական թանգարանների կազմակերպումն ու աշխատանքին մասնակցելը.

ժբ) Միլիցիայի աշխատավորների մեջ տնտեսական-քաղաքական կամպանիաների ղեկավարումը և ընդհանուր տնտեսական ու քաղաքական կամպանիաներին միլիցիական կազմի մասնակցության ապահովումը.

ժգ) Միլիցիական մասսաների մեջ ռացիոնալիզատորական միջոցառումների ու գյուտերի մասսայականացումը և կյանքում դրանց ճիշտ կիրառման հսկողությունը.

ժդ) ԲԳ Միլիցիայի մարմիններում պրոֆկազմակերպությունների աշխատանքի ղեկավարումը.

ժե) Սոցմրցակցության ու հարվածայնության կազմակերպումը, վերադաս քաղմարմնի դիրեկտիվների համապատասխան։ Սոցմրցակցության վիճակի հայտաբերումն ու հաշվառումը։

ժզ) Կամավոր. հասարակական կազմակերպությունների ագիտպրոպաշխատանքի բովանդակության ու ձևերի կանոնավորումը.

ժէ) Մասնակցել ակումբների, գրադարանների, լենինյան անկյունների և այլ անձնական կազմի ու ֆինանսավորման հարցերի մշակմանը.

ժը) Տվյալ վարչության կազմի մեջ մտնող ԲԳ Միլիցիայի մարմիններին քաղլուսավորական գույքի մատակարարման կարգի մշակումը.

ժթ) ԲԳ Միլիցիայի մարմինների համար ակումբային աշխատողների, խմբակների ղեկավարների և գրադարանապետների պատրաստության կազմակերպումը, կադրերի բաժնի հետ միասին.

3. Միլիցիայի օժանդակ բրիգադների աշխատանքների բաժանմունքի վրա դրվում են հետևյալ պարտականությունները։

ա) Բրիգադի աշխատանքի ձևերի և մեթոդների մշակումը, տեղական պայմանների համեմատ և վերադաս քաղմարմնի դիրեկտիվների համաձայն.

բ) Բրիգադի անդամների մեջ տարվող քաղաքական-դաստիարակչական աշխատանքի ղեկավարումը.

գ) Բրիգադի անձնական կազմի ուսումնասիրությունը, աճման և քաղաքական-բարոյական վիճակի

կանոնավորումը, բրիգադի մեջ նոր անդամներ ներգրավելու աշխատանքի կազմակերպումն ու ղեկավարումը.

գ) Միլիցիայի ոժանդակող բրիգադի կողմից տարվող գործնական աշխատանքի հաշվառումն ու սիստեմավորումը և դրա վիճակի մասին հաշվետվությունների ու զեկուցումների կազմումը:

IV. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՏՎՅԱԼ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Քաղբաժինն իր գործնական աշխատանքը կապում է վարչության մյուս բաժինների աշխատանքի հետ, նրանցից լիակատար ինֆորմացիա ստանալով աշխատանքի բոլոր բնագավառների վերաբերյալ ընձեռնված միջոցառումների մասին:

V. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԵՏ

ԲԳ Միլիցիայի քաղմարմինների փոխհարաբերությունը տեղական կուսկազմակերպությունների հետ սահմանվում է հետևյալ հիմունքներով.

ա) Կուսկազմակերպությունների անմիջական ղեկավարությունը կենսագործվում է ՀամԿ(բ)Կ համապատասխան մարզային (յերկրային) կոմիտեների և ազգային կոմկուսակցությունների կենտկոմների, կուսակցության քաղկոմների և շրջկոմների կողմից միլիցիայի Քաղբաժինների, Քաղմասերի և Քաղտեսուչների միջոցով, վորոնք հանդիսանում են համապատասխան կուսակցական կոմիտեների աշխատանքային ապարատը.

բ) Քաղբաժինն իրավունք ունի անմիջորեն դիմել համապատասխան մարզային (յերկրային) կուսկոմիտեներին և ազգային կոմկուսակցությունների կենտկոմներին, առաջադրություններ և զեկուցումներ ներկայացնելով կուսակցական ու կոմյերիտական աշխատանքի նախապատրաստության ու ծավալման հարցերի մասին, ԲԳ Միլիցիայի մարմինների առանձնահատկություններին համապատասխան.

գ) Քաղբաժինը, համապատասխան մարզային (յերկրային) կուսկոմիտեների և ազգային կոմկուսակցությունների կենտկոմների թույլտվությամբ, իրավունք ունի բջիջների քարտուղարների խորհրդակցություն հրավիրել՝ միլիցիայի մարմիններում աշխատանքի դրվածքի հետ կապված հարցերը քննելու ու լուծելու համար.

դ) Քաղբաժինը հետազոտում է ԲԳ Միլիցիայի մարմինների ստորին կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունները, հետազոտությունների հետևանքների մասին զեկուցելով տեղական կուսակցական կոմիտեներին.

յե) Կուսկազմակերպությունն աջակցություն է ցույց տալիս հրամանատարությանը և քաղմարմիններին նրանց կողմից տարվող աշխատանքի ընթացքում:

Քաղբաժինների պետերի իրավունքներն ու պարտականությունները

Քաղբաժնի պետը յենթարկվում է ԲԳ Միլիցիայի համապատասխան վարչության պետին (միանձնյա ղեկավարին) և նրա քաղմասի ոգնականն է հանդիսանում.

բ) Քաղբաժնի պետն անմիջորեն կենսագործում է տվյալ վարչության կազմի մեջ մտնող ԲԳ Միլիցիայի մարմինների բոլոր կուսակցական-դաստիարակչական և կուլտ-կրթական աշխատանքների ղեկավարումը, լիակատար պատասխանատվություն է կրում միլիցիական կազմի քաղաքական-բարոյական վիճակի և մարտունակության, նույնպես և կուսակցական-քաղաքական աշխատանքի դրվածքի համար: Քաղբաժնի պետը պետք է իրազեկ լինի տվյալ վարչության ամբողջ ոպերատիվ, ուսումնական-շարային և վարչատնտեսական աշխատանքների մասին.

գ) Քաղբաժնի պետը ստորագրում է բոլոր դիրեկտիվներն ու շրջաբերականները, վորոնք անմիջորեն վերաբերում են վարչության կազմի մեջ մտնող միլիցիայի մարմինների քաղաքական կյանքին.

դ) Քաղբաժնի պետը կազմում է տվյալ վարչության քաղաշխատողների վկայագրերը, գոյություն ունեցող կանոնադրության համաձայն.

յե) Քաղբաժնի պետին կարգապահական իրավունքներ են վերապահվում՝ տվյալ վարչության անձնական կազմի վերաբերյալ կարգապահական կանոնադրքի համապատասխան.

զ) Քաղբաժնի պետը պետք է համապատասխան մարզային, յերկրային կուսկոմիտեներում և ազգային կոմկուսակցությունների կենտկոմներում իր ժամանակին դնի այն բոլոր հարցերը, վորոնք կապ ունեն տվյալ վարչության ԲԳ Միլիցիայի մարմինների քաղաշխատանքի վիճակի հետ:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ԲԳՄԳՎ պետի տեղակալ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
15 դեկտեմբերի 1932 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՍԽՀ ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՆԵՐԻ

1. Բողոքների բյուրոյի նպատակները

1. Բողոքների Բյուրոյի նպատակն է պայքար մղել միլիցիայի աշխատակիցների բյուրոկրատիզմի, քաշքշուկների և անուշադիր վերաբերմունքի դեմ, դեպի աշխատավորների կարիքներն ու հարցադիմումները և միլիցիայի հեղինակությունը վարքաբեկող այլ թերությունների դեմ, իրագործելով այդ նպատակները բանվորական և գյուղացիական լայն մասսաների ներգրավման միջոցով:

2. Բողոքների Բյուրոն բողոքների ու հայտարարությունների քննության աշխատանքների մեջ չպետք է փոխարինի միլիցիայի տվյալ օղակի պետին, վորին վերապահված է հարցի քննությունն ըստ էության, այլ միայն

նպատակ ունի վերացնելու առանձին աշխատակիցների կողմից ցուցաբերվող քաշքշուկը և բյուրոկրատիզմը:

3. Այն բոլոր դեպքերում, յերբ աշխատավորների, նաև խորհրդային ու հասարակական կազմակերպությունների բողոքների կոնկրետ լուծման ժամանակ հարց է ծագում՝ միլիցիայի ապարատի թերությունների պատճառների ուսումնասիրման և նրանց վերացման համապատասխան միջոցառումների անհրաժեշտության մասին, Բողոքների Բյուրոն ամբողջ նյութը հանձնում է միլիցիայի համապատասխան բաժիններին, իսկ վորտեղ այդպիսիներ չկան՝ վարչության պետին:

II. Բողոքների բյուրոյի իրավունքները

4. Բողոքների Բյուրոն յուր աշխատանքներում ղեկավարում է սույն կանոնադրությամբ վերապահված կանոններով:

5. Այն բողոքներն ու դիմումները, վորոնք ներկայացվում են բողոքողների կողմից, անձնապես կամ փոստի միջոցով, և իրենց բնույթով յենթակա յեն դատական մարմինների, դատախազության, հարկային, հողային և այլ հիմնարկների քննությանը և չեն կրում բյուրոկրատիզմ, քաշքշուկ և այլ նման թերություններ բնորոշող նշաններ՝ Բողոքների Բյուրոն այդ չի ընդունում յուր գործարկության մեջ, այլ ուղղում է համապատասխան մարմիններին:

Ծանոթություն.— Այն դեպքում, յերբ բողոքների ու դիմումների մեջ բերված են բյուրոկրատիզմի, քաշքշուկի և այլ նման բնույթի փաստեր, ապա Բողոքների Բյուրոն այդ դիմումներն ուղղում է համապատասխան մարմիններին միայն հատուկ քննությունից հետո, կցելով նրանց իր պատճառաբանած յեզրակացություններն ու առաջարկությունները:

6. Միլիցիայի բարձրադաս մարմինների և նրանց աշխատակիցների գործողությունների ու կարգադրությունների դեմ բողոքներն ուղղվում են վերջիններին

առընթեր Բողոքների Բյուրոյին հանդերձ բոլոր սպառիչ նյութերով:

7. Բողոքների Բյուրոյին ներկայացվող բողոքներն ու դիմումներն ազատ են դրոշմային ու դիվանական տուրքերից:

8. Յեթե կատարված քննության հետեվանքով չի հաստատվում բողոքողի հայտարարումները, ապա Բողոքների Բյուրոն դադարեցնում է տվյալ գործը, իրազեկ դարձնելով բողոքողին այդ մասին:

III. Բողոքների Բյուրոյի կապը դատախազության ու դատական մարմինների հետ

9. Յեթե բողոքների և դիմումների հիման վրա հայտաբերվեն միլիցիայի աշխատակիցներից վորեվե մեկի մասին հանցապարտ գործողությունների նշաններ, վորոնք նախատեսնված են ՀՍԽՀ Քրեական Օրենսգրքով և յեթե այդ նշանները հայտաբերվեն կատարված քննության ընթացքում կամ հետեվանքով, ապա Բողոքների Բյուրոն այդպիսի գործերն ուղղում է միլիցիայի տվյալ մարմնի պետին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար, ընդամին չդադարեցնելով բյուրոկրատիզմի և քաշքշուկի դեմ պայքարին վերաբերյալ յուր աշխատանքը:

10. Յեթե բողոքներում և դիմումներում յերեվան են գալիս այնպիսի նշաններ, վորոնք վկայում են ընդհակառակը բողոքողների կողմից կատարված հանցավոր գործողությունների մասին կամ յեթե այդ նշանները հայտնաբերվեն կատարվող քննության ընթացքում կամ հետեվանքով,—ապա Բողոքողների Բյուրոն այդպիսի գործերն ուղղում է դատախազության համապատասխան մարմիններին, պատշաճ միջոցներ ձեռնարկելու համար:

IV. Աշխատանքի յեղանակները

11. Բողոքների Բյուրոն ընդունում է բողոքներ թե՛ գրավոր և թե՛ բանավոր ձևով: Բանավոր բողոքներն արձանագրվում են և ապա կարդացվում բողոքող-

ներին, վորոնք ինքնաձեռագիր ստորագրությամբ հաստատում են իրենց ասածները:

Յեթե բողոքողն անգրագետ է, արձանագրողն այդ մասին նշանակում է դիմումի մեջ:

12. Ներկայացված բողոքողների ու դիմումների
անչությամբ Բողոքների Բյուրոն քննությունների
յուր աշխատանքը կատարում է աշխատավոր լայն մասսաների անմիջական մասնակցությամբ, այն է՝ գյուղե-
րում—գյուղթղթակիցների, կոլխոզային ակտիվիստնե-
րի, բրիգադիրների և այլն, իսկ քաղաքներում՝ պրոֆ-
միությունների, բանթղթակիցների, բրիգադիրների և
այլն. կատարված քննությունների մասին տեղի յեն ու-
նենում ինֆորմացիոն զեկուցումներ համապատասխան
ժողովներում և խորհրդակցություններում:

13. Բողոքների Բյուրոն աշխատանքի կապ է հաստա-
տում բանգյուղթղթակցական կազմակերպություն-
ների, լրագրների խմբագրությունների հետ և օգտագոր-
ծում է չհրապարակված հոդվածները, լրագրներում լույս
տեսած հոդվածները, վորոնք վկայում են միլիցիայի
տվյալ մարմնի արհամարական վերաբերմունքի մա-
սին դեպի աշխատավորները, բյուրոկրատիզմի, քաշ-
քշուկի և թերությունների մասին:

14. Բողոքների Բյուրոն կազմակերպում է միլիցիայի
տվյալ մարմնի, պատի թերթում տեղեկությունների
սիստեմատիկ մատակարարումն յուր աշխատանքի մա-
սին, նշելով հաշվետու տարվա ընթացքում ստացված
ամենաբնորոշ ու խոշոր բողոքները, առաջարկված
կոնկրետ միջոցառումներն ու ստացված հետևանքները:

15. Բողոքների Բյուրոն մտած բոլոր բողոքներն ու
դիմումները պետք է քննվեն 3-ից մինչև 7-որ ժամանա-
կամիջոցում, յեթե նրանց լուծման համար անհրաժեշտ
չե տեղեկանքներ հավաքել, հետազոտումներ կատարել,
ճանապարհվելով տեղերը կամ հարցապնդումներ ուղղե-
լով ուրիշ քաղաքներ, շրջաններ և այլն:

16. Բողոքների Բյուրոն բողոքներն ու դիմումները
քննելուց և վճիռը կայացնելուց յերեք որից վոչ ուշ տե-
ղեկացնում է հետեվանքների մասին բողոքողին:

17. Եթե բողոքողը դժգոհ է բողոքողների բյուրոյի կայացրած վճռից, նա իրավունք ունի 7 օրվա ընթացքում բողոքարկել միլիցիայի, տվյալ մարմնի, պետին վերադաս մարմնի բողոքների բյուրոյին:

V. Բողոքների բյուրոյի կազմը, հաշվետվությունն ու գործավարությունը

18. Բողոքների բյուրոյի կազմը բաղկացած է միլիցիայի տվյալ մարմնի ներկայացուցչից (պետի նշանակումով), կոմբջիջի քարտուղարից և պրոֆկոմի նախագահից:

19. Բողոքների բյուրոյի նիստերը կայանում են ամիսը յերկու անգամից վոչ պակաս: Զեկուցում է քննություն կատարողը կամ բողոքների բյուրոյի անդամներից մեկը:

20. Բողոքների բյուրոյի վճիռներն ուժի մեջ են մտնում, յերբ դրանց արդեն հաստատում է միլիցիայի, տվյալ մարմնի, պետը:

21. Տեղում բողոքների բյուրոյի աշխատանքներն անմիջորեն ղեկավարում է միլիցիայի տվյալ մարմնի պետը սույն կանոնադրության համաձայն:

22. Բողոքների բյուրոներն իրենց աշխատանքի յեռամսյա հաշվետվությունն են ներկայացնում ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության առընթեր բողոքների բյուրոյին:

ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության
Կազմտեսչության պետ՝ Գ. ՀԱԽՈՒՄՅԱՆ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ԲԳՄ Գլխվարչպետի
Տեղակալ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
15 դեկտեմբերի 1932 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՍԽՀ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ

1. Իրավաբանական բյուրոն կազմակերպվում է ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության առընթեր:

2. Իրավաբանական բյուրոն իրագործում է յերկու հիմնական ֆունկցիա.

ա) ընթացիկ որենսդրության մասսայականացումը միլիցիական կազմի մեջ.

բ) որենսդրական ակտերին վերաբերյալ հարցերի կոնսուլտացիա:

3. Իրավաբանական բյուրոյի կազմի մեջ են մտնում.—

ա) ԲԳՄԳՎ կազմտեսչության պետը.

բ) ԲԳՄԳՎ վարչական հսկողության և արտաքին ծառայության բաժնի պետը.

գ) Միլիցիայի աշխատակիցների գործերը քննող ավագ տեսուչը.

դ) Տրիբունալի քննիչը.

յե) Քաղաքի դատախազը.

զ) Դատապաշտպանության կոլլեգիայի նախագահը.

Ծանոթություն.— Իրավաբանական բյուրոյին իրավունք է վերապահվում անհրաժեշտ դեպքերում լայնացրած խորհրդակցություններ հրավիրել, մասնակցությամբ դատարանի աշխատակիցների, դատախազության նաև դատապաշտպանության կոլեկտիվի անդամների:

4. Իրավաբանական բյուրոն գործում է համաձայն

նախապես մշակված և կենտրոնական դատախազության ու ԲԳՄԳՎ պետի հետ համաձայնեցրած ծրագրի։

5. Իրավաբանական բյուրոյին իրավունք է վերապահվում ԲԳՄԳՎ կազմտեսչության վավերացումով իրավաբանական խմբակներ կազմակերպել ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի բոլոր տեղական օղակներում։

6. Սույն կանոնադրության յերկրորդ կետով նախատեսնված նպատակներն իրագործելու համար իրավաբանական բյուրոն.—

ա) Սիստեմատիզացիայի յե յենթարկում ԲԳ Միլիցիայի մարմինների իրավաբանական ու վարչական գործնականությունից բղխող հարցերին վերաբերյալ ընթացիկ օրենսդրությունը։

բ) Տալիս է ԲԳՄԳՎ բաժինների և միլիցիայի պաշտոնատար անձերի հարցադիմումներին տեղեկանքներ, բանավոր ու գրավոր յեզրակացություններ գործող օրենսդրության բնագավառից։

գ) Մշակում է օրինական տեսակետից ԲԳՄԳՎ կազմտեսչության կողմից առաջադրված առանձին հարցերը։

դ) Կազմակերպում է միլիցիական կազմի համար զրույցներ ու դասախոսություններ ընթացիկ օրենսդրության առանձին հարցերի մասին։

7. Իրավաբանական բյուրոյի տեխնիկական սպասարկումը կազմտեսչության միջոցով դրվում է ԲԳՄԳՎ ընդհանուր բաժնի վրա։

8. Իրավաբանական բյուրոն պարտավոր է կազմտեսչության նշանակված ժամկետներին պարբերաբար ներկայացնել զեկուցագրեր իր գործունեության մասին.

9. Իրավաբանական բյուրոյի նախագահն ու անդամները բյուրոյում իրենց աշխատանքը կատարում են առանց վարձատրության, հասարակական բեռնվածության կարգով։

ԲԳՄԳՎ Կազմտեսչության պետ՝ Գ. ՀԱԽՈՒՄՅԱՆ

Բ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Հաստատված է ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից 1932 թ. հոկտեմբերի 13-ին)

ՀՍԽՀ Բանվորա-գյուղացիական Միլիցիայի քաղաքային վարչության

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությունը շրջանի կազմի մեջ չմտնող և ինքնուրույն վարչատնտեսական միավոր հանդիսացող քաղաքի սահմաններում իրականացնում է հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության պաշտպանությունը, քրեական հանցագործության դեմ պայքարը, պետական ու հասարակական գույքի պահպանությունը, նաև քաղաքացիների անձնական անվտանգության ու նրանց գույքի պաշտպանությունը։

ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությունների յենթակա շրջանային տեսուչների կամ միլիցիայի միջոցով իրականացնում է նաև քաղաքին միացված գյուղական վայրերի սպասարկումը։

2. ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությունն անմիջականորեն յենթարկվում է ԲԳ Միլիցիայի Գըլխավոր Վարչությանը, գործում է նրա ղեկավարությամբ և նրա առաջ պատասխանատու յե իր սպասարկած վայրի միլիցիայի դրության ու աշխատանքի համար։

ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությունը հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության պաշտպանության վերաբերյալ ընդհանուր ձեռնարկումների ասպարեզում ղեկավարվում է նաև քաղաքային խորհրդի ցուցմունքներով։

3. ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությունը գործում է ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1931 թվի մայիսի 25-ին հաստատած «Բանվորա-գյուղացիական Միլիցիայի կա-

նոնադրության» (ԽՍՀՄ Օրենք. ու Կարգ. Ժողովածու, 1931 թ. № 33, հոդ. 247), ներկա կանոնադրության նաև ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության, հրատարակված կանոնների, հրամանների, հրահանգների և այլ կարգադրությունների համաձայն։

4. ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությանն անմիջականորեն յենթարկվում են միլիցիայի քաղաքային բաժանմունքները։

II. ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչության իրավունքները ու պարտականությունները

5. Միլիցիայի կազմակերպչական ապարիզում ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությունը—

ա) ԲԳ Միլիցիայի գլխավոր վարչության ցուցումների համաձայն՝ կազմակերպում է քաղաքի ու յենթակա շրջանների միլիցիայի մարմինների ցանցը.

բ) Իրականացնում է ստորադաս և գերատեսչական միլիցիայի աշխատանքի անմիջական գործառնական ղեկավարությունը.

գ) Շահագրգռված մարմինների հետ կնքված պայմանագրերի համաձայն կազմակերպում է գերատեսչական միլիցիան, ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչության կողմից սպասարկվող վայրում, գույքը պահպանելու համար, նաև հիշյալ հիմնարկների ու ձեռնարկությունների վայրում գտնվող պետական, կոոպերատիվ ու հասարակական հիմնարկների ու ձեռնարկությունների տերիտորիայի սահմաններում հեղափոխական կարգն ու հասարակական անվտանգությունը պաշտպանելու համար։

դ) Անմիջապես ղեկավարում է միլիցիայի քաղաքային բաժանմունքների աշխատանքները, սպասարկվող գյուղական վայրերի սահմաններում, ղեկավարում է գյուղական կատարածուների կազմակերպումը և իրականացնում է նրանց աշխատանքի բարելավման ու ամրապնդման վերաբերյալ ձեռնարկումները.

ե) Աշխատավոր լայն մասսաներին ներգրավում է

միլիցիայի մարմինների վրա դրված առանձին գործողությունները կատարելու մեջ. այդ նպատակով կազմակերպում է միլիցիային օժանդակող բրիգադներ, անմիջականորեն ղեկավարում է նրանց գործունեությունը, գործառնական նպատակներով օգտագործում է այդ բրիգադի անդամներին, նաև ղեկավարում է միլիցիայի ստորադաս բաժանմունքների ու շրջանային տեսուչների կողմից օպերատիվ նպատակով բրիգադի անդամներին օգտագործելու աշխատանքը.

զ) Կազմակերպում և անմիջաբար ղեկավարում է միլիցիայի անձնական կազմի շարային ու հրաձգա—տակտիկական, նաև հատուկ ու ֆիզիկական պատրաստումն ու վերապատրաստումը։

է) Կենսագործում է միլիցիայի անձնական կազմի մեջ զինվորական կարգապահությունը, ամրացնելու նաև միլիցիայի ստորադաս բաժանմունքներում և շարային մասերում ներքին ծառայությունն ու ներքին կարգավորությունն ամրացնելու վերաբերյալ ձեռնարկումներ.

ը) Պարբերաբար կազմակերպում է միլիցիայի բաժանմունքների ու շարային մասերի ղեկավար կազմի և վարչության այլ աշխատողների, նաև սպասարկվող գյուղական վայրերի, շրջանային տեսուչների, հրահանգային խորհրդակցություններ, կազմակերպում է նրանց աշխատանքի հաշվառումն ու ստուգումը,

թ) Սահմանված կարգով ապահովում է միլիցիայի տեսակ-աշխատավորների բավարարումը վորոշված տեսակներով զինասարքով ու ռազմամթերքով, նաև հսկում է նրանց կանոնավոր պահպանությանը.

ժ) Կենսագործում է միլիցիայի աշխատավորների աշխատանքի պայմանները և նյութական կենցաղային դրությունը բարելավող ձեռնարկումները, կազմակերպում է հանրակացարաններ, ակումբներ, լենանկյուններ, ճաշարաններ և այլն, նաև հսկում է միլիցիայի աշխատավորներին վերապահված արտոնությունների ու առանձնաշնորհումների ճշտիվ կատարումը.

ի) Ձիերի կազմով ապահովում է միլիցիայի մարմինները։

6. Հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության պաշտպանության ասպարեզում ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչություն.—

ա) Քաղաքավայրերում կազմակերպում և ղեկավարում է ընդհանուր միլիցիայի պոստային ծառայությունը, սահմանում է պոստերը, կազմակերպում է գիշերային պահակությունը.

բ) Սպասարկվող վայրերում կազմակերպում է պետական ու հասարակական գույքի պահպանումը, մասնավորապես ՄՏԿ-ի, խորհրդային տնտեսությունների, կոլտնտեսությունների, արդյունաբերական ձեռնարկությունների գույքերի պահպանումը, նաև քաղաքացիների անձնական անվտանգության ու նրանց գույքի պաշտպանությունը.

գ) Կազմակերպում է հասարակական օգտագործման տեղերում, երթերի, ցույցերի և շենքերից դուրս կայացող ժողովների ժամանակ հասարակական կարգի պահպանումը:

դ) Գյուղական կատարածուների, միլիցիայի ոժանդակ բրիգադի անդամներին մասնակից է անում կատարելու հասարակական կարգի պաշտպանման վերաբերյալ պարտականությունները և հրահանգում է նրանց մասնակցել միլիցիայի աշխատանքներին.

ե) Աջակցում է համապատասխան մարմիններին իրականացնել հասարակական կարգն ու անվտանգությունը խախտող սոցիալ-վտանգավոր յերևույթներին (մուրացկանություն, պոռնկություն, գինեմոլություն և այլն) դեմ պայքարի ձեռնարկումները.

զ) Կենսագործում է սրիկայության, դաշտնի ողեքաշության, նաև վոգելից խմիչքների գաղտնի վաճառքի դեմ պայքարի ձեռնարկումները.

ը) Ի կատար է ածում վտարման ու առանց հարկադիր աշխատանքների աքսորի վերաբերյալ դատավճիռները, կատարում է աքսորվածների և վտարվածների հաշվառումն ու հատուկ հսկողությունը:

7. Հատուկ ձեռնարկումների կենսագործման ասպարեզում ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությունը—

ա) Սպասարկվող վայրի սահմաններում աջակցում է քաղաքական տնտեսական կամպանիաներին, նրանց իրականացման համար ստեղծում է նորմալ պայմաններ.

բ) Կազմակերպում ու ղեկավարում է միլիցիայի աշխատանքը տարերային աղետների դեմ պայքարելու, նաև աղետների ժամանակ հասարակական կարգն ու գույքը պաշտպանելու.

գ) Աջակցում է համապատասխան մարմիններին իրականացնել աշխատանքային ու տրանսպորտային պարտականությունները: Նաև օրենքներով սահմանված դեպքերում այլ միջոցների մոբիլիզացիան.

դ) ԲԳ Միլիցիայի վրա դրված պարտականությունների սահմաններում կենսագործում է հեղափոխական կարգի պաշտպանության արտակարգ միջոցները, յերբ սպասարկվող վայրում բացառիկ դրություն է մտցնվում.

ե) Աջակցում է պետական հիմնարկներին, հասարակական կազմակերպություններին և նրանց ներկայացուցիչներին, յերբ դիմադրություն է ցույց տրվում նրանց օրինական պահանջներին և յերբ անհրաժեշտ է հարկադիր միջոցներ գործադրել առանձին քաղաքացիների կամ քաղաքացիների խմբերի նկատմամբ.

զ) Աջակցում է ռազմածով. ժողկոմատի մարմիններին, պարտադիր զինվորական ծառայության օրենքը կենսագործելու ժամանակ:

8. Ընդհանուր հսկողության և բնակչությանը սպասարկելու ասպարեզում ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությունը—

ա) Մշակում է հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ քաղաքային խորհուրդների պարտադիր վորոշումների նախագծերը.

բ) Ցեղրակացություններ է տալիս քաղաքային խորհրդի պարտադիր վորոշումների նախագծերի առթիվ, յերբ այդ պարտադիր վորոշումների կիրառման հսկողությունը դրվում է ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչության վրա.

գ) Ի կատարումն քաղաքային խորհրդի կողմից նշանակված վարչական տույժերի աջակցում է այլ մարմիններին, որոնք վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն, նաև այդ հարցերի վերաբերյալ նրանց որոշումների կատարմանը.

դ) Իրականացնում է որսորդական ու սպորտային զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ միջոցների, նաև ուրիշ հատուկ առարկաների վաճառքի նկատմամբ հսկողությունը, երբ այդ պարտականությունը դրված է ԲԳ Միլիցիայի վրա, այլև օրենքներով նախատեսնված դեպքերում տալիս է այդ առարկաների վաճառքի թույլտվություն.

զ) Տալիս է սպասարկվող վայրերում գտնվող հիմնարկների համար պետական զինանշանի պատկերով կնիքներ պատրաստելու և ոգտագործելու թույլտվություն.

ը) Հսկում է կրոնական միությունների, նաև հավատացյալների ժողովների վերաբերյալ կանոնների կատարումը.

թ) Հսկում է քաղաքում կանոնավոր ընկերությունների կազմակերպման ու գործունեության, նաև մասսայական տեսարանների, զվարճատեղերի, ժողովների, երթերի ու ցույցերի կազմակերպման վերաբերյալ կանոնների կատարման վրա.

ժ) Իրագործում է հասարակական հրաձգարանների վերաբերյալ հսկողությունը և տալիս է նրանց բացման թույլտվություններ:

ի) Կազմակերպում և ղեկավարում է հասցեների բյուրոների աշխատանքը և բնակչության հաշվառման ու տեղաշարժման գործը.

լ) Խորհրդային քաղաքացիներին տալիս է անձնավորության հավաստագրեր.

խ) Հրահանգում և հսկում է սպասարկվող վայրերի գյուղական կատարածուների աշխատանքը, յեկվոր բնակիչների ցուցակագրման գործում.

ծ) Կազմակերպում է գտնված իրերի փաստագրերի

ու արժեքների պահպանումը, նաև մոլորված անասունների ընդունումն ու նրանց տերերի որոնումը:

9. Բարեկարգության ու հասարակական սանիտարիայի վրա հսկողության ասպարեզում ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությունը—

ա) Կենսագործում է սպասարկվող վայրերի բարեկարգության ու հասարակական սանիտարիայի վերաբերյալ վարչական ձեռնարկումները.

բ) Իրականացնում է քաղաքի բարեկարգության ու հասարակական սանիտարիայի վերաբերյալ որոշումների կատարման հսկողությունը և այդ որոշումները խախտողներին ենթարկում է պատասխանատվության.

գ) ԲԳ Միլիցայի Գլխավոր Վարչության դիրեկտիվների համաձայն կենսագործում է փողոցային շարժումը կանոնավորող ձեռնարկումներն և այդ նպատակով իրագեկ դարձնում հատուկ խմբերին.

դ) Ուսումնասիրում է փողոցային շարժման վիճակն ու լարվածությունը, որոշում է քաղաքային ամեն տեսակի տրանսպորտի շարժման սահմանները, նաև քաղաքային ամեն տեսակի տրասպորտի ոգտագործման կանոններն կատարելու հսկողությունը.

ե) Մասնակցում է քաղաքային տրանսպորտում պատահարներ ու խորտակումներ առաջացնող պատճառների վերացման վերաբերյալ ձեռնարկումների կենսագործմանը.

10. Քրեական հանցագործության դեմ պայքարելու ասպարեզում ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությունը—

ա) Սպասարկվող վայրերի սահմաններում ուսումնասիրում է քրեական հանցագործության շարժումը և կենսագործում է հանցագործությունների կանխման ու քննության վերաբերյալ ձեռնարկումները.

բ) Կատարում է հանցագործությունների վերաբերյալ սահմանված բոլոր տեսակի հաշվառումն ու ցուցակագրումը, նաև տալիս սահմանված կարգով ցուցակագրման վերաբերյալ տեղեկանքներ.

գ) Կատարում է գիտական ու տեխնիկական փորձագիտանք.

դ) Վորոնում է քննությունից, դատից և սոցիալական պաշտպանության միջոցներից խուսափող անձանց.

յե) Վորոնում է գողացված գույքը, կատարում է հանցագործությունների հետ առնչություն ունեցող իրեղեն ապացույցների հաշվառումը, պահպանումը և դատական ու այլ մարմիններին հանձնումը:

11. Քաղաքական աշխատանքի ասպարեզում ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչությունը—

ա) Իրականացնում է ստորադաս ընդհանուր ու գերատեսչական միլիցիայի աշխատանքի քաղաքական ապահովման վերաբերյալ գործնական ձեռնարկումները, նաև ամրացնում է նրանց անձնական կազմի քաղաքական-բարոյական դրությունը.

բ) Ղեկավարում է անձնական կազմի քաղաքական դաստիարակությունը, կազմակերպում է նրանց քաղաքական պարապմունքները, նաև միջոցներ է ձեռնարկում բարձրացնելու միլիցիայի աշխատակիցների ընդհանուր կրթական և կուլտուրական մակարդակը.

գ) Իրականացնում է ձեռնարկումներ ամրապնդելու ստորադաս մարմինների ու շարային մասերի անձնական կազմի մեջ աշխատանքի սոցիալիստական ձևերը.

դ) Ուղղություն է տալիս ԲԳ Միլիցիայի ստորադաս մարմիններում և շարային մասերում կատարվող հասարակական կազմակերպությունների աշխատանքներին, նաև ղեկավարում է միլիցիական մամուլը ու միլթղթակցական շարժումը:

12. ԲԳ Միլիցիայի քաղաքային վարչության կառուցվածքը սահմանված է ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության կողմից:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՈՒՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ

(Հաստատված ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 3-րդ նստաշրջանի կողմից 1928 թ. հուլիսի 7-ին)

(Քաղվածք)

ԳԼՈՒԽ III

բ. Վարչական ասպարեզում

23. Վարչական ասպարեզում քաղաքային խորհուրդը՝

ա) Հրատարակում է պարտադիր վորոշումներ հետեվյալ հարցերի վերաբերյալ.—

1. հասարակական կարգի ու ապահովության պահպանման և մասնավորապես սրիկայության դեմ պայքարելու.

2. հակահրդեհային միջոցների.

3. տարերային աղետների դեմ պայքարելու.

4. ազգաբնակության առողջության պահպանման և վարակիչ սոցիալական հիվանդությունների դեմ պայքար մղելու.

5. անասունների համաճարակների և վնասատուների դեմ պայքարելու.

6. Թատրոններ, կինոներ, ակումբներ, խաղարաններ և այլ նման ձեռնարկություններ բանալու և նրանց գործունեության կարգի.

7. քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության.

8. հասարակական օգտագործման ձեռնարկությունների (ավտոբուսների, ճաշարանների, թեյարանների, հյուրանոցների, գիշերոթի տների, բաղնիքների, վարսավիրանոցների և այլն) գործունեության կարգի.

9. բնակարանների, բակերի, փողոցների և հա-

սարակական օգտագործության այլ վայրերի սանիտարական դրության, փողոցների ու տանդուխքների լուսավորության, տների ճակատին №№-ներ դնելու, ինչպես նաև նկուղային շենքերը չորացնելու.

10. շենքերի կամ նրանց մի մասի նորոգության ու վերանորոգման և փլուզումի վտանգին յենթակա մասերը քանդելու, ինչպես նաև կտուրների ու բակերի ձյունը մաքրելու.

11. մայթերը, քարհատակները, ջրմուղի ցանցը, ջրատար խողովակները նորոգելու և կանոնավոր վիճակում պահելու, ինչպես նաև բնական ու արհեստական ջրամբարների սանիտարական պահպանության.

12. անտառները, մարգագետինները, ցանքերն ու կանաչն արածացնելուց պահպանելու.

13. առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունների՝ հասարակական ապահովության պահանջների համեմատ գործունեության կարգի.

14. առևտուր անելու ժամանակի ու կարգի, շուկաներում և առևտրի այլ վայրերում կարգ ու կանոն սահմանելու.

15. անցնող զորքերին բնակարաններ հատկացնելու.

16. տեղական նշանակություն ունեցող վոռոգման ցանցի պահպանության.

17. գաղտնի և ապորինի ողեգործության դեմ պայքարելու և

18. ելեկտրալարերի ու հեռագրական ցանցի պահպանության:

ը) Վարչական ներգործության միջոցներ է ձեռք առնում պարտադիր վորոշումները խախտողների դեմ — 50 ռուբլի տուգանքից կամ մի ամիս հարկադիր աշխատանքներից վոչ ավելի.

Ծանոթություն. — Պարտադիր վորոշումներ հրատարակելու և նրանց խախտման համար վարչական միջոցներ նշանակելու կարգը վորոշվում է ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից 1928 թ. մայիսի 9-ին հաստատված «Տեղական գործադիր կոմիտեների և քաղաքային խորհուրդների կողմից պարտադիր վորոշումներ հրատարակելու և նրանց խախտման համար վարչական միջոցներ նշանակելու մասին» կանոնադրությամբ (ՀՍԽՀ Օր. ժող. 1928թ. №7, հոդ. 88):

գ) Հսկում է իր հրատարակած պարտադիր վորոշումների խախտման համար վարչական ներգործության միջոցներ կիրառելու կանոնադրության վրա, քննում է գանգատները և համապատասխան դեպքերում վերացնում է կամ փոխում է վարչական բաժինների այն վորոշումները, վորոնք վերաբերում են քաղաքային խորհրդի պարտադիր վորոշումների խախտման համար վարչական ներգործության միջոցները կիրառելուն.

դ) Ղեկավարում է քաղաքային միլիցիայի և քրեական հետախուզության գործունեությունը.

յե) Հսկում է յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց անջատելու վերաբերյալ դեկրետի կատարման վրա, պայմանագրերի հիման վրա պաշտամունքի շենքերն ու պաշտամունքի իրերն օգտագործելու համար, ընդհանուր հսկողություն է ունենում այդ պայմանագրերի կատարման և կրոնական համայնքների գործունեության վրա քաղաքի սահմաններում:

զ) Ընդունում է համապատասխան դեպքերում, քննում է քաղաքային խորհրդին յենթակա հիմնարկների ու պաշտոնյաների գործողությունների դեմ արվող գանգատները.

ե) Պայքարում է հանցագործության և մասնավորապես հանրային անդորրությունն ու հանդիստը խախտելու դեմ.

թ) Վարում է քաղաքացիական կացության ակտերի տոմարագրությունը և քաղաքացիական ակտերի տոմարագրության արխիվը.

ժ) Վարում է խնամակալության և հոգաբարձության գործերը գոյություն ունեցող որենքների սահմաններում:

ՀՍԽՀ Օրենքն. և կարգ. ժողով. 1928 թ. № 10.

Գ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

(Հաստատված է ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից 1932 թ. հոկտեմբերի 19-ին)

I. Ընդհանուր սկզբունքներ

1. *ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունը շրջանի սահմաններում իրականացնում է հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության պաշտպանությունը, քրեական հանցագործության դեմ պայքարը, պետական ու հասարակական գույքի, նաև քաղաքացիների անձնական անվտանգության և նրանց գույքի պաշտպանությունը:*

ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունն իրականացնում է նաև շրջանի կենտրոն հանդիսացող քաղաքի անմիջական սպասարկումը:

2. *ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունը ենթարկվում է անմիջականորեն ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչությանը, գործում է նրա ղեկավարությամբ և նրա առաջ պատասխանատու է շրջանի միլիցիայի դրության ու աշխատանքի համար:*

ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունը հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության պաշտպանության վերաբերյալ ընդհանուր ձեռնարկումների ասպարեզում ղեկավարվում է նաև շրջանային գործադիր կոմիտեի ցուցմունքներով, իսկ շրջանի կենտրոն հանդիսացող քաղաքի սպասարկման նկատմամբ՝ քաղաքային խորհրդի ցուցմունքներով:

3. *ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունը գործում է ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1931 թ. մայիսի 25-ին հաստատած «Բանվորա-գյուղացիական Միլիցիայի կանոնա-*

դրության» (ԽՍՀՄ Օր. և Կարգ. Ժողով. 1931 թ. № 23, հոդվ. 247), նաև ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության հրատարակած կանոնների, հրամանների, հրահանգների և այլ կարգադրությունների համաձայն:

II. ԲԳ Միլիցիայի շրջանային վարչության իրավունքները ու պարտականությունները

4. *Միլիցիայի կազմակերպչական ասպարեզում ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունը—*

ա) ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության ցուցմունքների համաձայն սահմանում է շրջանային տերրիտորիայի բաժանումն ըստ առանձին շրջանների, վորոնք սպասարկվում են շրջանային տեսուչների միջոցով.

բ) Շահագրգռված մարմինների հետ կնքված պայմանագրերի համաձայն կազմակերպում է գերատեսչական միլիցիայի մասերը՝ պետական կոոպերատիվ ու հասարակական ձեռնարկությունների ու հիմնարկների գույքի պահպանման համար, այն վայրի սահմաններում, վորտեղ գտնվում են հիշյալ հիմնարկներն ու ձեռնարկությունները.

գ) Աշխատավորության լայն մասսաներին մասնակից է անում միլիցիայի մարմինների վրա դրված առանձին գործողություններն անմիջականորեն կատարելու համար և այդ նպատակով կազմակերպում է միլիցիայի օժանդակ բրիգադներ.

դ) Կազմակերպում և կենսագործում է ԲԳ Միլիցիայի անձնական կազմի շարային ու մարտական պատրաստումը.

ե) Կենսագործում է ԲԳ Միլիցիայի անձնական կազմի զինվորական կարգապահությունն ամրացնելու ձեռնարկումները, նաև ԲԳ միլիցիայի ենթակա մարմիններում ու շարային մասերում ներքին ծառայությունն ու ներքին կարգավորությունն ամրացնելու ձեռնարկումները.

զ) Պարբերաբար կազմակերպում է շրջանային տեսուչների, վարչության և միլիցիային ենթակա

չարային մասերի այլ աշխատողների հրահանգային խորհրդակցություններ, նաև կազմակերպում է նրանց աշխատանքների ստուգումն ու հաշվառումը.

ե) Կենսագործում է շրջանի միլիցայի աշխատողների աշխատանքի պայմաններն ու նյութական կենցաղային դրությունը բարելավող ձեռնարկումներ, կազմակերպում է հանրակացարաններ, ակումբներ, լենանկյուններ, ճաշարաններ և այլն, նաև հսկում է միլիցիայի աշխատավորներին վերապահված արտոնությունների ու առանձնաշնորհումների ճիշտ կատարման վրա.

ը) Սահմանված կարգով ապահովում է շրջանի միլիցիայի աշխատավորներին բավարարումը վորոշ տեսակներով, նաև զինասարքով ու ռազմամթերքով, այլ և հսկում է նրանց կանոնավոր պահելը.

5. Հեղափոխական կարգն ու հասարակական անվտանգությունը պաշտպանելու ասպարեզում ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունը.—

ա) Շրջանի սահմաններում ղեկավարում է ընդհանուր միլիցիայի պահակային ծառայությունն բնակատեղերում, սահմանում է մշտական պոստեր, կազմակերպում է գիշերային պահակություն և պարհակություն.

բ) Կազմակերպում է պետական ու հասարակական գույքի, մասնավորապես ՄՏԿ-ների, խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների ու արդյունաբերական ձեռնարկությունների գույքերի պահպանումը, նաև քաղաքացիների անձնական անվտանգության ու նրանց գույքի պաշտպանությունը.

գ) Գյուղական կատարածուներին, միլիցիայի ոժանդակ բրիգադի անդամներին մասնակից է անում կատարելու հասարակական կարգի պաշտպանության վերաբերյալ պարտականությունները և հրահանգում է նրանց աջակցել միլիցիայի աշխատանքներին.

դ) Աջակցում է համապատասխան մարմիններին իրականացնելու հասարակական կարգն ու ավանդությունը խախտող սոցիալ-վտանգավոր յերևույթների

(մուրացկանություն, պոռնկություն, հարբեցողություն և այլն), նաև սրիկայության, գաղտնապես ողի քաշելու և վոգելից խմիչքներ վաճառելու դեմ պայքարի ձեռնարկումներ.

ե) Ի կատար է ածում վտարման ու առանց հարկադիր աշխատանքների, աքսորի դատավճիռներ. Շրջանի սահմաններում կատարում է աքսորականների ու վտարվածների հաշվառումը և նրանց նկատմամբ իրականացնում է հատուկ հսկողություն.

զ) Շրջանի սահմաններում բնակեցնում է դատավճռով աքսորվածներին ու վտարվածներին, միջոցներ է ձեռք առնում նրանց մեջ աշխատանքներ կազմակերպելու, նաև հսկում է նրանց նյութական կենցաղային վիճակը.

6. Հատուկ միջոցների կենսագործման ասպարեզում ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունը—

ա) Շրջանի սահմաններում աջակցում է քաղաքական ու տնտեսական կամպանիաների իրականացմանը, նրանց իրականացման համար ստեղծում է նորմալ պայմաններ.

բ) Համապատասխան մարմիններին ազդարարում է տարերային վերահաս աղետների մասին, ձեռք է առնում միջոցներ նրանց վերացնելու, տարերային աղետների ժամանակ հաստատում է կարգ, պահպանում է աղետյալների օգնության գործը.

գ) Համապատասխան մարմիններին աջակցում է աշխատանքային ու տրանսպորտային պահակներ կազմակերպելու, նաև օրենքով սահմանված դեպքերում այլ միջոցների մոբիլիզացիան իրականացնելու համար.

դ) ԲԳ Միլիցիայի վրա դրված պարտականությունների սահմաններում ձեռնարկում է հեղափոխական կարգի պաշտպանության արտակարգ միջոցներ, յերբ սպասարկվող շրջանում մտցնվում է բացառիկ դրություն.

ե) Աջակցում է պետական հիմնարկներին, հասարակական կազմակերպություններին և նրանց ներկայացուցիչներին, յերբ դիմադրություն է ցուցադրվում

նրանց օրինական պահանջներին և յերբ անհրաժեշտ է հարկադիր միջոցներ գործադրել առանձին քաղաքացիներին կամ քաղաքացիների խմբերի նկատմամբ․

գ) Աջակցում է Ռազմածովժողկոմի մարմիններին, պարտադիր զինվորական ծառայության օրենքը կենսագործելու ժամանակ:

7․ Ընդհանուր հսկողություն և բնակչությանը սպասարկելու ասպարեզում ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունը—

ա) Մշակում է հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ շրջգործկոմի և շրջանային կենտրոնի՝ քաղխորհրդի պարտադիր վորոշումների նախագծերը․․․

բ) Տալիս է յեզրակացություններ շրջգործկոմի կամ քաղխորհրդի պարտադիր վորոշումների նախագծերի առթիվ, յերբ այդ պարտադիր վորոշումների կիրառման հսկողությունը դրվում է ԲԳ Միլիցիայի շրջանային վարչության վրա․

գ) Ի կատար է ածում նշանակված վարչական տույժերը և աջակցում է այն մարմիններին, վորոնք վարչական տույժերը նշանակելու իրավունք ունեն, նաև կատարում է այդ հարցերի վերաբերյալ նրանց վորոշումները․

դ) Հսկում է վորսորդական ու սպորտային զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ միջոցների վաճառքի վրա, նաև ուրիշ հատուկ առարկաների նկատմամբ, յերբ այդ պարտականությունը դրված է ԲԳ Միլիցիայի վրա․ նաև օրենքով նախատեսված դեպքերում տալիս է այդ առարկաների վաճառքի համար թույլտվություն․

յե) Սպասարկվող շրջանում գործող հիմնարկների համար տալիս է պետական զինանշանի պատկերով կնիքներ պատրաստելու և օգտագործելու թույլտվություն․

զ) Հսկում է կրոնական միությունների նաև հավատացյալների ժողովների վերաբերյալ կանոնների կատարումը․

է) Հսկում է կամավոր ընկերությունների կազմակերպման ու գործունեության, նաև մասսայական տեսարանների, զվարճատեղերի, յերթերի ու ցույցերի կազմակերպման վերաբերյալ կանոնների կատարումը, այլև օրենքով նախատեսված դեպքերում ժողովների գումարման վերաբերյալ կանոնների կատարումը․

ը) Հսկում է շրջանի սահմաններում բարեկարգության ու հասարակական սանիտարիայի վերաբերյալ վորոշումների կատարումը, և պատասխանատվության է յենթարկում այդ վորոշումները խախտողներին․

թ) Խորհրդային քաղաքացիներին տալիս է շրջանային կենտրոնի սահմաններում անձնավորության հավաստագրեր․

ժ) Հրահանգում և հսկում է գյուղական կատարածուների աշխատանքը յեկվոր բնակիչներին ցուցակագրելու գործում․

ի) Կազմակերպում է գտնված իրերի պահպանում, նաև մոլորված անասունների ընդունումն ու նրանց տերերի վորոնումը:

8․ Քրեական հանցագործության դեմ պայքարելու ասպարեզում ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունը—

ա) Ուսումնասիրում է շրջանային սահմաններում քրեական հանցագործության շարժումը, հաշվառման է յենթարկում հանցագործներին ու հանցագործությունները, կատարում է հանցագործությունների անմիջական քննությունը․

բ) Կատարում է քննությունից և դատից կամ սոցիալական պաշտպանության միջոցներին յենթարկվելուց խուսափողների վորոնումը, նաև գողացված գույքի վորոնումը և համաձայն շահագրգռված հիմնարկների ու անձերի հայտերի՝ կորած անչափահասների վորոնումը․

9․ Քաղաքական աշխատանքի ասպարեզում ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունը—

ա) Իրականացնում է յենթակա ընդհանուր և գերատեսչական միլիցիայի գործունեության քաղաքական ապահովման վերաբերյալ աշխատանքները, նաև ամրացնում է նրանց անձնական կազմի քաղաքական-բարոյական դրությունը․

բ) Ղեկավարում է անձնական կազմի քաղաքական դաստիարակությունը, կազմակերպում է նրանց քաղաքական պարապմունքները, նաև միջոցներ է ձեռք առնում բարձրացնելու միլիցիայի աշխատողների ընդհանուր կրթական-կուլտուրական մակարդակը.

գ) Ամրացնում է յենթակա մարմինների ու շարային մասերի անձնական կազմի մեջ աշխատանքի սոցիալիստական ձևերը.

դ) Ուղղություն է տալիս ԲԳ Միլիցիայի շրջանային վարչության ու նրանց յենթակա մասերի հասարակական կազմակերպությունների աշխատանքներին, նաև ղեկավարում է միլիցիական մամուլն և միլթղթակիցների աշխատանքը:

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՍԽՀ Միլիցիավարչպետ՝
ԴՈՒԼԳԱՐՅԱՆ
28 հունիսի 1932 թ.
Քաղ. Յերևան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ընդհանուր հիմունքներ

1. Միլիցիայի շրջանային տեսուչը տանում է քրեական հանցագործության դեմ պայքարելու և հեղափոխական կարգն ու հասարակական անվտանգությունն ապահովելու աշխատանքը, իրեն հանձնված շրջանի սահմաններում:

2. Միլիցիայի տեսուչը յենթարկվում է անմիջորեն ԲԳ Միլիցիայի շրջանային վարչության պետին և նրա առաջ լիակատար պատասխանատվություն է կրում իր աշխատանքի համար:

3. ԲԳ Միլիցիայի տեսուչը, տանելով իր աշխատանքը, դասակարգային պրոլետարական գծով, ղեկավարվում է—

ա) Կառավարության, նաև տեղական գործադիր կոմիտեների, միլիցիայի գործունեության վերաբերյալ հրատարակած վորոշումներով.

բ) ԲԳ Միլիցիայի կանոնադրություններով, ԲԳ Միլիցիայի շրջանային և վերադաս վարչությունների հրամաններով ու կարգադրություններով:

4. ԲԳ Միլիցիայի յուրաքանչյուր շրջանային տեսուչի սպասարկած տերրիտորիան վորոշում է ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչությունը:

5. Շրջանային տեսուչի մշտական պաշտոնավայրը նշանակվում է նրա սպասարկած գյուղխորհուրդներից վորևէ մեկին կից ԲԳ Միլիցիայի շրջանային վարչության պետի կողմից:

6. Շրջանային տեսուչն իր աշխատանքի ընթացքում հենվում է կոլտնտեսականների, գյուղի բատրակների, չքավորների ու բոլոր աշխատավորների լայն մասսաների վրա, ներգրավելով նրանց կատարելու ԲԳ Միլիցիայի վրա դրված առանձին առաջադրանքները: Այդ նպատակով շրջանային տեսուչը—

ա) Ձեռնարկում է միջոցներ, ԲԳ Միլիցիային ոժանդակող բրիգադի անդամների հետ.

բ) Տանում է հատուկ ծրագրով կանոնավոր պարապմունքներ միլիցիային ոժանդակող բրիգադի անդամների հետ.

գ) Հրահանգում է գյուղական կատարածուներին.

դ) Անում է զեկուցումներ ԲԳ Միլիցիայի շրջանային վարչության պետի հաստատած ծրագրով միլիցիայի աշխատանքի առանձին հարցերի մասին գյուղխորհուրդների պլենումներում, կոլտնտեսականների ժողովներում, բատրակների ու չքավորների ժողովներում, ընտրողների ընդհանուր ժողովներում և այլն.

յե) Պահպանում է մշտական կապ տեղական խորհրդային, կուսակցական, արհմիութենական ու հասարակական կազմակերպությունների, տպագիր ու պատի լրագրների խմբագրությունների հետ:

7. ԲԳ Միլիցիայի շրջանային տեսուչը, միացնելով սպասարկած տերրիտորիայի սահմաններում հեղա-

փոխական կարգի ու հասարակական անվտանգության աշխատանքը—

ա) Ղեկավարում է իր սպասարկած տերրիտորիայում աշխատող միլիցիոներների գործունեությունը.

բ) Ղեկավարում է գյուղական կատարածուների պարտականությունների կատարումը, հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության պահպանման վերաբերմամբ. տանում է գյուղական կատարածուների հաշվառումը.

գ) Ղեկավարում է ԲԳ Միլիցիայի օժանդակ բրիգադի անդամների օպերատիվ աշխատանքը.

դ) Ստուգում է կոլտնտեսությունների ու բնակավայրերի պահակային պարտականությունների կատարումը և հրահանգում է այդ պարտականությունները կատարելու համար նշանակված կոլտնտեսությունների անդամներին և այլ քաղաքացիներին.

յե) Ստուգում է պահակային պահպանման վիճակն այն բոլոր ձեռնարկություններում, որոնք չեն սպասարկվում ռազմականացված պահակի և գերատեսչական միլիցիայի կողմից:

2. ԲԳ Միլիցիայի շրջանային տեսչի պարտականությունները.

8. ԲԳ Միլիցիայի շրջանային տեսուչն իր սպասարկած տերրիտորիայի սահմաններում հեղափոխական կարգն ու հասարակական անվտանգությունն ապահովելու համար կատարում է հետևյալ պարտականությունները.

ա) Հսկում է, որ ճշտորեն կատարվեն հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության պահպանման վերաբերյալ օրենքները և իշխանության կենտրոնական ու տեղական մարմինների որոշումները, մասնավորապես հսկում է միլիցիայի պարտականություններին վերաբերյալ հարցերի նկատմամբ տեղական գործկոմների ու խորհուրդների հրատարակած պարտադիր որոշումների կատարմանն և պատասխանատվության ե

յենթարկում այդ օրենքներն ու որոշումները խախտողներին:

բ) Մասնակցում է գյուղխորհուրդների պարտադիր որոշումների նախագծերի քննությանը. հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության հարցերում:

գ) Ձեռնարկում է միջոցներ կազմակերպելու պահպանումն այն պետական ու հասարակական գույքի (կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների, նաև պետական արդյունաբերական ձեռնարկությունների), որը չի սպասարկվում ռազմականացված պահակով ու գերատեսչական միլիցիայով:

դ) Աջակցում է միլիցիայի վրա դրված պարտականությունների սահմաններում՝ քաղաքական ու տնտեսական կամպանիաների իրականացմանը, վճռական միջոցներ ձեռնարկելով կասեցնելու համար դասակարգորեն թշնամի տարրերի յելույթները, որոնք ձգտում են վիժեցնել տարվող կամպանիաները:

յե) Պայքարում է անասուններն ապօրինի մորթելու դեմ:

զ) Ձեռնարկում է միջոցներ հասարակական ոգտման տեղերում (ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում, ճաշարաններում և այլն) կարգ ապահովելու, նմանապես հսկում է սանիտարական հսկողության մարմինների և գյուղխորհուրդների հետ միասին սանիտարական դրությանն ու բնակավայրերի բարեկարգման կանոնների կատարմանը:

է) Ձեռնարկում է գյուղխորհուրդների հետ միասին միջոցներ կանխելու և վերացնելու տարերային աղետները. ծանոթացնում է բնակչությանը և համապատասխան մարմիններին՝ տարերային աղետների դեմ պայքարի հետ կապված միջոցառումների մասին, ներգրավելով այդ աշխատանքների մեջ բնակչությանը, նաև պաշտոնատար անձերին ու հիմնարկներին:

ը) Հայտնում է առաջին ոգնությունը հանցագործություններից ու դժբախտ պատահարներից տուժած անձերին, նույնպես և անօգնական վիճակում գտնվողներին,

ուղարկելով նրանց անհրաժեշտ դեպքում մոտակա բուժական հաստատություն:

թ) Հսկում է, վոր իր սպասարկած տերրիտորիայում չգործեն առանց պատշաճ թույլտվության հիմնված կամավոր ընկերություններ ու կազմակերպություններ. միջոցներ է ձեռնարկում չթույլատրելու կամավոր ընկերությունների գործունեության մեջ հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության խախտումները:

ժ) Հսկում է, վորպեսզի հավատացյալների ժողովները (վոչ աղոթքի) տեղի ունենան համապատասխան մարմիններից ստացված թույլտվության համաձայն և չքննեն այդպիսի հարցեր, վորոնք դուրս են գալիս կրոնական միությունների վերապահված սահմաններից:

ի) Հսկում է հասարակական զվարճությունների ու տեսարանների (ներկայացումներ, կինո և այլն) վերաբերյալ կանոնների կատարմանը:

լ) Հսկում է, վորպեսզի վորսորդական զենքի, ռազմամթերքի և այլ հատուկ իրերի առևտուրը, վոր սահմանափակված է որենքով, կատարվի միմիայն համապատասխան թույլտվությամբ:

ծ) Աջակցում է պաշտոնատար անձերին իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու այն դեպքերում, յերբ առանձին քաղաքացիները կամ քաղաքացիների խմբերը հրաժարվում են յենթարկվել այդ պաշտոնատար անձերի որինական պահանջներին կամ դիմադրություն են ցույց տալիս նրանց:

9. ԲԳ. Միլիցիայի շրջանային տեսուչը կատարում է հետևյալ պարտականությունները, հանցագործության դեմ պայքարում.

ա) Կազմակերպում և իրականացնում է հանցագործությունները կանխելու և դադարեցնելու միջոցառումները:

բ) Տեղեկացնում է անհապաղ ՄՊԲՎ և Միլիցիայի շրջանային վարչության համապատասխան մարմիններին բոլոր հակահեղափոխական յելույթների մասին, սրանց կասեցման համար անհետաձգելի միջոցներ

ձեռնարկելով մինչև ՄՊԲՎ համապատասխան մարմինների ներկայացուցիչների գալը:

գ) Կատարում է տեղի ունեցած քրեական հանցանքների քննությունը:

դ) Ստուգում է տեղական լրագրներում (շրջանային, խորհտնտեսական, կոլտնտեսական, բազմատիրաժ, պատի և այլ) զետեղված այն հոդվածները, վորոնք մերկացնում են հանցագործներին ու հանցագործություններին և կատարում է այդ ուղղությամբ քննություններ:

յե) Ձեռնարկում է միջոցներ հայտնաբերելու վոգելից խմիչքների գաղտնի վաճառքն ու ողի քաշելը և հանցավորներին յենթարկում է պատասխանատվության:

զ) Պայքարում է խուլիգանության դեմ, քրեական պատասխանատվության յենթարկելով չարամիտ խուլիգաններին, և աջակցում է հասարակական ներգործման միջոցների կիրառմանն այն խուլիգանների վերաբերմամբ, վորոնք սոցիալապես վտանգավոր տարրեր են հանդիսանում:

է) Աջակցում է համապատասխան մարմիններին մուրացկանության, պոռնկության ու անապաստանության դեմ պայքարելու:

ը) Վորոնում է քննությունից, դատից ու դատավճռի կատարածումից խուսափող անձերին:

թ) Հսկողություն է անում իր սպասարկած շրջանում բնակվող ըստ դատավճռի աքսորականներին, նաև տանում է նրանց պարտադիր ներկայանալու հաշվառումն այն դեպքերում, յերբ այդ պարտականությունը շրջանային միլիցիայի վարչության պետի կողմից դրված է տեսչի վրա:

10. ԲԳ Միլիցիայի շրջանային տեսուչը կատարում է յերկրի պաշտպանության վերաբերյալ հետևյալ պարտականությունները—

ա) Ձեռնարկում է միջոցներ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափողների դեմ.

բ) Աջակցում է զինվորական ծառայողների ու զինապարտների հաշվառմանը:

գ) Աջակցում է ռազմաձիային, ռազմասայլային, ռազմանավային, ռազմավտոտրանսպորտային և այլ պարհակների հաշվառմանն ու նրանց վերաբերյալ այլ միջոցառումներին:

11. ԲԳ Միլիցիայի շրջանային տեսուչը պարտավոր է ցերեկվա ու գիշերվա ամեն ժամին ընդունել քաղաքացիների ու պաշտոնատար անձերի բանավոր ու գրավոր հայտարարությունները կատարված կամ պատրաստվող հանցագործությունների մասին և անհապաղ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հանցագործությունները կասեցնելու և դադարեցնելու, նաև հանցագործներին ձերբակալելու համար. ԲԳ Միլիցիայի տեսուչը պարտավոր է ընդունել քաղաքացիների ու պաշտոնատար անձերի բոլոր գանգատներն ու հայտարարությունները ԲԳ Միլիցիայի իրավասությանը վերապահված հարցերի վերաբերմամբ և համապատասխան ընթացք տալ նրանց:

3. ԲԳ Միլիցիայի շրջանային տեսչի իրավունքները

12. ԲԳ Միլիցիայի շրջանային տեսուչն իրեն հանձնարարված առաջադրություններն իրականացնելու համար իրավունք ունի—

ա) Պահանջ ներկայացնել առանձին քաղաքացիներին ու պաշտոնատար անձերին կատարելու օրենքով կամ պարտադիր վորոշումով սահմանված կանոնները, նաև իշխանության մարմինների կարգադրությունները և ձեռնարկել օրինական միջոցներ խախտումները վերացնելու համար.

բ) Տալ սահմանված կարգով հանձնարարություններ ու առաջադրություններ գյուղական կատարածուներին, միլիցիային օժանդակ բրիգադի անդամներին և նրանց կանչել աջակցության այս կամ այն միջոցառումները կենսագործելիս.

գ) Պահանջել քաղաքացիների անմիջական օգնությունն իր վրա դրված պարտականությունները կատարելիս.

դ) Օգտագործել պետական ու հասարակական մարմիններին ու մասնավոր անձերին պատկանող տեղափոխման ու կապի՝ տվյալ վայրկյանին ազատ ու զբաղված բոլոր միջոցները, թաքնվող հանցագործներին հետապնդելու և անհետաձգելի բժշկական օգնության կարիք զգացող անձերին (հանցագործություններից, դժբախտ պատահարներից և այլն տուժածներին) բուժարան փոխադրելու համար.

յե) Օգտագործել սահմանված կարգով շրջանի սահմաններում ճանապարհորդելու համար շոգեկառքերը, ապրանքատար գնացքները, նաև պաշտոնական և բուքսիրային շոգենավերը.

զ) Կանչել քաղաքացիներին, վորպես կասկածելիներ, վկաներ, փորձագետներ ու ընթերականներ հանցագործությունների ու խախտումների վերաբերյալ միլիցիայի քննության ներքո գտնվող գործերի առնչությամբ և այդ անձերի չներկայանալու դեպքում յենթարկել նրանց հարկադիր բերման:

է) Մտնել բնակելի շենքերը, նաև հիմնարկների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների շենքերը. 1. հանցագործության մեջ կասկածելի կամ ձերբակալումից փախած անձերին հետապնդելու և վորոնելու. 2. ցուցակագրման և դուրս գրման կանոնների կատարումն ստուգելու և 3. կատարվող հանցագործությունները կասեցնելու համար:

ը) Կատարել քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ձերբակալումներ հետևյալ դեպքերում.

1. Յերբ հանցագործը բռնվել է հենց հանցանքը նախապատրաստելիս, հանցանքը գործելիս կամ անմիջապես հանցագործությունից հետո.

2. Յերբ տուժողը կամ ականատեսները մատնացույց են անում տվյալ անձին իբրև հանցանքը գործողի.

3. Յերբ կասկածելի անձը փորձում է փախչել կամ բռնվում է փախչելիս.

4. Երբ կասկածելի անձը չունի մշտական բնակավայր կամ մշտական զբաղմունք.

5. Երբ չի ստուգված կասկածելի անձի ինքնությունը:

թ) Կատարել հանցագործությունը քննելիս քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով խուզարկումներ և հանույթներ:

ժ) Ձերբակալել վարչական պատասխանատվության ենթարկվող անձերին արձանագրություն կազմելու համար և հարբածներին մինչև զգաստանալը:

ի) Գործադրել զենք ԲԳ Միլիցիայի ծառայության կանոնադրությամբ սահմանված կարգով և նախատեսված դեպքերում:

4. ԲԳ Միլիցիայի շրջանային տեսչի ծառայության պայմանները

13. ԲԳ Միլիցիայի շրջանային տեսուչը պարտավոր է մշտապես ապրել յուր սպասարկած շրջանում և կարող է թողնել այն միմիայն ԲԳ Միլիցիայի շրջանային վարչության պետի թույլտվությամբ:

14. Շրջանային տեսչի բացակայումն իր սպասարկած տերրիտորիայի սահմաններից պաշտոնական ժամանակ թույլատրվում է միայն հետևյալ դեպքերում.

ա) Հանցագործներին հետապնդելու, մինչև վոր այդ հետապնդումն հանձնվի միլիցիայի մի ուրիշ աշխատակցին:

բ) Անհետաձգելի օգնություն հասցնելու ԲԳ Միլիցիայի հարևան տեսչին պատրաստվող հանցագործությունը կանխելու կամ ծագած անկարգությունները դադարեցնելու համար:

գ) Աջակցելու կամ օգնելու հեղեղումների, հրդեհների կամ այլ տարերային աղետների ժամանակ իր սպասարկած տերրիտորիայի հարևան վայրում:

դ) Զեկուցելու ԲԳ Միլիցիայի շրջանային վարչության պետին.

ե) Հանկարծակի հիվանդության դեպքում:

Բոլոր վերոհիշյալ դեպքերում, բացի «գ» կետից, շրջանային տեսուչը պարտավոր է իր բացակայության մասին անհապաղ հաղորդել ԲԳ Միլիցիայի շրջանային վարչության պետին:

15. ԲԳ Միլիցիայի շրջանային տեսուչը պարտավոր է լավ ուսումնասիրել—

ա) Իր սպասարկած տերրիտորիայի ընդհանուր վիճակը.

բ) Հանցագործության վիճակն այդ շրջանում.

գ) Գյուղխորհուրդների սահմանները, բնակչության առանձին կետերի տեղերը, ճանապարհները.

դ) Իմանալ հիմնարկների, հասարակական ու կոոպերատիվ կազմակերպությունների, ձեռնարկությունների, խորհրդային տնտեսությունների, կոլտնտեսությունների, տեղերը.

ե) Իմանալ հիվանդանոցների, բժշկական կայանների, դեղատների և առողջապահական այլ հիմնարկների տեղերը.

զ) Իմանալ հրդեհաշեջ կազմակերպությունների գրությունն ու տեղը:

16. ԲԳ Միլիցիայի շրջանային տեսուչը պետք է իմանա և ունենա իր աշխատանքը կանոնավորող բոլոր հրամանները, հրահանգներն ու շրջաբերականները, նաև միլիցիայի աշխատանքին վերաբերյալ գործող պարտադիր վորոշումների բնագրերը:

ՀՍԽՀ Միլիցիայի Գլխավոր Վարչության կազմտեսչության պետ՝ Գ. ՀԱԽՈՒՄՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ

(Հաստատված է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կողմից 1931 թ. փետրվարի 26-ին).

(Քաղվածք)

ԳԼՈՒԽ II

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Բ. ՎԱՐՉԱԿԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

54. Վարչական ասպարեզում շրջգործկոմը—

ա) Գործող օրենսդրության սահմաններում պայքարում է հանցագործությունների դեմ.

բ) պայքարում և կանխում է հակահեղափոխական գործողությունների ու այլ հանցագործությունները, որոնք ուղղված են խորհրդային կարգերի դեմ, անհրաժեշտ դեպքերում գործադրելով ռազմական ուժ.

գ) համապատասխան մարմիններին ներկայացնում է շրջանի սահմաններում հեղափոխական կարգը պահպանելու նպատակով արտակարգ միջոցներ կիրառելու և վերացնելու մասին առաջարկներ.

դ) կատարում է օրենքով տրված հատուկ լիազորություններն այն դեպքում, երբ շրջանում արտակարգ միջոցներ են կիրառվում, ղեկավարում է միլիցիայի և քրեական հետախուզության գործունեությունը, աջակցում է նրանց ամրացնելու և անձնական կազմը համալրելու գործին.

ե) կազմակերպում է տարերային աղետների դեմ պայքարը.

զ) օրենքով սահմանված կարգով պայքարում է ստրակուցուցիչ գործարքների դեմ և այդ ուղղությամբ ղեկավարում է գյուղական խորհուրդների գործունեությունը.

է) իրագործում է խորհրդային իշխանության ձեռնարկումները, որոնք կապված են գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակությունը, որպես դասակարգ, վերացնելու հետ.

թ) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է հարկադիր աշխատանքներ, առանց կալանքի տակ առնելու.

ժ) հրատարակում է պարտադիր որոշումներ և այդ որոշումները խախտելու համար նշանակում է վարչական պատիժ այն չափով, որը սահմանված է հատուկ օրենքով (հավելված 2).

ի) օրենքով սահմանված կարգով լուծում է ժողովներ և շրջանային նշանակություն ունեցող խորհրդակցություններ ու կոնֆերանցիաներ կազմակերպելու վերաբերյալ հարցերը.

լ) հսկում է առևտրի վերաբերյալ կանոնների կատարման վրա.

խ) անձնական վկայականներ է տալիս խորհրդային քաղաքացիներին, որոնք բնակվում են շրջանի սահմաններում.

ծ) հոգ է տանում կազմակերպելու փոստային և հեռախոսային ցանցը, աջակցում է այս գործում համապատասխան մարմիններին.

կ) միջոցներ է ձեռք առնում հանցագործ վնասումից պահպանելու անտառները, մթերման կետերը, երկաթուղիները, հեռախոսային և հեռագրային ցանցը, էլեկտրոցանցը, ռազմական ճամբարները, աէրոդրոմները, որոնք գտնվում են շրջանի սահմաններում.

հ) աջակցում է իշխանության վերադաս մարմինների ներկայացուցիչներին, նրանց վրա դրված պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ:

ՀՍԽՀ Օրենք. և Կարգադր. Ժողովածու, 1931 թ., № 1, հոդ 27.

II

ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱ

ՀՐԱՀԱՆԳ № 260

ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հուլիսի 17-ին 1931 թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

1. Գերատեսչական միլիցիան հանդիսանում է ԲԳ Միլիցիայի մի մասը, վորը, ինչպես և ընդհանուր միլիցիան, գործում է ԲԳ Միլիցիայի կանոնադրության հիման վրա և հրատարակված կանոնադրքերի, հրամանների, հրահանգների ու կարգադրությունների հիման վրա և օգտվում է բոլոր այն իրավունքներով ու արտոնություններով, վորոնք սահմանված են ԲԳ Միլիցիայի աշխատակիցների համար:

2. Գերատեսչական միլիցիայի պարտականությունն է՝

ա) Պետական ու հանրային գույքի և հատուկ նշանակության գույքի զինված պահպանությունը.

բ) Հեղափոխական կարգի, հանրային անվտանգության պահպանությունը և պայքար հանցագործության դեմ՝ պահպանվող օբյեկտների տերրիտորիայում:

3. Ընդհանուր միլիցիայի ֆունկցիաները կատարելու և պահպանվող ձեռնարկությունների տերրիտորիայում և նրանց կից բանվորական ավաններում հանցագործության դեմ պայքար մղելու համար ձեռնարկության հետ համաձայնության գալով, նշանակվում են լրացուցիչ համապատասխան քանակով շրջանային տեսուչներ, օպերատիվ աշխատակիցներ և միլիցիոներներ: Այդ կազմն ամբողջովին մտնում է միլիցիայի շրջանային վարչությունների համապատասխան պետերի ստո-

րադասության տակ և պահվում է համապատասխան հասարակական և պետական կազմակերպությունների միջոցներով:

4. Գերատեսչական միլիցիան կազմակերպվում է և շահագրգռված հիմնարկությունների ու ձեռնարկությունների համաձայնությամբ. պահելու բոլոր ծախսերը հոգացվում են սպասարկվող հիմնարկությունների ու ձեռնարկությունների միջոցներից:

5. Գերատեսչական միլիցիայի անձնական կազմի քանակը, այդ միլիցիայի պահելու համար բաց թողնվելիք միջոցների չափը սահմանվում են հատուկ պայմանագրերով, վոր կնքվում են միլիցիայի համապատասխան վարչությունների և հիմնարկությունների ու ձեռնարկությունների վարչությունների միջև:

6. Գերատեսչական միլիցիայի կազմակերպության և գործունեության ղեկավարությունը դրվում է միլիցիայի համապատասխան վարչությունների պետերի վրա, վորոնց տերրիտորիայում է գտնվում գերատեսչական միլիցիան:

7. Գերատեսչական միլիցիայի կազմակերպության և ծառայության վրա հսկելու և կոնտրոլի համար, միլիցիայի կենտրոնական և տեղական մարմինների կազմում, անհրաժեշտության դեպքում, հաստատվում են տեսուչների պաշտոններ, վորոնց պահելու ծախսը հոգացվում է գերատեսչական միլիցիայի հիմնարկություններին ու ձեռնարկություններին սպասարկումից ստացված գումարներից:

8. Գերատեսչական միլիցիայից կազմվում են շարային միավորություններ, վորոնց կազմակերպումը նախատեսվում է հատուկ հրահանգով:

9. Գերատեսչական միլիցիայի այն աշխատակիցները, վորոնք ծառայության կարգապահության դեմ հանցագործություն են կատարում, պատասխանատվություն են կրում, վորպես զինվորական հանցա-

գործության համար և ընդդատյա են զինվորական տրիբունալներին. իսկ մնացած բոլոր հանցագործությունների համար յենթակա յեն ընդհանուր դատարանների իրավասության:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Գերատեսչական միլիցիա կազմակերպելու համար այդ բանով շահագրգռված հիմնարկությունները կամ ձեռնարկությունները դիմում են միլիցիայի համապատասխան վարչությանը:

11. Միլիցիայի համապատասխան վարչության պետը, պահպանության յենթակա հիմնարկության և ձեռնարկության ղեկավարի հետ միասին վորոշում են պահպանվող օբյեկտը, պահպանության քանակը և պարզում են նյութական-կենցաղային պայմանները (բնակարանային և այլն):

12. Գերատեսչական միլիցիայի անձնական կազմի թիվը վորոշվում է՝

ա) նշված պոստերի (օրական, ցերեկվա, գիշերվա) քանակով.

բ) հեղափոխական կարգը, հանրային անվտանգությունը պահպանելու և հանցագործության դեմ պայքարելու ֆունկցիաները կատարելու անհրաժեշտությամբ.

գ) ոժանդակող գերատեսչական միլիցիայի համալրումը (пополнение) պատրաստելու համար՝ աշխատակիցների հանգստի օրերի, հերթական արձակուրդի դեպքերի համար և այլն:

13. Համաձայնության գալու դեպքում, համաձայնության կետերը ձեվակերպվում են գրավոր պայմանագրում, վոր կնքվում է միլիցիայի համապատասխան վարչության պետի և հիմնարկության կամ ձեռնարկության ղեկավարի միջև: Պայմանագիրը կնքվում է վոչ պակաս քան մի տարով:

14. Ժամանակով կամ սեզոնային բնույթի օբյեկտների պահպանության կազմակերպման համար թույլ է տրվում պայմանագրեր կնքել գերատեսչական

միլիցիա պահելու համար ավելի կարճ ժամանակով, նայած օբյեկտի բնույթին, բայց վոչ պակաս քան 3 ամսով:

15. Հիմնարկությունների և ձեռնարկությունների հետագա դիմումները՝ լրացուցիչ պոստեր սահմանելու և առաջուց կնքած պայմանագրով նախատեսվածներից դուրս նոր օբյեկտների պահպանության կազմակերպման մասին, ձեւակերպվում են նոր պայմանագրեր կնքելու կարգով:

16. Գերատեսչական միլիցիայի պաշտոնատար անձերի համալրման (комплектование), նշանակման և տեղափոխման կարգը կատարվում է ԲԳ Միլիցիայի համար սահմանված կանոնադրությունների հիման վրա:

III. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

17. Գերատեսչական միլիցիան պահպանության ծառայությունը կատարում է ԲԳ Միլիցիայի պահակային ծառայության կարգով:

18. Գերատեսչական միլիցիայի աշխատակիցները, բացի սպասարկվող հիմնարկության կամ ձեռնարկության պահպանության համար նախատեսված պարտականությունների կատարումից, պարտավոր են—

ա) լիովին տեղյակ լինել հրդեհաշեջ նախազգուշական ամենահասարակ միջոցների մասին և այդ ձեռնարկություններում յեղած հրդեհաշեջ ինվենտարի ու սարքավորման հետ վարվելու կանոնների մասին.

բ) օգտվել կարողանալ տեխնիկական կապի բոլոր միջոցներից (հեռախոս, նշանարարություն և այլն).

գ) խիստ գաղտնի պահել պահպանության կազմակերպման, դռները փակելու ձևերի, կապի սիստեմի մասին և այլն իրեն հայտնի բոլոր տեղեկությունները:

19. Պահպանվող օբյեկտի տերրիտորիայում հեղափոխական կարգը, հանրային անվտանգությունը պահպանելու և հանցագործության դեմ պայքարելու գործում գերատեսչական միլիցիայի աշխատակիցները պարտավոր են՝

ա) միջոցներ ձեռք առնել կանխելու և արգելելու կարգի ամեն տեսակ խախտում.

բ) Թույլ չտալ մշակվող արտադրանքի ապօրինի ձեռք բերում, գնում և վաճառում.

գ) միջոցներ ձեռք առնել հայտաբերելու և կանխելու հիմնարկությանը կամ ձեռնարկությանը պատկանող զանազան գույքի գողությունը և թաքցնելը, նույնպես կանխել և հայտնաբերել տվյալ հիմնարկության և ձեռնարկության տերիտորիայում յեղած պաշտոնատար անձանց պատկանող գույքի գողությունն ու թաքցնելը

դ) Թույլ չտալ կողմնակի անձանց մտնելու հիմնարկությունների ու ձեռնարկությունների տերրիտորիան առանց պատշաճ թույլտվության կամ անցաբանի (պրոպուսկ), յեթե վերջինս սահմանված է.

ե) հետևել, որ ձեռնարկության և հիմնարկության տերրիտորիայից ամեն տեսակ գույք և բեռներ դուրս տանեն և ներս բերեն դրա համար սահմանված անցաբանով.

20. 19-րդ հոդվածում հիշատակված ֆունկցիաների կատարման համար գերատեսչական միլիցիան իրավունք ունի—

ա) շրջգայություններ ու շուրջկալների (облава) կատարել իրեն սպասարկությանը յենթակա տերրիտորիայում.

բ) հանցագործությունների հետ կապված գործերի քննությունը կատարել ԲԳ Միլիցիայի համար սահմանված կարգով:

IV. ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

21. Գերատեսչական միլիցիան իր վրա դրված պարտականությունները կատարելու ժամանակ իրավունք չունի խառնվելու պահպանվող հիմնարկությունների և ձեռնարկությունների տնտեսական և վարչական ֆունկցիաների մեջ::

22. Պահպանվող հիմնարկության և ձեռնարկության վարչությունը պահպանության հետ կապված և գերատեսչական միլիցիայի հատկացված սենյակները պահելու հետ կապված բոլոր հարցերը լուծում է միլիցիայի համապատասխան վարչության պետի հետ միատեղ:

23. Ներքին կարգուկանոնին, գերատեսչական միլիցիայի մարտական ու շարային պատրաստությանը վերաբերող հարցերը, այլ և ծառայությունը կատարելու կանոններին վերաբերող բոլոր հարցերը բացառապես միլիցիայի համապատասխան վարչությունների պետերի իրավասությանն են պատկանում:

24. Պահպանվող հիմնարկության կամ ձեռնարկության ղեկավարը կարող է պահպանության ծառայության կատարման ստուգում կատարել, միայն գերատեսչական միլիցիայի պաշտոնատար անձերի ուղեկցությամբ:

Ընդվորում ձեռնարկության ղեկավարը ստուգման ժամանակ իրավունք չունի վոչ մի ցուցում կամ կարգադրություն անելու պահպանությունը կատարողներին. Նա իր ունեցած նկատողությունների մասին հայտնում է միլիցիայի վարչության համապատասխան պետին:

25. Միլիցիայի վարչության պետը ձեռնարկության կամ հիմնարկության վարչությունից (ադմինիստրացիայից) տեղեկություն ստանալով՝ պահպանությունը կատարելու գործում միլիցիայի աշխատակիցների կողմից թերացումների մասին, պարտավոր է վերացնել նկատված թերացումները, անպայման տեղեկացնելով իր ձեռք առած միջոցների մասին հիմնարկության կամ ձեռնարկության վարչությանը:

V. ԴՐԱՄԱԿԱՆ-ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

26. Գերատեսչական միլիցիայի աշխատակիցների ռոճիկները վորոշվում են այն նորմաներով, վորոնք սահմանված են տվյալ ռայոնի ընդհանուր միլիցիայի աշխատակիցների համար:

27· Այն բոլոր գումարները, որ պայմանագրերի համաձայն ստացվում է հիմնարկություններից ու ձեռնարկություններից, հանդիսանում են միլիցիայի հանրապետական, մարզային և շրջանային նպատակային միջոցներ և հանրապետական ու տեղական բյուջեների մեջ չեն մտցվում։

28· Գերատեսչական միլիցիան պահելու համար բոլոր հատկացումները հիմնարկություններն ու ձեռնարկությունները մտցնում են տեղական վարկային հիմնարկները միլիցիայի հանրապետական, մարզային և շրջանային վարչությունների ընթացիկ հաշիվների մեջ և այն ժամկետներին, որ ցույց են տրվում պայմանագրերում։

29· Աշխատակիցներին աշխատավարձով և բոլոր փոխհատուցումներով (կոմպենսացիա) բավարարելը, սոցապահովագրական վճարումները, կուլտուրական կարիքների համար հատկացումները, Պետապի վճարումները կատարվում են ԲԳ Միլիցիայի համար սահմանված կարգով։

30· Ցեկամուտների ու ծախսերի նախահաշիվներ կազմելու կարգը և գերատեսչական միլիցիան պահելու միջոցների ծախսելը կատարվում է հատուկ հրահանգի հիման վրա, որ հրապարակվում է միութենական հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների կողմից։

31· Գերատեսչական միլիցիային բավարարման իրերով, հանդերձանքով, զինասարքով և մարտամթերքով հայթայթումը կատարվում է կենտրոնացված կարգով ԲԳ Միլիցիայի համար սահմանված տախտակներով (տաբելներով)։

32· Գերատեսչական միլիցիայի ինչպես շարքային, նույնպես և պետերի կազմի աշխատակիցների համար հանրակացարանի շենքի հատկացումը, այլև պահակատան համար շենք հատկացնելը և բոլոր անհրաժեշտ սարքավորումը կատարում է պահպանող հիմնարկությունների կամ ձեռնարկությունների վարչությունը պայմանագրի համաձայն։

33· Գերատեսչական միլիցիայի աշխատակիցների հանրակացարանի և պահակատան լուսավորության, վառելիքի և այլ կոմունալ սպասարկումների մասին հոգ է տանում պահպանվող հիմնարկության կամ ձեռնարկության վարչությունը ԲԳ Միլիցիայի աշխատակիցների համար սահմանված պայմանների հիման վրա։

Պահակատունն իր բոլոր հարմարություններով և կոմունալ սպասարկումներով տրվում է ձրիաբար.

34· Նայած այս կամ այն օբյեկտի պահպանության պայմաններին, հիմնարկության և ձեռնարկության վարչությունն իր միջոցներով կառուցում է անհրաժեշտ թվով տնիկներ (будки), գոնտեր (грибов) կամ դիտելու վիշկաներ, սարքավորելով կապի անհրաժեշտ միջոցներով (հեռախոս, նշանաբարություն և այլն) և լուսավորությամբ։

35· Այն դեպքերում, յերբ պոստերի հեռու ընկած լինելու պատճառով հնարավորություն չի լինում ժամանակին ստուգում կատարել, պահպանվող ձեռնարկության կամ հիմնարկության վարչությունը համապատասխան փոխադրական միջոցներ է տրամադրում գերատեսչական միլիցիայի պաշտոնատար անձերին։

36· Այն հիմնարկություններում կամ ձեռնարկություններում, որտեղ արտադրության պայմանները (քիմիական, ապակու ձեռնակություն և այլն) նպաստում են հանդերձանքի իրերի արագ մաշվելուն, ձեռնարկության կամ հիմնարկության վարչությունը լրացուցիչ քանակով անհրաժեշտ հանդերձանք է տրամադրում։

VI· ԼՈՒԾԱՐՔԻ ՑԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

37· Պայմանագիրը կարելի յե լուծել նախորոք, բայց ոչ շուտ քան 3 ամիս առաջ, մինչև պայմանագրի ժամկետի վերջանալը, գրավոր այդ մասին տեղեկացնելով պահպանվող հիմնարկության կամ ձեռնարկության վարչության կողմից միլիցիայի համապատասխան վարչությանը։

38· Պայմանագրի ժամկետն անցնելուց հետո, յեթե

հիմնարկության կամ ձեռնարկության վարչության կողմից պայմանագիրը լուծելու մասին ժամանակին նախազգուշացում չի լինում, այն ժամանակ պայմանագիրը մնում է իր ուժի մեջ մի ամսվա ընթացքում, ժամկետը վերջանալու օրից սկսած, պայմանագրից բղխող բոլոր հետևանքներով։

39. Ժամանակավոր կամ սեզոնային բնույթի պահպանվող օբյեկտի վարչությունը միլիցիայի համապատասխան վարչության պետին տեղեկացնում է պայմանագիրը լուծելու մասին յերկու շաբաթ առաջ մինչև նրա ժամկետի վերջը։

40. Պայմանագիրն իր ուժը կորցնում է՝

ա) յերբ ժամկետն անցնելուց հետո յերկու կողմերը պայմանագիրը չեն վերակնքում։

բ) յերբ օբյեկտը լուծարքի յե յենթարկվում կամ կործանվում է։

41. Տնտ. հիմնարկության կամ ձեռնարկության կողմից պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարումը՝ հիմք է ծառայում միլիցիայի մարմինների համար հանել պահպանվող օբյեկտի պահպանությունը։

42. Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, այլև նախատեսված դեպքերում ժամկետից առաջ պայմանագիրն ուժը կորցնելուց հետո, հիմնարկության կամ ձեռնարկության վարչությունը պայմանագրով սահմանված ժամկետին, հաշվարկ ներկայացնելու դեպքում, պարտավոր է միլիցիայի համապատասխան վարչության ընթացիկ հաշվի մեջ մուծել դրամական գումարներ՝ հետևյալ վճարումները կատարելու համար.

ա) աշխատավարձը.

բ) օրենքով սահմանված չափով արձակման նպաստ (выходное пособие).

գ) փոխհատուցում չօգտագործած հերթական արձակուրդի համար.

դ) պահպանության լուծարքի հետ կապված բոլոր ծախսերը ծածկելու համար (գույքի տեղափոխում և այլն)։

43. Լուծարքի յենթարկված գերատեսչական միլիցիայի բոլոր բավարարման իրերը, զինասարքը, սպառազինումը և մարտապաշարը վորպես սեփականություն անցնում է միլիցիայի համապատասխան վարչությանը։ Ձիական կազմը, այլև մյուս գույքը, նայած պայմանագրի կետերին, կամ հանձնվում է չհագրգված հիմնարկությանը և ձեռնարկությանը կամ անցնում է վորպես սեփականություն միլիցիայի համապատասխան վարչությանը։

44. Լուծարքի յենթարկված գերատեսչական միլիցիայի բոլոր գործերն ու գրագրությունները պետք է ցուցակով հանձնել միլիցիայի համապատասխան վարչությանը։

ՀՍԽՀ Միլիցիայի Գլխավոր Վարչության պետ՝
Ա. ԴՈՒԼԳԱՐՅԱՆ

Կազմ. ծառայության բաժնի պետ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

III

ՄԻՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ա. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Միլգլխվարչության 2/3 հունիսի 32 թ. №. 240/7.

ԲՈԼՈՐ ՇՐՋՄԻԼՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ —

Այսու ուղարկվում է Ձեզ ի գիտություն և ղեկավարություն ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1932 թ. ապրիլի 13-ի վորոշումը, գյուղական կատարածուների մասին:

Գյուղական կատարածուների կրծքանշանները մոտ օրերս կուղարկվեն Կենտգործկոմի կազմբաժնի կողմից բոլոր շրջանային գործադիր կոմիտեներին:

Առդիր—հիշյալ վորոշումը:

Միլգլխվարչության պետ՝ ԴՈՒԼԳԱՐՅԱՆ
Կազմտեսչության պետ՝ ՀԱԽՈՒՄՅԱՆ

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1932 թ. ապրիլի 13-ին

Գյուղական կատարածուների մասին

Վորպեսզի գյուղական խորհուրդները և Բանվորա-գյուղացիական միլիցիան կարողանան հաջողությամբ և ժամանակին կատարել իրենց պարտականությունները և իշխանության մարմինների հանձնարարությունները հասարակական անվտանգությունը և հեղափոխական կարգը պահպանելու, պետական ու

հասարակական գույքի և բարեկարգության վրա հսկելու նկատմամբ, վորոնք անհրաժեշտ են սոցիալիստական շինարարությունն ապահովելու և գյուղական աշխատավոր բնակչության ինքնագործունեությունը զարգացնելու համար Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

1. Գյուղական խորհուրդներին կից նշանակել գյուղական կատարածուներ:

2. Գյուղական կատարածուներն իրենց գործունեության ընթացքում հենվում են աշխատավորական լայն մասսաների վրա, վորոնց կազմակերպում են գյուղի սոցիալիստական վերակառուցման նպատակով կատարվող բոլոր ձեռնարկումներն իրականացնելու համար: Գյուղական կատարածուներն իրենց վրա դրված գործնական խնդիրներն իրականացնելու համար առաջին հերթին մասնակից են անում միլիցիային օժանդակող բրիգադաների անդամներին, կոլտնտեսականներին և չքավորական խմբակներին:

3. Գյուղական կատարածուները նշանակվում են յուրաքանչյուր գյուղում: Խոշոր գյուղերում ամեն մի 25 մենատնտեսությանը կամ 30 կոլտնտեսությանը նշանակվում է մեկ կատարածու:

Գյուղական կատարածուների թիվն ըստ գյուղի և ըստ ամբողջ գյուղխորհուրդների սահմանվում է գյուղխորհուրդների պլենումի կողմից:

4. Գյուղական կատարածու կարող են լինել 18-ից վոչ պակաս և 50-ից վոչ ավելի տարիք ունեցող այն տղամարդիք, 18-ից վոչ պակաս և 45-ից վոչ ավել տարիք ունեցող այն կանայք, վորոնք զրկված չեն ընտրական իրավունքից:

5. Գյուղական կատարածուների պարտականություններից ազատվում են՝

ա) Գործկոմների և գյուղխորհուրդների նախագահներն ու անդամները.

բ) Խորհրդային կոոպերատիվ հիմնարկությունների ու ձեռնարկությունների մշտական ծառայողները.

գ) Այն անձինք, վորոնք ունեն այդ պարտականությունները կատարելու համար արգելք հանդիսացող հիվանդություններ և ֆիզիկական պակասություններ․

դ) Կանայք ծննդաբերությունից 2 ամիս առաջ և ծննդաբերությունից հետո մանկանը կրծքով կերակրելու ժամանակամիջոցում․

յե) Մինչև 8 տարեկան յերեխաներ ունեցող կանայք, յեթե նրանք հոգացող անձ չունեն․

զ) Կարմիր բանակայինների ընտանիքները Կարմիր բանակում և նավատորմում ծառայելու ժամանակամիջոցում։

6. Գյուղական խորհուրդներին իրավունք է վերապահվում բացառիկ դեպքերում գյուղական կատարածուների պարտականությունները կատարելուց ազատել հետևյալ կատեգորիաներին պատկանող քաղաքացիներին․

ա) Յեթե տնտեսության անդամների մեջ կա տնտեսություն վարող միայն մեկ աշխատունակ անձ․

բ) Յեթե տնտեսությունն այս կամ այն տարերային դժբախտության կամ աշխատավոր ձեռքի պակասության հետևանքով խոշոր չափով վնասվել է։

7. Գյուղական կատարածու չեն կարող լինել բոլոր այն անձինք, վորոնք զրկված են ընտրական իրավունքից, դատավճռով խորհրդային հիմնարկություններում ծառայելու նկատմամբ յենթարկված են սահմանափակման, դատական կամ վարչական կարգով աքսորված են, դատի կամ քննության տակ են և չունեն սահմանված կարգով վերացված դատավարություն։

8. Գյուղական կատարածուները մենատնտեսներից նշանակվում են գյուղխորհրդի կողմից անմիջաբար, իսկ կոլտնտեսական հատվածում կոլտնտեսությունների վարչության կողմից մատնանշված թեկնածուներից։

9. Գյուղական կատարածուների ծառայության տևողությունը սահմանվում է գյուղխորհուրդների վորոշմամբ, բայց մեկ ամսից վոչ պակաս և 3 ամսից վոչ ավելի ժամանակով։

10. Գյուղական կատարածուի պարտականությունները կատարվում են ձրիաբար, սակայն կոլտնտեսության անդամ գյուղական կատարածուների աշխատանքները հաշվառման պետք է յենթարկվեն պատշաճ կոլտնտեսությունների վարչությունների կողմից և յեկամուտները բաշխելիս գյուղական կատարածուներին, պաշտոնը կատարելու ամբողջ ժամանակի ընթացքում, պետք է տրվի վարձատրություն աշխատավարձի միջին նորմայի չափով։

11. Գյուղական կատարածուներն անմիջորեն յենթարկվում են գյուղական խորհրդին և հաշվետու յեն նրանց․ Նրանք միաժամանակ կատարում են միլիցիայի տեղական մարմինների բոլոր կարգադրությունները, վորոնք վերաբերվում են այս վորոշման 14-րդ հոդվածով նախատեսված պարտականությունների կատարմանը։

12. Գյուղական խորհրդի շրջանակում գյուղական կատարածուների հաշվառման ու հրահանգման պարտականությունը դրվում է միլիցիայի շրջանային պետի վրա։

13. Գյուղական կատարածու լինելու իրավունքից զրկվածներն այս վորոշման 6-րդ հոդվածի հիման վրա յեթակա յեն տեղական ֆինանսների վերաբերյալ կանոնադրության համապատասխան տեղական հատուկ տուրքի։

14. Գյուղական կատարածուների վրա դրվում են հետևյալ պարտականությունները․

ա) Մասնակցել գյուղխորհուրդների ընտրական կամպանիայի աշխատանքների ընտրական իրավունքից զրկվածների ցուցակները կազմելու վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու, նաև վերընտրությունների ժամանակի մասին ընտրողներին տեղեկացնելու, ընտրական հանձնաժողովի կարգադրությունները բնակչության հաղորդելու համար։

բ) Հաղորդել քաղաքացիներին իշխանության մարմինների կարգադրությունները։

գ) Հսկել իրենց հանձնարարված տերրիտորիայում կարգ ու կանոնի և անդորրության վրա և միջոցներ

ձեռք առնել խախտված կարգը վերականգնելու համար։

գ) Հսկել գյուղի մաքրության և սանիտարական դրության, ճանապարհների և միլիորատիվ կառուցումների բարվոք դրության վրա։

յե) Հսկել հակահրդեհային կանոնների կատարմանը և կազմակերպել ու հսկել պետական ու հասարակական գույքի պահպանությունը։

զ) Առաջնորդել դեպի գյուղխորհուրդ այն անձանց, վորոնք հանցագործություն են կատարել կամ, վորպես հանցագործության մեջ կասկածելի, ձերբակալվել են միլիցիայի մարմինների և այլ պաշտոնատար անձանց կողմից։

ը) Միլիցիայի մարմինների առաջադրությամբ ուղեկցել պակաս կարևոր հանցագործությունների համար ձերբակալվածներին։

թ) Կարգ պահպանել հասարակական վայրերում և քաղաքացիների մասսայական խմբավորման դեպքերում։

ժ) Ուղեկցել այն արժեքները, վորոնք փոխադրվում են իշխանության մարմիններին հանձնելու համար։

ի) Հաղորդել գյուղխորհուրդներին և միլիցիային կատարված բոլոր հանցագործությունների և պատահարների մասին. միջոցներ ձեռք առնել հանցագործներին ձերբակալելու և հանցագործության հետքերը պահպանելու համար։

լ) Հսկել իշխանության մարմինների պարտադիր վորոշումների իրականացումը և կատարված խախտումների մասին կազմել ակտեր։

խ) Հաղորդել գյուղական խորհուրդներին կամ միլիցիային ողի քաշելու, պահելու, ծախելու, նաև ոպիատային խմիչքների ապօրինաբար վաճառելու դեպքերի մասին։

ծ) Հաղորդել գյուղական խորհուրդներին գյուղում պատահած համաճարակների բոլոր դեպքերի մասին։

կ) Օրենսդրությամբ սահմանված կարգով մասնա-

կից անել բնակչության աշխատանքային և տրանսպորտային պարհակին։

հ) Կատարել գյուղական դատարանների բոլոր վորոշումները և ժողովրդական դատարանների մինչև 100 ռուբլու հասնող գործերի վերաբերյալ վորոշումները։

15. Պատշաճ շրջգործկոմների հատուկ թույլտվությամբ կամ վորոշմամբ կատարածուների վրա կարելի է դնել նաև տեղական պայմաններից բղխող այլ պարտականություններ։

16. Գյուղական կատարածուներն իրենց վրա դրված պարտականությունները կատարելիս վայելում են պաշտոնատար անձի իրավունքները և պատասխանատու յեն վորպես պաշտոնատար անձինք։

17. Պարտականությունները կատարելիս գյուղական կատարածուները պարտավոր են իրենց մոտ ունենալ գյուղխորհուրդներից ստացած վկայականը և կրել հատուկ կրծքանշանը։

18. Այս վորոշմամբ վերացվում է ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1926 թ. փետրվարի 10-ին «Գյուղական Կատարածուների մասին» վորոշումը (ՀՍԽՀ Որ. Կարգ. Ժող., 1926 թ., №.4, հոդ. 31) և այդ վորոշման վերաբերյալ օրենսդրական հետագա փոփոխությունները։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահի
տեղակալ՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահի տեղակալ՝ ԿՈՒՐՍԱՆ

Ի. տ. Կենտգործկոմի Քարտուղարի՝ Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծանոթություն խմբագրության։ Հանձնարարվում է այս հարցում ղեկավարվել նաև «Գյուղական կատարածուների մասին» բացատրական ձեռնարկով (հարց ու պատասխանով), վոր կազմել է ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի մարմինների համար Գ. Հախումյանը. հրատ. ՀՍԽՀ ԲԳ Միլ. Գլխվարչության. 1932 թ. Յերևան։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ

(Հաստատված է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից, 1931 թ. փետրվարի 26-ին)

(Քաղվածք)

Գյուղական խորհուրդների իրավասությունը կառավարչության առանձին ճյուղերում

Բ. ՎԱՐՉԱԿԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

(Հեղափոխական կարգի պահպանությունն ու հասարակական ապահովությունը).

72. Վարչական ասպարեզում գյուղական խորհուրդները՝

ա) հրատարակում են պարտադիր վորոշումներ, քննում և վճռում են թե իրենց և թե շրջանային գործադիր կոմիտեների պարտադիր վորոշումները խախտելու մասին գործերը և գործող օրենսդրության համաձայն մեղավորների վերաբերմամբ կիրարկում են համապատասխան միջոցներ.

բ) գործող օրենսդրության համաձայն բնակչությանը մասնակից անում աշխատանքի, տրանսպորտի և այլ պարհակներին.

գ) կատարում են դատական վճիռները, նաև գանձում են այն տուգանքները, վոր նշանակվում են վարչական և դատական կարգով՝ գոյություն ունեցող օրենսդրության համաձայն.

դ) հայցեր են հարուցում վերացնելու այն ստրկացուցիչ պայմանագրերը, վոր հայտնաբերում են գյուղխորհուրդները, պատասխանատվության են յենթարկում այն անձանց, վորոնք ստրկացուցիչ կացության մեջ են դնում աշխատավորներին, առանձնապես բատրակներին և չքավորներին, նաև հայցեր են հարուցում դատարանում, պաշտպանում են զինվորականների ու նրանց ընտանիքների իրավունքներն ու շահերը, հայցեր են հարուցում վերացնելու այն պայմանագրերը, վորոնք ուղղված են աշխատավորության և պետության շահերի դեմ.

ե) ընդունում են քաղաքացիների դիմումները և լուծում են այդ դիմումները, յեթե վերաբերում են գյուղական խորհուրդների իրավասությանը, կամ իրենց յեզրակացություններով ուղարկում են համապատասխան հիմնարկներին ու կազմակերպություններին.

զ) անձնական վկայականներ են տալիս խորհրդային քաղաքացիներին, վորոնք բնակվում են գյուղական խորհրդի տերրիտորիայի սահմաններում.

է) կատարում են նոտարական գործողություններ, վոր սահմանված է գոյություն ունեցող օրենսդրության մեջ, այն է՝

1. վավերացնում են փոխանորդագրերը.
2. վավերացնում են ստորագրությունների իսկությունը և փաստաթղթերի պատճենների ճշտությունը.

Ծանոթություն 1.—Գործարքների վավերացումը և պատճենների ճշտության ու ստորագրությունների իսկության վավերացումը կատարվում է պատշաճ մակագրություն անելով վավերացվող ու վկայվող փաստաթղթերի վրա և կնիքը դրոշմելով.

Ծանոթություն 2.—Հիշյալ բոլոր նոտարական գործողությունները գյուղական խորհուրդները կատարում են միայն այն դեպքում, յեթե կողմերից գեթ մեկը մշտական բնակություն ունի գյուղական խորհրդի տերրիտորիայի սահմաններում, և յեթե նոտարական գրասենյակներ չկան գյուղխորհրդի սահմաններում:

Ծանոթություն 3.—Գյուղական խորհուրդների գործունեությունը, նրանց կատարման նոտարական գործողությունների վերաբերմամբ ղեկավարում, հրահանգում և ուղղություն է տալիս ՀՍԽՀ Գերագույն Դատարանը:

Ծանոթություն 4.— Գործարքները վավերացնելու նաև գյուղական խորհուրդների կատարած նո-

տարական գործողությունների համար տուրքե-րը գանձվում են առանձին հրամանների կարգով, որ հրատարակում է Ցինժողկոմատը:

թ) հոգ են տանում գյուղական խորհրդի տերրիտորիայի սահմաններում կազմակերպելու փոստային և հեռախոսային կապը, այդ գործում ամեն կերպ աջակցություն են ցույց տալիս համապատասխան մարմիններին.

ժ) արձանագրում են քաղաքացիական կացության ակտերը.

ի) պահում են ծխացուցակները, կատարում են գյուղական տերրիտորիայի սահմաններում ապրող բնակչության հաշվառումը.

լ) կազմում են գյուղական կատարածուների ցուցակները, հերթականության կարգով և ղեկավարում են նրանց գործունեությունը.

խ) գործող օրենսդրության համաձայն միջոցներ են ձեռք առնում պահպանելու հեղափոխական կարգը.

ծ) կարգապահական միջոցներ են գործադրում այն անձանց վերաբերմամբ, վորոնց ընտրել, նշանակել, կամ հաստատել է գյուղական խորհուրդը.

կ) հսկում են յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց անջատելուն վերաբերյալ օրենքների կատարման վրա.

հ) թույլտվություն են տալիս կրոնական յերթերի վերաբերյալ կամ արգելում են այդ յերթերը սանիտարական և այլ պատճառներով. կրոնական յերթի թույլտվություն ստանալու մասին միջնորդությունը պետք է հարուցել յերթ կազմակերպելուց յերեք որ առաջ.

ձ) հսկում են ընկերությունների, ժողովների և հասարակական տեսարանների վերաբերյալ սահմանված կանոնների կատարման վրա.

ղ) հսկում են շուկայի և տոնավաճառի առեվտրի վրա.

ճ) պայքար են մղում հանցագործությունների (գաղտնի ոգեգործության, անասնագողության, սրիկայության ու խաղաքների և այլն) դեմ, գոյության

ունեցող օրենսդրության հիման վրա ձերբակալում են կալանավորման յենթակա անձանց և ուղարկում են շրջանային միլիցիա.

մ) միջոցներ են ձեռք առնում հանցավոր վնասումից պահպանելու անտառները, յերկաթուղու բեռնաթափման կետերը հեռախոսները, հեռագրերի և ելեկտրալարերի ցանցը, ռազմական ճամբարներն ու անբողրոմները, վորոնք գտնվում են գյուղական խորհրդի տերրիտորիայի սահմաններում.

յ) կատարում են իշխանության վերադաս մարմինների կարգադրությունները և տեղեկացնում են շրջանային գործադիր կոմիտեյին այն դեպքերի մասին, յերբ ընդդիմանում են կատարել այդ կարգադրությունները.

ն) աջակցում են իշխանության վերադաս մարմինների ներկայացուցիչներին կատարել նրանց վրա դըրված պաշտոնական պարտականությունները.

շ) գյուղական խորհրդի տերրիտորիայի սահմաններում կազմակերպում են հարկադիր աշխատանքներ և հսկում են հարկադիր աշխատանքների կատարման վրա:

«ՀՍԽՀ Օրենք. և Կարգադր. Ժողովածու», 1931 թ. № 1, հոդ. 29:

Բ. ՄԻԼԻՑԻԱՅԻ ՕԺԱՆԴԱԿ ԲՐԻԳԱԴՆԵՐ

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

17 հոկտեմբերի 1931 թ.

«Միլիցիայի մարմիններին օժանդակող ընկերությունների մասին»*):

ա) Հասարակական կարգն ու անվտանգությունը պահպանելու գործում: Բանդիտների, խախտողների դեմ պայքարելու գործում: Բանվորա-գյուղացիական Միլիցիայի գործունեությունը

*) Միլիցիային օժանդակող ընկերությունները հետագայում վերածվում են օժանդակ բրիգադների, համաձայն ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1932 թ. հուլիսի 15-ի որոշման:

աշխատավորական լայն մասսաների կողմից ակտիվ կերպով մասնակցելու ներգրավման նպատակներով, ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում ե`

1. Բանվոր-գյուղացիական Միլիցիայի օժանդակելու համար քաղաքներում, քաղաքատիպ և բանվորական վայրերում, շրջանային, կենտրոններում և Հանրապետության գյուղական բնակավայրերում թույլատրել հիմնելու կամավոր ընկերություններ:

2. Հիշյալ ընկերությունները հանդիսանում են տեղական նշանակություն ունեցող կամավոր կազմակերպություններ, վորոնք գտնվում են քաղաքային և շրջանային միլիցիայի վարչությունների կից:

3. Միլիցիայի օրգաններին օժանդակող ընկերությունները կրում են «ՄԻԼՈԺԸՆԿ» կրճատ անունը:

4. Միլոժընկի անդամները կարող են լինել յերկու սեռի այն քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել ե, ոգտվում են, համաձայն ՀՍԽՀ սահմանադրության, ընտրական իրավունքներով և դատարանով արատավորված չեն:

Ծանոթություն.—Միլոժընկ-ի անդամագրության կարգը կանոնավորում ե ընկերության կանոնադրքով:

5. Միլուժընկի խնդիրներն են.

ա) Ընկերության անդամների կողմից միլիցիայի օրգանների առանձին հանձնարարությունների անմիջական կատարումը` հասարակական կարգի ամեն տեսակի մանր խախտումների դեմ պայքարելու ասպարեզում և

բ) Միլիցիայի օրգաններին ամրապնդելու բոլոր տեսակի օժանդակ միջոցներով և նրանց աշխատանքների մեթոդների կատարելագործումը:

6. Միլոժընկ-ի վրա դրված խնդիրներն իրականացնելու համար իրա անդամներին իրավունք ե տրվում.

ա) Կառավարական օրգանների պարտադիր վորոշումները խախտելու արթիվ արձանագրություններ կազմել.

բ) Հասարակական կարգի խանգարումների վերաբերյալ միջոցներ ձեռք առնել, անհրաժեշտ դեպքում այդ խախտումների առթիվ միլիցիայի օրգաններին հաղորդել և

գ) Մինչև կառավարական օրգանների ներկայացուցիչի գալը հանցագործության հետքերը պահպանել:

7. Միլոժընկ-ի հրահանգումը և ոպերատիվ ղեկավարություն իրագործում ե Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Գլխավոր Վարչությունը իր տեղական օրգանների միջոցով:

8. Միլիցիայի օրգանների կողմից Միլոժընկ-ի անդամների վրա, փոխադարձ համաձայնությամբ, կարող են դրվել հետեվյալ աշխատանքները.

ա) Հանցավոր ելեմենտներ հայտնաբերելու նպատակով միլիցիայի կողմից կազմակերպվող շուրջկալներին մասնակցելը.

բ) Միլիցիայի օրգաններին խուզարկություններ կատարելու ժամանակ ոգնություն ցույց տալը, վորպես ընթերակայ կամ պահակ.

գ) Հերթապահություն` միլիցիայի օրգաններում.

դ) Պահակատեղային ծառայություն տանելը.

յե) Ձերբակալվածներին ուղեկցելը և

զ) Հասարակական վայրերում կարգի հսկողությունը:

Ծանոթություն.—Այդ դեպքերում Միլոժընկ-ի անդամները կարող են զենք ստանալ, վորպեսին ոպերացիա վերջանալուց հետո պետք ե վերադարձնել միլիցիայի օրգաններին:

Մշտապես. զենք կրելու իրավունքը Միլոժընկ-ի անդամները ստանում են ընդհանուր հիմունքներով:

9. Իրենց վրա դրված պարտականությունները կատարելիս, դժբախտ պատահարների հետեվանքով աշխատունակությունը կորցնելիս Միլոժընկ-ի անդամ աշխատունակությունը կորցնելիս Միլոժընկ-ի անդամները, իսկ նրանց մահվան դեպքում ընտանիքի անդամներն իրավունք ունեն ընկերությունից լրացուցիչ

ցիչ նպաստ տանալու, ընկերությունը նման նպատակների համար իրավունք ունի իր կարգադրության տակ մուծվող գումարներից հատուկ ֆոնդեր ստեղծելու։

10․ Միլօժընկ-ի անդամները պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ իրենց անօրինական գործողությունների համար պատասխանատվության են յենթարկվում վորպես պաշտոնատար անձինք։

11․ Ընկերության անդամներն իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ պետք է ունենան համապատասխան վկայականներ և կրծքանշանը։

12․ Միլիցիայի օրգանների օժանդակող յուրաքանչյուր մի տեղական ընկերություն (Միլօժընկ) պետք է ունենա իր կանոնագիրքը, մշակած համաձայն միլիցիայի գլխավոր վարչության կողմից հրատարակված օրինակելի կանոնագրքի և պետք է տոմսը գրվի սահմանված կարգով։

Ժողկոմխորհի նախագահի տեղակալ՝ Ա․ ՅԵՐԶՆԿՅԱՆ

Ժողկոմխորհի գործերի կառավարիչ՝

Ի․ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ժողկոմխորհի քարտուղար՝ Լ․ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1932 թ․ հուլիսի 15-ի․

ԼՍԵՑԻՆ․

1․ ԲԳ Միլիցիային օժանդակող ընկերությունները միլիցիայի մարմիններին կից օժանդակման բրիգադների վերածելու մասին։ (Գործ № Ր—7110—1)։

Զեկուցող՝ Ի․ Կարապետյան։

ՎՈՐՈՇԵՑԻՆ․—

1․ Կանոնադրության նախագիծը հաստատել։

Ժողկոմխորհի նախագահի տեղակալ՝ Ա․ ՅԵՐԶՆԿՅԱՆ

Ժողկոմխորհի գործերի կառավարիչ՝ Ի․ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՕՐԳԱՆՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

1․ Ընդհանուր դրույթյուններ․

1․ Բանվորա-գյուղացիական Միլիցիայի օժանդակող բրիգադները հանդիսանում են բանվորների և աշխատավորների կամավոր կազմակերպությունները պետական աշխատանքը կատարելու գործում, իրացնելով ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼԻՉ ԼԵՆԻՆԻ պատգամն այն մասին, որ «մեր նպատակը հանդիսանում է յուրաքանչյուր աշխատավորի կողմից պետական պարտականությունների ձրի կատարումը, արտադրական աշխատանքի ութ ժամյա դասը վերջացնելուց հետո»․

2․ ԲԳ Միլիցիային օժանդակող բրիգադներն իրենց համար խնդիր են դնում աջակցելու և ակտիվ հարենց ... ԲԳ Միլիցիային տարականական օգնություն ցույց տալու ԲԳ Միլիցիային

աշխատանքի ընթացքում և կազմակերպվում են ֆաբ-
րիկներում, գործարաններում, հիմնարկություններում,
խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում,
ՄՏԿ (Մոտորա-տրակտորային կայաններում) և ա-
ռանձին բնակավայրերում:

3. Աշխատավորների աշխատանքը ԲԳ Միլիցիայի
օրգաններին օժանդակող բրիգադներում միևնույն
ժամանակ ԲԳ Միլիցիայի պայմաններում սոցիալիս-
տական համատեղության միակ հնարավոր ձևն է հան-
դիսանում, որը կայանում է նրանում, որ բանվոր-
ները արտադրության մեջ մնալով, ձրիաբար կատա-
րում են խորհրդային ապարատի մեջ կառավարման
առանձին ֆունկցիաները:

4. Բրիգադները գտնվում են ԲԳ Միլիցիայի հա-
մապատասխան վարչություններին և քաղաքային
բաժանմունքներին կից և իրենց աշխատանքն անց են կաց-
նում նրանց անմիջական ղեկավարությամբ: ԲԳ Մի-
լիցիայի շրջանային վարչություններն իրականացնում
են շրջանային կենտրոնից դուրս գտնվող բրիգադների
ղեկավարությունը ԲԳ Միլիցիայի համապատասխան
յենթաշրջանային տեսչի միջոցով:

5. ԲԳ Միլիցիային օժանդակող բրիգադի անդամը
կրճատ կոչվում է «Միլոժբրիգադական»:

2. Օժանդակող բրիգադների խնդիրները

6. ԲԳ Միլիցիայի օժանդակող բրիգադների հիմնա-
կան խնդիրներն են՝

ա) ԲԳ Միլիցիայի օրգաններին ակտիվ օգնություն
և աջակցություն ցույց տալը նրանց վրա դրած պար-
տականությունները կատարելու գործում, հանցավորու-
թյան դեմ պայքարելու, հեղափոխական կարգն ու հա-
սարակական անվտանգությունը պահպանելու, խուլի-
գանության, խորհրդային օրենքների խախտումների
դեմ պայքարելու համար, նույնպես և օգնությունն ու
աջակցությունը քաղաքների բարեկարգության ու մաք-
րության օրինակելի վիճակին հասցնելու գործում:

բ) Ակտիվ մասնակցությունն աշխատավորների մի-
ջից յեղած կարգը խախտողների դեմ պայքարի հասարա-
կական միջոցների կազմակերպման գործին, մասնավո-
րապես հարբեցողության, գաղտնի գինեվաճառության
փողոցներում կարգը խանգարելու դեմ և այլն:

3. Օժանդակող բրիգադների կազմը և նրանց հա-մալրման կարգը

7. Օժանդակող բրիգադի անդամներ կարող են լինել
աշխատավորները, առաջին հերթին առաջավորները
(հարվածայինները, ակտիվ հասարակական աշխատող-
ները և այլն), որոնք հասել են 18 տարեկան հասակին,
օգտվում են խորհուրդների ընտրության իրավունքնե-
րով, դատի և հետաքննության տակ չեն գտնվում, գի-
տակցում են օժանդակող բրիգադների նպատակներն ու
խնդիրները և կարող են այդ խնդիրները կատարել:

8. Օժանդակող բրիգադների անդամներ չեն կարող
լինել այն անձնավորությունները, որոնք նկատվել են
հարբեցողության ու խուլիգանության մեջ, պոկողները,
արտադրության կազմալուծողները, դասակարգայնորեն
անհարազատ տարրերը և այն բոլոր անձնավորություն-
ները, որոնք իրենց անարժան արարքներով կարող են
վարկաբեկել աջակցության բրիգադներին և ԲԳ Միլի-
ցիայի օրգաններին.

9. Վերոհիշյալ պահանջներին բավարարող անձնա-
վորությունները և միլիցիայի օժանդակող բրիգադնե-
րի մեջ որպես անդամ մտնել ցանկացողներն այդ մասին
համապատասխան դիմում են տալիս տեղական կազմա-
կերպություններին՝ ֆաբրիկ-գործարանային կամ
խորհտնտեսական արհեստակցական կազմակերպությա-
նը, կոլտնտեսության վարչությանը կամ գյուղխորհր-
դին, որոնք դիմումները քննելուց և հաստատելուց
հետո կազմում են նրանց ցուցակը և փակցնում են այդ
ցուցակն աչքի ընկնող տեղում, ձեռնարկության բանվոր-
ների և ծառայողների կողմից (խորհտնտեսությունների
բանվորների, կոլտնտեսականների և այլն) բացարկ
(ОТВОД) ներկայացնելու համար:

10. Յեթե ոժանդակող բրիգադների անդամության մեջ մտնելու ցանկացողների ցուցակները հրապարակելու որից 15 որ անցնելուց հետո բացարկ չստացվի, պրոֆկազմակերպությունները (կոլտնտեսությունների վարչությունները, գյուղխորհուրդները) յուրաքանչյուր թեկնածույին հանձնարարական են տալիս, իսկ բոլոր նյութերը նրա բնութագրի հետ միասին ուղարկում են միլիցիայի համապատասխան որգաններին նրան հաստատելու և թեկնածուների ցանկի մեջ մտցնելու համար:

11. Տեղական խորհուրդների անդամները, վորոնք ընտրվել են տվյալ ձեռնարկություններից, կազմակերպություններից, հիմնարկություններից, գյուղերից և այլն, յեթե ցանկանան, մտնում են միլիցիայի ոժանդակող բրիգադի անդամության մեջ, առանց 9-րդ կետում հիշված կանոնները պահպանելու, անմիջականորեն դիմում տալով միլիցիայի համապատասխան որգանին:

12. Միլիցիայի ոժանդակող բրիգադների անդամների կազմը բաժանվում է յերկու կատեգորիայի՝ իսկական անդամների ու թեկնածուների: Ոժանդակող բրիգադների անդամության մեջ բոլոր նոր մտնողները, վորպես կանոն մտցվում են թեկնածուների ցուցակի մեջ, 6-ամսյա ստաժ անցնելու համար: Այդ ժամկետն անցնելուց հետո, յեթե թեկնածուները գործնական աշխատանքում իրենք բավականին ակտիվ ցույց տան ու նրանց արատավորող վոչ մի արարքում նկատված չլինեն, բրիգադի վորոշմամբ և միլիցիայի որգանի համապատասխան պետի հաստատումից հետո, նրանք փոխադրվում են իսկական անդամների շարքերը: Միլիցիայի համապատասխան որգանների պետերն իրենց հայեցողությամբ և անձնական պատասխանատվությամբ իրավունք ունեն առանձին անձնավորություններին ընդունելու բրիգադների անդամության մեջ, առանց թեկնածուական ստաժին անցնելու:

4. Ոժանդակ բրիգադների կազմությունը

13. Միլիցիայի ոժանդակող յուրաքանչյուր բրիգադ, վոր կազմակերպվում է տվյալ գործարանում, ֆաբրիկայում, խորհտնտեսության, կոլտնտեսության

մեջ, ՄՏԿ-ում և այլն, ստեղծվում է 20 խմբակային անդամից վոչ ավելի կազմով.

ա) Բրիգադները կարելի յե ստեղծել 5 խմբակային անդամ յեղած ժամանակ.

բ) Այն ձեռնարկություններում, վորտեղ ոժանդակող բրիգադների անդամների թիվը 20 մարդուց ավելի յե, կազմակերպվում են մի քանի բրիգադներ, յուրաքանչյուր 20 մարդուց վոչ ավելի անդամների կազմով:

14. Բրիգադի գլուխը կանգնում է բրիգադիրը, վորն առաջադրվում է տվյալ բրիգադի անդամների կողմից և հաստատվում է միլիցիայի համապատասխան որգանի պետի կողմից:

15. Յեթե ձեռնարկության մեջ գոյություն ունեն մի քանի բրիգադներ, վերջիններս բրիգադիրների կազմից մեկին առաջադրում են վորպես ավագ բրիգադիր, վորին միլիցիայի համապատասխան որգանի պետի կողմից հաստատելուց հետո, յենթարկվում են բոլոր բրիգադները:

16. Բրիգադիրների գործունեության շրջանակի մեջ մտնում են՝

ա) Միլիցիայի որգանների հանձնարարությունների կատարումը.

բ) Բրիգադների և դրանց անդամների կանոնավոր գործունեության ղեկավարությունն ու հսկողությունը.

գ) Բրիգադների անդամների կազմից վերակարգ նշանակելը, համապատասխան առաջադրությունների կատարման համար.

դ) Բրիգադների անդամների որապահության, հերթապահության պահպանումը, ԲԳ Միլիցիայի համապատասխան վարչություններին կամ քաղաքային բաժանմունքներին կից.

յե) Աջակցության բրիգադների անդամների մասնագիտական պատրաստության հսկողությունը.

զ) Բրիգադների ժողովների կամ խորհրդակցությունների հրավիրումը.

է) Տեղական խորհուրդների և հասարակական կազմակերպությունների միջոցով աջակցության բրիգադ-

ների մեջ նոր անդամներ ներգրավելու համար աշխա-
տանք տանելը.

ը) Բրիգադի և նրա անդամների աշխատանքի
հաշվառումը.

Ծանոթություն.— Ավագ բրիգադիրը,
միացնելով բոլոր բրիգադները տվյալ ձեռնար-
կության մեջ և այլն, կենտրոնացնում է նրանց
աշխատանքի ընդհանուր ղեկավարությունը:

5. Օժանդակող բրիգադների անդամների իրավունքներն ու պարտականությունները

17. ԲԳ Միլիցիայի օժանդակող բրիգադների
անդամները կատարում են հետևյալ պարտականու-
թյունները.

ա) Կատարում են ԲԳ Միլիցիայի օրգանների հա-
մապատասխան հանձնարարությունները, հեղափոխական
կարգը և հասարակական անվտանգությունը պահպա-
նելու վերաբերյալ և այլ հանձնարարությունները, վո-
րոնք կապված են ԲԳ Միլիցիայի ֆունկցիաների և
խնդիրների հետ.

բ) Օգնություն և աջակցություն են ցույց տալիս
տարերային աղետների վերացման գործում.

գ) Մասնակցում են միլիցիայի աշխատանքին բնա-
կության բոլոր վայրերը մաքուր և բարեկարգ վիճակի
հասցնելու համար.

դ) Մասնակցում են խորհտնտեսական և կոլտնտե-
սային գույքը պահպանելու գործին.

ե) Որսապահություն են անում ԲԳ Միլիցիայի օր-
գաններին կից.

զ) Պոստային ծառայություն են տանում կարիք
յեղած դեպքում, օգնություն են ցույց տալիս փողո-
ցային շարժումը կանոնավորելու համար, մասնակցում
են ԲԳ Միլիցիայի կողմից անցկացվող օպերացիաների
հանցավորության դեմ պայքարելու համար և մաս-
նակցում են կալանավորների ուղեկցությանը:

18. Բրիգադի յուրաքանչյուր անդամ պարտավոր
է անցնել շարային, մարտական և միլիցիական մաս-

նագիտական պատրաստությունը սահմանված ծրա-
գրով:

Միլիցիայի օժանդակող բրիգադների անդամ-
19. ները իրենց պարտականությունները կատարելու ժա-
մանակ կարող են, օպերատիվ աշխատանքի ժամա-
նակամիջոցում, միլիցիայի օրգաններից զենք ստանալ.
վորը նրանք, առաջադրությունը կամ հանձնարարու-
թյունը կատարելուց հետո, վերադարձնում են այն
օրգանին, վորը տվել է զենքն աջակցության բրիգադ-
ների այն անդամներին, վորոնք զենք կրելու թույլտվու-
թյուն ունեն, այդպիսին նրանք կրում են դրա համար
սահմանված կանոնների համաձայն:

Աջակցության բրիգադների անդամները
20. պարտավոր են ճիշտ և առանց առարկելու յենթարկվել
սահմանված կարգապահությանը, կարգ պահպանել և
խստորեն կատարել իրենց ղեկավարների կարգադրու-
թյունները և միլիցիայի օրգանների օպերատիվ առա-
ջադրությունները:

Կարգապահական խախտման աշխատանքի ըն-
21. թացքում, թափթփվածության և իրենց ղեկավարների
ու միլիցիայի օրգանների օրինական կարգադրություն-
ները չկատարելու համար՝ օժանդակող բրիգադների
անդամները յենթարկվում են հասարակական ազդեցու-
թյան միջոցներին, մինչև բրիգադի անդամությունից
հեռացնելը ներառյալ:

Միլիցիայի օժանդակող բրիգադների ան-
22. դամները, նրանց վրա դրած պարտականությունները կա-
տարելու ժամանակ, իրենց ապօրինի գործողությունների
համար քրեական պատասխանատվություն են կրում
միլիցիայի աշխատողների հետ համահավասար, վորպես
պաշտոնատար անձնավորություններ:

Օժանդակող բրիգադների անդամները, նրանց
23. վրա դրած պարտականությունների կատարման ժամա-
նակ, պետք է ունենան համապատասխան վկայական և
սահմանված կրծքանշան, վորը մեկն է միլիցիայի
աջակցության բոլոր բրիգադների համար ամբողջ Միու-
թյան տերրիտորիայի վրա:

24. Օժանդակող բրիգադների անդամությունից դուրս գալը կարող է տեղի ունենալ՝

ա) Դուրս յեկողի անձնական ցանկությամբ.

բ) Ընտրական իրավունքներից զրկելու հետևանքով.

գ) Միլիցիայի օրգանների կարգադրությամբ.

դ) Բրիգադի անդամների ժողովի վորոշմամբ, միլիցիայի համապատասխան օրգանի հետագա հաստատումով.

ե) Բրիգադի անդամին հանձնարարող կազմակերպության կողմից յետ կանչելու դեպքում:

25. Օժանդակող բրիգադների արձակումը կարող է տեղի ունենալ միմիայն միլիցիայի օրգանների կարգադրությամբ:

Վ. Գ. 60.

29/1—33 թ.

—

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՀՍԽՀ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

№ 011/7 Մ. Գ. Վ. Բովանդակություն.—Միլիցիայի օժանդակող բրիգադների մասին.

Բոլոր քաղ և շրջմիլպետերին

1932 թ. հուլիսի 20-ին:

Փորձը ցույց է տալիս, վոր ԲԳ Միլիցիայի օժանդակող ընկերությունների (Միլոժընկ) ղեկավարման ձևը չի համապատասխանում միլիցիայի կողմից նրանց առաջադրված նպատակներին: Բացակայում է կենդանի կապ Միլոժընկ-ի և միլիցիայի հրամանատարության միջև, վորպիսի հանգամանք խանգարում է Միլոժընկ-ի աշխատանքների կանոնավոր ծավալմանը:

ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1932 թ. հուլիսի 15-ի վորոշման համաձայն միլիցիայի օժանդակող ընկերությունը վերակազմվում է միլիցիայի օժանդակող բրի-

գադների: Այդ վերակազմումը հնարավորություն է տալիս ընդհուպ մոտեցնել Միլոժբրիգադները ԲԳ Միլիցիային և ապահովել նրանց կանոնավոր ղեկավարումը գործնական աշխատանքում:

Ուստի միլիցիայի օժանդակող բրիգադները պետք է կազմակերպվեն ըստ արտադրական ձեռնարկությունների՝ անմիջորեն գործարաններում, արհեստանոցներում, կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում: Ամեն մի բրիգադը պետք է բաղկացած լինի վոչ ավելի քան 25 հոգուց: Դա հնարավորություն կտա ավելի լավ ղեկավարել նրանց ու սիստեմատիկորեն հսկել նրանց աշխատանքին: Իրենց աշխատանքներում բրիգադները յենթարկվում են ամիջորեն միլիցիայի այն մարմիններին, վորոնց շրջաններում նրանք կազմակերպվել են: Մեր առաջին նպատակն է լինելու՝ ստեղծել առաջին հերթին քաղաքներում և խոշոր կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում Միլոժբրիգադներ, վորոնք օգնելու յեն միլիցիային պայքարելու հասարակական կարգի խանգարողների ու սոցիալիստական գույքի հափշտակիչների դեմ: Այդ բրիգադների մեջ պետք է ներգրավել լավագույն բանվորներին, հարվածայիններին, արտադրական ձեռնարկություններից:

ԲԳ Միլիցիան պետք է ուժեղացնի յուր հրահանգչական աշխատանքը բրիգադների մեջ, պետք է նրանց տա վորոշակի առաջադրանքներ, օգնի տիրապետելու միլիցիական աշխատանքի տեխնիկային:

Միլոժբրիգադների նպատակն է լինելու՝ ամեն որ կանոնավորապես մասնակցել ԲԳ Միլիցիայի աշխատանքներին, բարձրացնել յուր քաղաքական զարգացման մակարդակն ու ամրացնել կարգապահությունն յուր աշխատանքի բոլոր ճյուղերում:

Ծավալելով սոցմրցումն ու հարվածայնությունը ԲԳ Միլիցիայի տեղական մարմինների ու բրիգադների, նաև առանձին բրիգադիրների միջև, մենք կապահովենք Միլոժբրիգադի աշխատանքն օրինակելի կարգ կազմակերպելու և պահպանելու ուղղությամբ:

Միլոժբրիգադների աշխատանքի հաջող կազմակերպման ու զարգացման ապահովման համար անհրաժեշտ է տեղերում անշեղ ղեկավարվել «Միլիցիային օժանդակող բրիգադների կանոնադրությամբ» և ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1931 թ. 17 հոկտեմբերի 17 վորոշմամբ:

ԲԳ Գլխավոր Վարչության պետ՝

Ա. ԴՈՒԼԳԱՐՅԱՆ

Միլգլխվարչության կազմտեսչության պետ՝

Գ. ՀԱԽՈՒՄՅԱՆ

Գ. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՍԽՀ Միլիցիայի Գլխ.
Վարչության պետ՝ ԴՈՒԼԳԱՐՅԱՆ
21 սեպտեմբերի 1932 թ.
ք. Յերևան.

ՀՐԱՀԱՆԳ № 219 ա/4

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Ընդհանուր հիմունքներ

1. Կոլտնտեսության գույքը՝ բնակելի և վոչ բնակելի շենքերը, կենդանի ու անշունչ ինվենտարը, ցանքսերը, բերքը և այլն կուլակների ու վնասարարների հարձակումից, ինչպես նաև հանցագործ տարրերից և վանդալ դժբախտ դեպքերից պահպանելու նպատակով կոլտնտեսություններում կազմակերպվում է պահակային պահպանություն, հնարավորության սահմաններում, մշտական պահապաններից:

2. Պահապանները նշանակվում են կոլտնտեսականներից, կոլտնտեսության վարչության կողմից, նախ և առաջ միլիցիային օժանդակող բրիգադներից և աշխատում են կոլտնտեսության վարչության անդամներից մեկի անմիջական ղեկավարությամբ, վորը հատկա-

պես նշանակվում է այդ նպատակի համար և պատասխանատու չէ պահպանության դրության համար:

3. Պահակային պահպանության գործի հսկողությունը և ստուգումը կատարում են միլիցիայի տեղական օրգանները, այդ նպատակի համար հատուկ նշանակված անձանց միջոցով:

Միլիցիայի աշխատակիցները պահապաններին ցուցումներ են տալիս և կարող են պահանջել նրանց փոխելու, յեթե նրանք պարզապես չեն համապատասխանում իրենց կոչմանը: Պահպանության հսկողության և վերահսկողության վերաբերյալ կարգը սահմանում են քաղ. և շրջմիլվարչությունները:

4. Յուրաքանչյուր պահապանին, կոլտնտեսության վարչության անդամը, վորը վարում է պահպանության գործը, պարտավոր է նշել պահպանության շրջանը (հողամասը, շինությունները, բանջարանոցները, այգիները և այլն), պահապանների տեղը և վորոշել պահակային ծառայություն տանելու ժամանակը (փոխեր):

5. Պահապանները պահակակետում անհրաժեշտ դեպքերում կարող են զինված լինել հրացանով (վոչ զինվորական տիպարի) կամ սառը զենքերով:

6. Կոլտնտեսությունների վարչությունները պետք է հոգ տանեն, վորպեսզի անպայման պահպանության տակ առնվեն կարևոր օբյեկտները, ինչպիսին են՝

ա) Բերքը դաշտում դեռ չհնձած, կամ հնձած, դիզած և այլն.

բ) Հացահատիկների պահեստները, գյուղատնտեսական ինվենտարը.

գ) Համայնացված անասունները, տրակտորները, մեքենայական մասերը և այլն.

դ) Բնակելի և վոչ բնակելի շինությունները.

ե) Բանջարանոցները, այգիները, բախչաները.

2. Պահակային պահպանության տանելու կարգը

7. Պոստում կանգնած պահապանը կատարում է կոլտնտեսության վարչության նախագահի կամ պահ-

պանության ղեկավարող նույն վարչության անդամի կարգադրությունները:

Պահապանին պոստից կարող են վերցնել միմիայն վերև թված անձինք:

8. Պահապանը անցնելով իրեն պոստը, պետք է գիտենա՝

ա) Յուր պարտականությունները պահպանության վերաբերմամբ.

բ) Իրեն հանձնված պահպանության օբյեկտները.

գ) Հարևան պահապանների գտնվելու տեղը.

դ) Հակահրդեհային միջոցների գտնվելու տեղը.

ե) Մյուս պոստերի պահապանների կողմից տրվող բոլոր սահմանված ազդանշանները.

9. Պոստապահ պահապանը պոստն ընդունելու պահին նախ և առաջ պարտավոր է ստուգել, թե ինչ դրության մեջ է գտնվում պահպանվող գույքը, տեղում են արդյոք փականքները, հացահատիկների պահեստների, ամբարների փակիչները, կանոնավոր են դեզերը թե ոչ և այլն:

Որևէ անկանոնություն կամ վնասվածք, կորուստ և այլն հայտնաբերելու դեպքում պահապանը պարտավոր է այդ մասին զեկուցել վարչության անդամին:

10. Պահապանը պարտավոր է ամբողջ ժամանակ արթուն պահպանել իրեն վստահած գույքը, պարբերաբար ստուգել այդպիսին, կատարել շրջագայություններ (обходы) և աշխատել, որպեսզի ամբողջ գույքը լինի հսկողության տակ: Նա չպետք է քնի և չի կարող իր պոստը թողնել մինչև փոխվելը, կամ մինչև այն անձի հրամանը, որին նա ենթարկվում է. արգելվում է նույնպես կատարել այնպիսի աշխատանք, որը չի մտնում պահպանության պարտականությունների մեջ: Ծխելն արգելվում է այն տեղերում, որտեղ վտանգավոր է հրդեհի տեսակետից:

11. Շինություններ, դեզեր, գույք, և այլն պահպանող պահապանը պարտավոր է հետևել՝

ա) Որպեսզի պահպանվեն հակահրդեհային միջոցառումների վերաբերմամբ սահմանված կանոնները.

բ) Որպեսզի կրակ չարվի այն շինությունների մոտերքը, որտեղ վտանգավոր է հրդեհի տեսակետից:

գ) Որպեսզի այրվող և շուտ բռնկվող նյութերի հետ վարվելու դեպքում խիստ պահպանվեն նախազգուշացման միջոցները:

12. Պահապանը, նկատելով առաջացող հրդեհը, պարտավոր է անմիջապես իրեն ունեցած միջոցներով (ազդանշան, տագնապ և այլն), կանչել բնակիչներին՝ հրդեհը հանգցնելու համար:

Միաժամանակ մինչև օգնության հասնելը պահապանը նախապատրաստում և ձեռք է առնում բոլոր հնարավոր հակահրդեհային միջոցները՝ հրդեհը հանգցնելու համար:

Պահապանը ցույց է տալիս այրվող շենքերից դուրս հանվող գույքը դարսելու տեղը և պահպանում է այդ գույքը:

13. Այգիների, հացահատիկների պահեստների և այլն պահպանության դեպքում պահապանը պետք է հատկապես հսկի պահպանվող շրջանի այնպիսի տեղերի վրա (ճանապարհների և այլն), որտեղից հնարավոր է աննկատելի կերպով կատարել գողություն, վնաս հասցնել, հրդեհ առաջացնել և այն, ինչպես նաև ուշադրություն դարձնի կողմնակի անց ու դարձ անողների վրա:

14. Դաշտերում մորեխ կամ ուրիշ վնասատուներ երևալու դեպքում, պահապանը անմիջապես զեկուցում է կոլտնտեսության վարչության անդամին:

15. Բերքը հավաքելու ժամանակ, այգիներում, բանջարանոցներում, պարտեզներում և այլն պահապանը հետևում է, որպեսզի աշխատողները զգուշությամբ վերաբերվեն բոլոր տնկիներին, չկոտրատեն ճղերը, կեղևը չմաշկեն, չփչացնեն տնկիների արմատները և այլն:

16. Հանցագործության հայտնաբերման դեպքում պահապանը բռնում է հանցագործին և տագնապ առա-

ջացնում նրան ձերբակալելու համար, իսկ զենքը գործադրում է միայն ծայրահեղ դեպքում։

17. Պահապանը պահակակետում իրավունք ունի զենք գործադրել հետևյալ դեպքերում.

ա) Երբ նրա վրա զինված հարձակում են գործում, կամ թեկուզ հարձակումը զինված չէ, բայց ակնհայտնի կերպով նրա կյանքին, առողջությանը և ազատությանը կամ զենքը խլելու վտանգ է սպառնում.

բ) Պահպանվող գույքին պաշտպանության համար, յերբ ակնհայտնի կերպով մեծ վնաս հասցնելու փորձ է կատարվում ամբողջ տնտեսությանը կամ նրա մի մասի վերաբերմամբ (հրդեհում բնակելի և այլ շինությունների, հացահատիկների պահեստների, դեզերի, չհավաքած հացի բերքի, ինչպես նաև կենդանի ու մեռյալ ինվենտարի հափշտակում)։

Սակայն զենքի գործադրումը վերոհիշյալ դեպքերում թույլատրվում է այն ժամանակ, յերբ ձեռք առած այլ միջոցներն օրինակ՝ օգնության կանչել, հարձակվողին զգուշացնելը սպառված են և այլևս ուրիշ վոչ մի միջոցով հնարավոր չէ հանցագործությունը կանխել։

Եթե հանցագործը վերոհիշյալ դեպքերում կվիրավորվի կամ կսպանվի, պահապանը պարտավոր է այդ մասին անմիջապես հայտնել կոլտնտեսության վարչությանը, հնարավորության սահմաններում չթողնելով պոստը։

Նկատի առնելով, վոր այս հրահանգը չի կարող սպառել բոլոր միջոցառումները, վորոնք անհրաժեշտ են կոլտնտեսության և համայնացված գույքի պահպանության ասպարեզում, անհրաժեշտ է այդպիսին խորացնել, ելնելով տեղական առանձնահատուկ պայմաններից և այս հրահանգի սկզբունքներից։

Վարչական հսկողության բաժնի պետ՝
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Տեսուչ՝ Թ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Դ. ԴՌՆԱՊԱՆՆԵՐ

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՍԽՀ Միլիցիայի Գլխ.
Վարչության պետ՝ ԴՈՒԼԳԱՐՅԱՆ
3 հոկտեմբերի 1932 թ.
ք. Երևան

ՀՐԱՀԱՆԳ № 241|4

Դռնապանների համար

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Դռնապանների կազմը մտցվում է քաղաքներում, բանվորական ավաններում, նորաշեններում համապատասխան գործկոմների, խորհուրդների պարտադիր վորոշումներով ազգայնացրած, քաղաքայնացրած ու մասնավոր տնատիրություններին սպասարկելու նաև հասարակական կարգն ու անվտանգությունը պահպանելու համար։

Պարտադիր վորոշումով սահմանվում են.

ա) Տնատիրությունների իրավունքներն ու պարտականությունները դռնապաններ վարձելու և պահելու մասին.

բ) Դռնապանների իրավունքներն ու պարտականությունները ներկա հրահանգի համապատասխան.

գ) Տնտեսությունների կատեգորիաները, վորոնք իրենց սահմանների մեծ տարածության, տեղադրության և բյուջեյի կարողության հետևանքով ունենալու յեն մի քանի դռնապաններ.

դ) Տնատիրությունների կատեգորիաները, վորոնք իրենց սահմանների նվազ տարածության կամ բյուջեյի սակավ կարողության հետևանքով ունենալու յեն մի քանի միացրած տնտեսությունների համար մեկ դռնապան.

2. Դռնապանները պահվում են շենքի տեր կամ մասնավոր անձերի հաշվով։

Այն դեպքերում, երբ մեկ դռնապան է պահվում մի քանի տնտեսությունների կողմից միասին, որոնք իրենց միջոցների համաչափ մասնակցությամբ են հայթայթում դռնապանի աշխատավարձը, այդ միջոցների հավաքելը, դրամները ժամանակին մուծելու և պայմանագրի համաձայն դռնապանին պատկանյալ ամբողջ աշխատավարձը վճարելու հսկողությունը դրվում է այդ տնատիրությունների մեկի վրա:

Պարտադիր որոշումն այդպիսի դեպքերում սահմանում է տնատիրությունների պատասխանատվությունը ժամանակին մուծելու համար իրենցից հասանելիք գումարները:

3. Դռնապան կարող են լինել երկսեռ քաղաքացիները 18 տարեկանից ոչ պակաս հասակով և ֆիզիկապես միանգամայն պիտանի այդ աշխատանքի համար, որոնք զրկված չեն ընտրական իրավունքներից:

4. Դռնապանների վարձելը տեղի յէ ունենում ԲԳ Միլիցիայի տեղական վարչությունների (բաժամունքների) համապատասխան պետերի համաձայնությամբ, որոնք իրավունք ունեն չհաստատելու անհարմար ճանաչված թեկնածուներին:

Եթե տնային վարչությունը համաձայն չէ դռնապանի պաշտոնի համար ներկայացված թեկնածույի բացարկի հետ, նա իրավունք ունի բողոքարկելու Միլիցիայի Վարչության պետի որոշման դեմ վերադաս պետին:

5. Դռնապանի աշխատանքի բոլոր տեսակների վարձողները տրամադրում են դռնապաններին, նրանց ամբողջ ծառայության ընթացքում սպասարկվող տնատիրությունների վայրում, ձրի բնակարան կոմունալ ծառայություններով հանդերձ:

7. Դռնապանին իր պարտականությունները կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրերը (թիակ, ավել, քերիչ, քլունկ և այլն) հատկացնում է տնային վարչությունը:

8. Դռնապանը յենթարկվում է ընդհանուր կարգով

տնային վարչության պատասխանատու անձին և ԲԳ Միլիցիայի Վարչության (բաժանմունքի) պետին, շրջանային տեսչին ու պոստապահ միլիցիոներներին, որի վայրում գտնվում է տնատիրությունը:

9. Դռնապանը ուսումնասիրում է տեղական խորհրդի կամ գործկոմի բոլոր գոյություն ունեցող պարտադիր որոշումները և Միլիցիայի կարգադրությունները, բարեկարգության ու սանիտարիայի, նաև հասարակական կարգի ու անվտանգության պահպանման հարցերի մասին, որոնք վերաբերում են տնային վարչություններին:

2. ԴՌՆԱՊԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. Տնատիրությունների սանիտարա-տնտեսական սպասարկման մասում

10. Դռնապանը պարտավոր է կատարել իր սպասարկված տնատիրության վայրում պարտադիր որոշումով և Միլիցիայի կարգադրությամբ սահմանված ժամերին նաև ըստ կարիքի ամբողջ օրվա ընթացքում հետևյալ աշխատանքները.

ա) Մաքրել փողոցը, հրապարակը, մայթը, բակը (աղբից, ցեխից, ձյունից), ամառը ջրել նրանց, իսկ ձմեռը չաղ տալ ավազով:

բ) Մաքրել և լվանալ ուրնաները:

գ) Պարբերաբար մաքրել հրդեհային ջրհորները ձյունից և սառույցից, որպեսզի նրանք հեշտությամբ բացվեն ամեն ժամանակ:

դ) Ժամանակին կրել որոշյալ տեղ կամ ձյունահալոցարան բոլոր հավաքած ձյունակույտերը:

11. Հսկել, որպեսզի քաղաքացիները չաղտոտեն մայթերն ու փողոցները, սալարկները թղթերի պատառիկներով, ծխած գլանակներով, լուցկիներով և այլն, և օգտվեն այդ նպատակին ծառայող փողոցային ուրնաներով:

12. Հսկել, որպեսզի տնատիրության մեջ բնակվողները թափեն աղբը, աղտաջրերը, կեղտերը այդ

նպատակին հատկացված տեղերում, նաև հսկել, վորպեսզի ժամանակին մաքրվեն բակերի աղբարկղների, աղտաջրերի հորերը և հասարակական զուգարանները:

13· Տանել բակի ներսը, կամ կանչել տրանսպորտ հատկացված տեղը տանելու համար փողոցում ընկած կենդանիների դիակները, նախապես նրանց ծածկելով խսիրով (փալասով, ծղոտով և այլն):

14· Շինել իր կամ տնատիրության միջոցով փողոցում կամ մայթի վրա, անցորդ քաղաքացիներին դժբախտ պատահարներից կանխելու նպատակով, ուղեփակներ տանիքներից ձյուն թափելիս կամ շենքերի ու տանիքների վրա աշխատանքներ կատարելիս:

15· Հսկել փողոցների, մայթերի, շենքերի ֆասադների, ուրնաների և այլն կարգավոր դրությանը, չթույլատրելով վորևե նպատակով փորելու փողոցներն ու մայթերն առանց ԲԳ Միլիցիայի Վարչության (բաժամունքի) թույլտվության:

16· Հսկել իր սպասարկած տնատիրության վայրում կանաչ տունկերի անվնասությանն ու ամբողջությանն, կանոնավորապես նրանց ջրելով:

17· Մութն ընկնելիս վառել և լուսաբացին հանգցնել տնային լապտերներն, ընդհանուր oգտագործման տեղերում՝ սանդուխտների վրա, դարբասներում, գըլխավոր մուտքերում և հասարակական զուգարաններում, հսկելով լապտերների մաքրությանը, անվնասությանը և կանոնավոր լուսավորությանը:

18· Չթույլատրել տնեցիներին սպիտակեղեն կախ տալ շենքերի արտաքին ֆասադներին, մասնավորապես պատշգամբներում, պատուհաններում, ցանկապատերին: Սպիտակեղեն կախել թույլատրվում է միայն բակերում, հատուկ սյուներին ամրացրած պարաններից:

19· Չթույլատրել բնակելի շենքերում, սանդուխտների, մայթերի վրա փայտ ջարդել և նման գործողություններ, վորոնցից վնասվում են շենքերը:

20· Չթույլատրել հայտարարությունների, աֆիշաների, պլակատների փակցում առանց պատշաճ

թույլտվության կամ այդ նպատակին չհատկացված տեղերում:

Ձերբակալել առանց թույլտվության փակցնողներին և ներկայացնել ԲԳ Միլիցիայի Վարչությունը (բաժամունքը):

բ· Հասարակական կարգի ու անվտանգության պահպանման մասում

21· Կատարել միլիցիայի բոլոր կարգադրությունները, այն է՝ ներկայանալ իր ժամանակին միլիցիայի վարչությանը (բաժանմունքին), յերբ նրան կանչում են պոստապահ միլիցիոներներին և հրահանգչական խորհրդակցություններին, մասնակցել միլիցիայի հետ միասին շուրջկալներին (обход) իր սպասարկած վայրում, փոխարինել պոստապահ միլիցիոներներին, յերբ նրան անհրաժեշտ է հեռանալ պոստից, ուղեկցել ձերբակալվածներին դեպի միլիցիայի վարչությունը (բաժամունքը), բացառությամբ այն դեպքերի, յերբ ուղեկցելու համար· անհրաժեշտ է զինված ուղեկցախումբ:

22· Որապահություն անել տնատիրության պատասխանատու անձի կողմից սահմանված, իսկ միացյալ մի քանի տնատիրությունների վերաբերմամբ միլիցիայի վարչության (բաժամունքի) պետի սահմանած հերթականության կարգով նշանակված ժամերին, համաձայն որպապահացուցակի, վորը հաստատում է միլիցիայի վարչության (բաժանմունքի) պետը:

Որապահ դռնապանն իրեն հանձնարարված պարտականությունները կատարելիս՝ պետք է գտնվի յուր սպասարկած տնատիրության վայրում և կարող է հեռանալ միայն պոստապահ միլիցիոների հանձնարարությամբ կամ ձերբակալվածներին դեպի միլիցիայի վարչությունը (բաժամունքը) ուղղեկցելիս:

23· Պահպանել հասարակական կարգը, անդորրությունն ու հանգստությունը յուր սպասարկած տնատիրության վայրում, դադարեցնելով նրանց խանգա-

րումն յուր սեփական ձեռներեցությամբ պոստապահ միլիցիոների կամ միլիցիայի վարչության (բաժամունքի) միջոցով։

24. Չթույլատրել տնատիրությունների սահմաններում մուրացիկների, գուշակների և նման անհատների մուտքը, նաև չթույլատրել ապրելու կամ գիշերելու դարպասներում, գլխավոր մուտքերում, չարդախներում (տանիքի տակը) և շենքերի աննբակ այլ մասերում անապաստան անձերին, շրջմոլիկներին, մուրացկաններին և այլն։

25. Հսկել այլ վայրերից տնատիրությունն յեկողների ու հեռացողների գրանցմանը համաձայն գործող պարտադիր վորոշումների, նաև հսկել այն անձերի բնակմանը տնատիրության մեջ, վորոնք խուսափում են զինակոչից (ձիական, սայլային և ավտոտրանսպորտային), հաղորդելով այդ մասին ի գիտություն տնատիրության և միլիցիայի վարչության (բաժամունքի)։

26. Հսկել քրեական հանցագործությունների տեսակետից բոլոր կասկածելի անձերին, բնակարաններին և այլ տեղերին, և հաղորդել նկատած բոլոր փաստերի մասին պոստապահ միլիցիոներին կամ միլիցիայի վարչությանը (բաժամունքին)։ Իսկ հանցագործության անմիջական նախապատրաստման կամ կատարման մեջ բռնվածներին ձերբակալել ու տանել միլիցիայի վարչությունը (բաժամունքը) կամ պոստապահ միլիցիոների մոտ։

Հանցագործությունն հայտաբերելիս, մինչեվ միլիցիայի ներկայացուցչի գալը, պահպանել հանցագործության հետքերը նույն հայտաբերված վիճակում, իսկ յեթե ինքն անկարող է այդ անել, հանձնարարում է մի այլ դռնապահին կամ իրեն լավ ծանոթ մի անձին։

27. Չթույլատրել, վոր տներում գոյություն ունենան գաղտնի անառականոցներ, վոգելից խմիչքների գաղտնի վաճառք, բախտախաղեր և այդպիսի հայտաբերած կամ կասկածելի փաստերի մասին անհապաղ հաղորդել միլիցիայի վարչությանը (բաժանմունքին)։

28. Ազդարարել տնատիրության մեջ բնակվողներին տարերային աղետներից սպառնացող վտանգի մասին և մասնակցել այդ աղետների դեմ ձեռնարկվող միջոցառումներին։

Հրդեհի, պայթումի, թունավորող նյութերի յերևալու դեպքերում անհապաղ այդ մասին հայտնել մոտակա հրշեջ կայանին, միլիցիոներին և տնատիրության պատասխանատու անձին, իսկ ինքը պետք է միջոցներ ձեռնարկի հրդեհը շիջելու, կրակի մեջ յեղածներին օգնություն հասցնելու և գույքն ազատելու։

29. Հսկել, վոր խածող ու չար շները փողոց կամ բակ դուրս չթողնվեն առանց կապի կամ դնչակալի, իսկ թափառաշրջիկ շների մասին տեղեկացնել անասնաբուժական կայանին, նրանց բռնելու համար։ Կատաղի շներ կամ այլ կենդանիներ յերևալիս, միջոցներ ձեռնարկել նրանց վոչնչացնելու համար։

30. Կանչել շտապ բժշկական օգնություն, յերբ իր սպասարկած տնատիրության վայրում տեղի է ունենում վորևե դժբախտ պատահար կամ անհրաժեշտ է զգացվում այդպիսի օգնություն։ Մոտակա բուժհիմնարկը տանել այն հոգեկան հիվանդներին, վորոնք իրենց վարքով սպառնանք են ներկայացնում թե իրենց և թե շրջապատողների համար։

31. Փակել դարբասները պարտադիր վորոշումներով սահմանված ժամերին և բանալ միայն անհրաժեշտ դեպքերում տնատիրության մեջ բնակվողների յելումուտքի համար։

32. Տանել մոտակա զգաստարանը(Вытрезвитель), իսկ այդպիսին չլինելու դեպքում, միլիցիայի վարչությունը (բաժանմունք) հարբածներին վորոնք ի հայտեն բերվում տնատիրության սահմաններում և գտնվում են անօգնական վիճակում, իսկ իր սպասարկած տնատիրության մեջ բնակվող հարբածներին, վորոնք դուրսն իրենց վարքով խանգարում են կարգը, տանել բնակարանը։

33. Հսկել, վոր բանուկ շարժման փողոցներում,

նրբափողոցներում, յերեխաները չխաղան մայթերի ու սալարկների վրա, իսկ մոլորված յերեխաներին ու ընկեցիկներին տանել միլիցիայի վարչություն (բաժանմունք):

34. Չթույլատրել վորևէ առևտուր փողոցներում և մայթերի վրա, առանց պատշաճ թույլտվության, նաև չթույլատրել սայլային և ավտոմոբիլային տրանսպորտին կանգ առնելու տնատիրությունների մոտ այն փողոցներում, ուր այդ արգելված է:

3. Պատասխանատվություն և խրախուսումներ

35. Դռնապանն յուր պարտականությունների ճիշտ ու կանոնավոր կատարման համար պատասխանատու յէ տնատիրության ու միլիցիայի վարչության (բաժամունքի) առաջ:

36. Տնային վարչության կարգապահական իրավունքները վորոշվում են ներքին կարգավորման կանոններով, վորոնք համաձայնեցվում են կոմունալ տնտեսության աշխատավորների պրոֆմիության հետ:

Միլիցիայի վարչության (բաժամունքի) պետի կարգապահական իրավունքները դռնապանների նկատմամբ սահմանվում են տեղական գործկոմների վորոշումներով և նախատեսնում են տուգանում կամ հարկադիր աշխատանք 5 օրից վոչ ավելի ժամանակով:

37. Յուր ճշտապահ ու օրինակելի աշխատանքի, ցուցաբերած ակտիվության, հնարամտության ու տնօրինելու ընդունակության համար տնատիրությունների սանիտարա-տնտեսական սպասարկման և սպասարկած տնատիրության վայրի անդորրության ու անվտանգության պահպանման ասպարեզում, նաև միլիցիայի առանձին հանձնարարությունների կատարման ասպարեզում, դռնապանին միլիցիայի վարչությունն (բաժամունքը) կարող է շնորհակալություն հայտնել կամ դրամական վարձատրություն տալ. իսկ առանձնահատուկ ծառայությունները կամ քաջագործությունները հանցագործության դեմ պայ-

քարելում նշանակում են միլիցիայի հրամանների մեջ, պատշաճ դեպքերում ներկայացնելով դռնապանին համապատասխան պարգևատրության:

Վարչական հսկողության բաժնի պետ՝
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Տեսուչ Թ. ՍՏԵՓԱՆՅԱՆ.

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

2 փետրվարի 1933 թ.

Յերևանում և Լենինականում գիշերային պահպանություն սահմանելու մասին:

1. Հասարակական կարգի և անդորրության պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով Յերևանում և Լենինականում քաղաքային խորհուրդների վորոշմամբ կազմակերպել գիշերային պահպանության խմբեր:

2. Գիշերային պահպանության խմբերը գտնվում են Բանվորա-գյուղացիական Միլիցիայի Վարչության անմիջական տնօրինության տակ:

3. Գիշերային պահպանության անձնակազմը նյութական-կենցաղային և իրավական տեսակետից, հավասարեցվում է Բանվորա-գյուղացիական Միլիցիայի անձնական կազմի համապատասխան պաշտոնների աստիճանին:

4. Գիշերային պահպանության անձնակազմի վրա տարածվում է Բանվորա-գյուղացիական Միլիցիայի վերաբերյալ բոլոր գործող կանոնադրությունները:

5. Գիշերային պահպանության անձնական կազմի ծախքերը հոգացվում են պետականացված, քաղաքայնացված և մասնավոր շենքերի տնատիրությունների կողմից և չեն կարող հիմք ծառայել բնակարանային ու կոմունալ սպասարկումների վարձագները բարձրացնելու համար:

6. Գիշերային պահպանության խմբեր պահելու վարձադնի չափերն ու գանձման կարգը սահմանվում է Յերևանի և Լենինականի քաղաքային խորհուրդների պարտադիր վորոշումներով, այդ կարգով գանձված գումարները հանձնվում են քաղաքային միլիցիայի վարչությունների տնորինությանը:

Ծանոթություն.— Քաղաքային խորհուրդներին վերապահվում է իրավունք գիշերային պահպանության ծախքերից ազատել առանձին տնտեսությունների շենքերը, վորոնք զբաղեցված են զինվորական մասերով և կուլտ-լուսավորական հիմնարկությունների կողմից:

7. Հանձնարարել Յերևանի և Լենինականի քաղխորհուրդներին գիշերային պաշտպանության կարգի, գիշերապահների իրավունքների և պարտականությունների մասին հրատարակել համապատասխան հրահանգ:

Ժողկոմխորհի նախագահի տեղակալ՝

Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ.

Ժողկոմխորհի գործերի կառավարչի տեղակալ՝

Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ.

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՍԽՀ Միլիցիայի Գլխ.
Վարչության պետ՝ ԴՈՒԼԳԱՐՅԱՆ
22 փետրվարի 1933 թ.
ք. Յերևան

ՀՐԱՀԱՆԳ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Քաղաքի գիշերային պահպանության խմբի ոպերատիվ աշխատակիցները հասարակական ապահովության պաշտպանությունն իրագործում են հետևյալ միջոցներով.

ա) Սահմանված մարշրուտներով դասակապետի հանձնարարության հիման վրա կատարում են շրջակայություններ.

բ) Սոցիալապես վտանգավոր, հանցագործ և պոռտաբույծ տարրերին չեզոքացնելու նպատակով կատարում են կալանքներ.

գ) Դասակապետի կարգադրությամբ մասնակցում են բռնագրավումներին, ձերբակալություններին, խուզարկություններին, ինչպես նաև դարաններին.

դ) Սեփական նախաձեռնությամբ ձերբակալում են սրիկաներին, հասարակական անդորրության ու կարգապահության սպառնացող ու հանցագործության մեջ կասկածվող անձերին, ինչպես նաև քրեական և սոցիալապես վտանգավոր տարրերին:

յե) Ներկայացնում են իրենց իրերով կալանավորներին համապատասխան քաղաքամասային միլիցիայի վարչություններին:

Ծանոթություն.— Առանց հատուկ հանձնարարության ձերբակալություններ կատարելիս ոպերատիվ աշխատակիցները սահմանված ձևով կազմում են արձանագրություն: Գիշերային պահպանության ոպերատիվ աշխատակիցները վոչ մի հետաքննական ֆունկցիաներ չեն կատարում:

2. Գիշերային պահպանության ոպերատիվ աշխատակիցները պետք է ծանոթ լինեն—

ա) Քաղաքի ընդհանուր պլանին.

բ) Փողոցների, նրբանցքների, փակուղիների, հրապարակների, ինչպես նաև այդ վայրերում գտնվող բժշկական կետերի դասավորության.

գ) Բնակելի և վոչ բնակելի տների, բակերի, շուկաների, պահեստների, հիմնարկ-ձեռնարկների, բանկերի, կոոպերատիվ շենքերի և այլնի դասավորության:

3. Մասնավոր տները գիշերային պահպանության ոպերատիվ աշխատակիցները իրավասու յեն մուտք գործել հետևյալ դեպքերում.

ա) Հանցագործին թարմ հետքերով հետապնդելուց յեթե նա թաքնվել է վորևէ մեկի բնակարանում.

բ) Վորևէ մեկի բնակարանում հանցագործության դեպք տեղի ունենալուց.

գ. Ձերբակալության և խուզարկության կատարելու մասին համապատասխան հանձնարարություն ստանալուց:

4. Գիշերային պահպանության ոպերատիվ աշխատակիցները կարող են գործադրել զենք հետևյալ դեպքերում.

ա) Ինքնապաշտպանության նպատակով իրենց վրա զինված հարձակում կատարելուց, կալանավորին վախեցնելու կամ զենքը, դրամները, փաստաթղթերը խլելու դեպքերում, յերբ պաշտպանության այլ միջոցները կհամարվեն վոչ լրիվ:

բ) Որինական պահանջներին զինված դիմադրություն ցույց տալու դեպքերում.

գ) Ուրիշ անձանց պաշտպանելու նպատակով, նրանց կյանքին, առողջությանը և ազատությանը սպառնալուց, զինված և վոչ զինված հարձակում կատարելու կամ գույքի հափշտակման դեպքերում, յերբ պաշտպանության այլ միջոցները կհամարվեն վոչ բավարար:

դ) Հանցագործին կալանավորելու նպատակով, յերբ այլ միջոցներով նրան ձերբակալելը հնարավոր չէ:

5. Գիշերային պահպանության ոպերատիվ աշխատակիցները, նախքան զենքի գործադրելը, անում են նախազգուշացում և ձեռք առնում միջոցներ, վոր ուրիշները չտուժեն:

6. Զենքի գործածության բոլոր դեպքերի մասին ոպերատիվ աշխատակիցները պարտավոր են տեղեկացնել իրենց մասին պետին, իսկ հանցագործին վիրավորելու կամ սպանելու դեպքում նաև կազմել արձանագրություն, նշելով զենքի գործադրման պատճառները և վիրավորվածի կամ սպանվածի ինքնությունը:

7. Քաղաքացիներին կալանավորելը թույլատրվում է հետևյալ դեպքերում.

ա) Յերբ հանցագործը հայտնաբերված է հանցագործությունը նախապատրաստելուց կամ այդպիսին կատարելուց հետո.

բ) Յերբ տուժողը կամ ականատեսները մատնանշում են տվյալ անձնավորության վրա, վորպես հանցագործ.

գ) Յերբ կասկածավորի վրա կամ նրա բնակարանի շուրջը գտնվել են հանցագործության հետքեր.

դ) Յերբ կասկածավորը փորձել է փախուստի դիմել և ձերբակալված է փախչելիս.

յե) Յերբ կասկածավորը չունի մշտական բնակության կամ զբաղմունքի վայր.

զ) Յերբ չի պարզված կասկածավորի ինքնությունը:

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

Ա.

Աղետներ տարերային՝ 37,—41, 57, 85, 101, 138, 153.
Անցագիր՝ 25, 28, 31, 64, 65.
Աշխատող միլիցիայի՝ 42—43.
Աշխատավարձի միլիցիայի՝ 46.
Աշխատանքի նշանակվել ու արձակվել՝ 43, 44, 45, 47.
Աշխատանք հարկադիր՝ 27.
Աշխատանք հասարակական՝ 59—60, 88, 98.
Աշխատանք քաղաքական՝ 88, 97—98.
Աշխարհազորականներ՝ 26, 28.
Ապահովություն պետական՝ 47, 52, 53—54, 61.
Ապահովություն սոցիալական (թոշակ)՝ 48.
Առաջին օգնություն՝ 37, 38, 41, 101, 153.
Աջակցություն հիմնարկներին և նրանց ներկայացուցիչներին՝ 38, 41, 57, 85, 95, 102, 129.
Արտոնություններ միլիցիայի աշխատավորներին ու նրանց ընտանիքներին՝ 47—49.
Աքսոր՝ 27.

Բ.

Բացառիկ դրություն՝ 85, 95.
Բժշկա-սանիտարական սպասարկում՝ 37, 58, 61, 87, 89, 96, 101, 124, 138, 149—150.
Բյուրո բողոքների՝ 74—76.
» *հասցեների*՝ 38, 86.
» *իրավաբանական*՝ 79—80.
Բնակչության հաշվառում՝ 38, 41.
Բրիգադներ օժանդակող՝ 33, 40, 57, 71, 72, 92, 94, 99, 104, 129—132, 133—135, 138—140, 140—143.

Գ.

Գույքի պահպանումն՝ 35, 38, 84, 94, 101, 114, 124, 138, 144·
Գույքի կոլտնտեսական (պահպանումն)՝ 142—146·
Գյուղական կատարածու՝ 40, 86, 94, 96, 99, 100, 121—123, 123—125, 128·

Դ.

Դռնապաններ՝ 40, 147—149, 149—154·

Զ.

ԶԱԳՍ (քաղաքացիական դրության ակտերի գրանցումն)՝ 25, 28, 31·
Զգեստավորումն միլիցիայի՝ 35, 36·
Զենք (կրել ու գործածել)՝ 35, 36, 41, 131, 139, 143, 146, 158·
Զինվորական տրիբունալ՝ 45—46, 52·
Զուգավոր աշխատանք՝ 46·

Ը.

Ընկերություններ՝ 25, 28, 31, 33, 58, 86, 96, 102, 128, 130·

Ի.

Իրեր (կորած, վերոնելի, գտնված)՝ 39, 86—87, 88, 97·
Իրային բավարարումն միլիցիայի՝ 35·

Խ.

Խորհրդային շինարարություն՝ 25, 28·
Խուզարկություն՝ 41·

Կ.

Կադրեր՝ 60· 64·
Կամպանիա՝ 71, 85, 95, 101·
Կալանավայրեր (ուղղիչ տուն)՝ 27, 29·
Կենդանիներ (անասուններ) մոլորված՝ 39, 87·
Կոմունալ տնտեսություն՝ 24, 25, 28, 30·
Կրոնական միություններ (համայնքներ, պաշտամունքներ)՝ 38, 58, 86, 96, 102, 126·

Հ.

Հակահրդեհային՝ 25, 28, 30, 113, 124, 144, 145, 149, 153·
Հանդերձանք՝ 35, 36·
Հանցագործությունների դեմ պայքար՝ 27, 33, 39, 41, 59, 87—88, 97, 102—103, 105, 114, 124, 131, 138, 145, 152, 157—159·
Հանցագործություն պետական՝ 52·
» պաշտոնեական՝ 52·
» զինվորական՝ 50, 52·
» միլիցիական՝ 45·
Հասարակական անդորրություն և հեղափոխական կարգ՝ 37, 57—58, 84, 85, 94—95, 99—100, 100—102, 108, 113, 124, 128, 129, 130, 138, 151—154, 155·
Հավաստագիր՝ 39, 74, 86, 97, 109, 127·
Հետախուզություն՝ 26, 29, 31, 55·
Հղի կանանց ծառայություն՝ 43·
Հրաման ապորինի՝ 44·

Ձ.

Ձայնագրումներ՝ 25, 28, 31·
Ձերբակալություն (կալանք)՝ 41, 105—106, 109, 124, 129, 131, 138, 151, 152, 157, 158·
Ձիեր՝ 53·

Մ.

Մամուլ և միլթղթակիցներ՝ 60, 70, 88, 98·
Միլիցիա ընդհանուր՝ 33, 37·
Միլիցիայի պարտականությունները՝ 37—38·
» իրավունքները՝ 40—41·
» ծառայությունը՝ 41—47·
» կազմակերպումն՝ 56—57·
Միլիցիա գերատեսչական՝ 33, 35, 36, 40, 56, 82, 92, 110—112·
Միլ. գերատեսչական կազմակերպումն՝ 112—113·
» » ծառայություն՝ 113 114·
» » փոխհարաբերությունները՝ 114—115·
» » դրամ-նյութական մատակարարումն՝ 115—117·
» » լուծարքը՝ 117—119·

Միլիցիայի ղեկավարություն՝ 62, 64—66։
Միլիցիայի խրախուսման միջոցներ՝ 43—44։
Միլիցիական զորամաս՝ 36։

Ն.

Նշաններ պաշտոն. տարբերության՝ 36, 44։
Նպաստներ՝ 47, 131։

Շ.

Շրջանային վարչություն միլիցիայի 34, 92—98։
Շրջանային տեսուչներ գյուղվայրերի՝ 98—100։
Շրջանային տեսչի պարտականությունները՝ 100—104։
Շրջանային տեսչի իրավունքները՝ 104։
» » ծառայությունը՝ 106—107։
Շքանշան՝ 45։

Պ.

Պահակություն կոլտնտեսական՝ 100։
Պահպանության խմբեր գիշերային՝ 40, 155—159։
Պաշտպանություն յերկրի՝ 39—40, 103—104։
Պարենային մատակարարում՝ 49։
Պարհակ (աշխատ. և տրանսպորտ.)՝ 26, 29, 85, 95, 126, 129։
Պարհակ ռազմական՝ 40։
Պարտադիր վորոշում՝ 38, 57, 85, 91, 96, 100, 101, 104, 109, 124, 126, 130, 152, 153։
Պատիժ կարգապահական՝ 45։
Պատիժ (տույժ) վարչական՝ 38, 86, 96։

Ս.

Սոցիալ-վտանգավոր յերևույթներ՝ 84, 94, 157։

Տ.

Տարազ միլիցիական՝ 35, 44։

Փ.

Փողոցային շարժում՝ 37, 87, 138։

Ք.

Քաղաքական դաստիարակություն՝ 68, 88, 98։
Քաղաքային խորհուրդների իրավունքները վարչական ասպարեզում՝ 89—91։
Քաղբաժին միլգլխվարչության՝ 66, 67։
Քաղբաժնի ֆունկցիաները՝ 67—72։
» իրավունքներն ու պարտականությունները՝ 73։
» հարաբերությունները՝ 72։
» աշխատանքի յեղանակները՝ 76—78։
Քաղաքային վարչություն միլիցիայի՝ 81։
Քաղաքային վարչության միլիցիայի իրավունքներն ու պարտականությունները՝ 82—88։

Ֆ.

Ֆինանսա-նյութական ապահովումն միլիցիայի՝ 60—61։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Խմբագրության կողմից 3
ԲԳ Միլիցիայի անցած ուղիները 5
ԲԳ Միլիցիայի դերն ու նպատակները 19

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԼԻՑԻԱ

ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Կենտրոնական մարմիններ

Վորոշում ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի՝ «Դաշնակից և ինքնավար հանրապետությունների Ներքին Գործերի Ժողովրդական կոմիսարիատների լիկվիդացիայի մասին» 23
Վորոշում ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի՝ «Վերացված Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի ֆունկցիաները բաշխելու մասին» 27
Հրաման № 31 ՀՍԽՀ Հանրապետական Միլիցիայի Վարչության 19 փետրվարի 1931 թ. 30
Կանոնադրություն ԲԳ Միլիցիայի 25 մայիսի 1931 թ. . . . 33
Վորոշում ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի՝ «ԲԳ Միլիցիայի վերակազմակերպման հետևանքով ՀՍԽՀ օրենսդրությունը փոխելու մասին» 49
Շրջաբերական № 011 ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության «ԲԳ Միլիցիայի կանոնադրության 40-րդ հոդվածի փոփոխման մասին» 51
Շրջաբերական № 011 ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության՝ «ԲԳ Միլիցիայի կանոնադրության 40-րդ հոդվածի փոփոխման առնչությամբ Քրեական Օրենսգրքի համապատասխան հոդվածների մասին» . 52

ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումը՝ ԲԳ Միլիցիայի շարքային կազմի պետական ապահովության մասին . . . 53
Քաղվածք ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության 1932 թ. հուլիսի 9-ի № 121 հրամանից . . . 54
Կանոնադրություն ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր վարչության 55
ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշումը՝ Միացյալ Պետքաղվարչության առընթեր ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչություն կազմակերպելու մասին . . . 63
Կանոնադրություն ՄՊՔՎ առընթեր ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության 64
Կանոնադրություն ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության քաղբաժնի մասին 66
Կանոնադրություն ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի մարմիններին առընթեր բողոքների բյուրոների 74
Կանոնադրություն ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր վարչության կազմտեսչության առընթեր իրավաբանական բյուրոյի 79

Բ. Քաղաքային մարմիններ

Կանոնադրություն ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Քաղաքային Վարչության 81
Քաղվածք «Քաղաքային խորհուրդների կանոնադրությունից» 89

Գ. Շրջանային մարմիններ

Կանոնադրություն ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի շրջանային վարչությունների 92
Կանոնադրություն գյուղական վայրերի ԲԳ Միլիցիայի շրջանային տեսուչների մասին 98
Քաղվածք «Շրջանային գործադիր կոմիտեների կանոնադրությունից» 108

II. ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱ

Հրահանգ Գերատեսչական Միլիցիա կազմակերպելու մասին 110

III. ՄԻԼԻՑԻԱՅԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ա. Գյուղական կատարածուներ

Շրջաբերական ՀՍԽՀ Միլիցիայի Գլխավոր Վարչության № 240/7 120
Որոշում ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի «Գյուղական կատարածուների մասին» 120
Քաղվածք «Գյուղական խորհուրդների կանոնադրությունից» 126

Բ. Միլիցիայի օժանդակ բրիգադներ

Որոշում ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1931 թ. հոկտեմբերի 17-ի «Միլիցիայի օրգանների օժանդակող ընկերությունների մասին» 129
Քաղվածք ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1932 թ. հուլիսի 15-ի արձանագրությունից «ԲԳ Միլիցիայի օժանդակող ընկերությունը» «Միլիցիայի օժանդակ բրիգադների» վերածելու մասին . . 133
Կանոնադրություն Միլիցիայի մարմիններին օժանդակող բրիգադների 138
Շրջաբերական ԲԳ Միլ. Գլխվարչության «Միլիցիայի մարմիններին օժանդակող բրիգադների մասին . . . 140

Գ. Կոլտնտեսությունների պահակություն

Հրահանգ կոլտնտեսության գույքի պահպանության կարգի մասին 142

Դ. Դռնապաններ

Հրահանգ դռնապանների մասին 147
Որոշում ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 2 փետրվարի 1933 թ.՝ «Յերևանում և Լենինականում գիշերային պահպանություն սահմանելու մասին» . 155
Հրահանգ պահպանության օպերատիվ աշխատակիցների համար 156

Այբբենական-առարկայական ցանկ 161

ԲԳ. ԿԵՆՏՐՈՆԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гл. Библиотека
ССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0213413

39. 379